



Հարգելի՝ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները։ Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները։

ՌՈՒԶԱՆ ՄԱՀՏԵՍՅԱՆ

# ԽՈՍՈՂ ԶԵՐՔԵՐ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱ-ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ, 1999

ԴՏՀ 78+891. 981-94 Մահմեյտ

ԳՄԴ 85. 31+84 Հ 7-4

Դ 990 մ

## ԳԵՐՈՂ ԵՎ ՏԻՐԱԿԱՆ... ԱՅՍՊԵՍ ՏԵԽԱՆՔ ԻՐԵՆ

Անցողիկ է ամենայն բան, հավերժության սահմանվածք՝ լոկ արվեստն է հզոր...

ԹԵՌԱՆԿ ԳԱՐԻՒ

Հազարամյակների իր հոլովույթով՝ հայոց մշակույթը նախանձելիորեն կենսունակ, հարուստ ու շարունակական է եղել արարշագործ ոգու կոթողային դրսևորույթների մշտակա իրողությամբ:

Ամենադժվարին, ամենաօրհասական ժամանակներում անգամ ծնվել են ազգի մինելիությունը հաստատող անանց արժեքներ, որոնցով մնվել, զորացել ու ամրացել է սերունդների հավատը մեր կենաց ծառի անմեկնելի դալարումի, մեր ներկայի ու ապագայի հանդեպ:

Հիրավի, մեծ մշակույթը, մեծ արվեստը, որ ազգերի պատմության դարակազմիկ անցքերի ու ալիքումների ծնունդն է ու նկարագիրը՝ ապագայի առջև իր յուրովի կոչվածությամբ երբեք նվազ գեր չի ունեցել, քան ներքին ու արտաքին հզորության նշանակ այլ իրողություններ:

Սրա հաստատումը չէ՝ արդյոք, որ ճակատագիրը որքան էլ անարդար ու դաժան և մեր ընթացքն էլ՝ վայրիվերումների ենթակա, դարերի մեջ մեզ միավորողն ու առաջնորդողը եղել է ոգին՝ ստեղծագործ, արարող, առավել ընդունկուն իմաստով՝ մշակութային ոգին:

Մահմեյտ, Ռ. Փ.

Դ 990մ Խոսող ձեռքեր: Գեղարվեստա-վավերագրական պատում/Ծուռան Մահմեյտան.— Եր.: Երևանի համալս. Հրատ., 1999.— 152 էջ:

Հոշակավոր նվագավար Օհան Դուրյանի ժարդարյին նկարագրի, ստեղծագործական կերպի ու մշակութային վաստակի գեղարվեստափառագրական մեկնությամբ հեղինակը վերստին հավաստում է ինկական արժեքների մնալուն ու համամարդկային կոչվածությունը:

Ինքնատիպ հնչողությամբ արված կենսապատումը թաթախուն է գեղեցիկ ու հայրենապաշտության բանաստեղծական շնչով:

Դ 4905000000  
704 (02) 99 90 ր.

ԳՄԴ 85. 31+84 Հ 7-4

ISBN 5-8084-0288-3

ՀՅՀ 1999 թվական (C) Մահմեյտ Ռ., 1999 թ.

Ու բազում խնկելիներ, անձից վերացած, հնշեղության համամարդկային ներդաշնակումով կերտեցին ազգային կերպի, նկարագրի, ինքնագիտակցության, ասել է՝ ազգային մշակույթի աներեր կառույցը: Կերտեցին հզոր արվեստ՝ ոգի և շունչ տալով քար ու մագաղաթին, անյութ ու նյութեղեն երազին:

Երախտիքի գիտակցումով, սերունդները հաճախ և արդարացիորեն նրանց ավանդն ընկալում ու որակում են իրեն դարերը լուսավորող և ժամանակների իմաստն ամբողջացնող բացառիկ հանճարների նվիրում, անհատների, որոնց երկրային երթի շափն ու կշռութը նույնանում է թողած ժառանգությանը, այն հարստությանը, որը հավերժությանն է սահմանված:

Եվ ճշմարիտ է այս, քանզի հողեղենի իմաստը վեհացնող, ոգեղենացած արժեքներն են հասցեագրվում դարերին և, նախախնամության կամոք, իրենց ծնված օրից հավիտենության համփորդ են արարումի, ստեղծումի կոչվածները: Նրանք, ովքեր, իրավամբ, մարդկության ու մոլորակի հոգու ճամփաներով գեղեցիկի ծաղկուն խաչն են տանում դեպի վերին ոլորտներ:

Ազգային մշակույթի սրդողած ովաստավորների անհատնում այդ շարում է, որ տեսանք պաշտելի, անշրջանակ ու գունեղ մի դիմանկար ևս.

## 02ԱՆ ԴՈՒՐՅԱՆ

Նվազախոարն ինձ համար մի հոկա երգեհն է, որով ես հնչեցնում եմ մարդկության հոգու և խղճի մեղեղացած համանվագը...

Միշապային ամենաբարձր գնահատությամբ՝ նրա անունը վաղուց ի վեր բաղդատվում է դարի խոշորագույն նվազագարների հետ:

Ինքնամաբրող արվեստի կախարդանքով թաթախուն էություն, անշրջանցելի մի անհատականություն, որն իր ստեղ-

ծագործական ինքնատիպ, դժվարին ուղու սկզբից հանդիսատեսի առջև հառնեց ու շարունակում է տիրական երթն՝ իրրե անկրկնելի, գերող արտիստ, արարումի հեթիաթային մի մոգ, ում ձախ ձեռքը ուզածող դասականի կամ ժամանակակցի երաժշտության ոգեշունչ շաղախողն է, իսկ աշը՝ գեղասահուն ձևավորողը:

Աշխարհի բազմաթիվ երկրներում ղեկավարած համերգների մասին հիացական կարծիքներն ու գնահատանքները հատորներ են կազմում Դուրյանի կենսագրության մեջ: Հարյուր տասից ավելի ամենաճանաչված նվազախմբեր վայելել են նրա անզուգական նվազավարությամբ իսկական երաժշտություն արարելու և հանդիսատեսին անանց արվեստի երշանկությունը պարգևելու հաճույքը:

Եվ ոչ մի հավելում ու շափազանցություն, երբ օտար ափերում շքեղ ու շիտակ արժեկորել են Օհան Դուրյանի գործն ու կերպը, խոստովանելով, որ իրրե գերող նվազավար նա հիշեցնում է Արթուր Նիկիշին, որ նա «Արևելյան Եվրոպայի Տոսկանինին է», իրավամբ, նրան համեմատելի են տեսել Լեռպողդ Ստոկովսկու, Լեռնարդ Բեռնանթյանի հետ, հավաստել, որ Հայդնի երաժշտության նրա մեկնությունները վեհաշուր են, ինչպես Հերբերտ ֆոն Կարայանինը: Իսկ Անտոն Բրուկների գործերի դուրյանական մատուցումները, ինչպես վկայում են ավստրիացի և գերմանացի երաժշտագետները, մնում են շգերազանցված:

Մաեստրոյի կյանքն ու գործունեությունը ուսումնասիրողները կարող են փաստել, որ արևելակալուպական, եվրոպական, ամերիկյան, հարավաֆրիկյան մեծահամբավ նվազախմբեր ղեկավարելու, լայպցիգի «Գնանդհառուց» հոչակավոր նվազախմբի հետ երկարատև աշխատելու, թե՛ ֆիլհարմոնիկ, թե՛ ուղերային հանրաճանաչ կոլեկտիվներ գլխավորելու տարիներին, արտերկրի մամուլը բառացիորեն հեղեղված էր նվազավար-երաժշտի ստեղծագործական կերպի ու գործի բացառիկ գնահատումներով: Ընդամենը մի քանի օրինակ. «...Դուրյանը մի անուն է, որ պետք է մնա երաժշտության պատմության մեջ: Նա զտարյուն, անեղծ տաղանդ է...»— Փարիզ, «...իր նմանը շունեցող նվազավար է Դուրյանը...»— Միլան,

«Առաջնակարգ երաժիշտ, աննման նվագավար»—Հոռմ, «Ճառագող անձնավորություն»—Մառլ, «Արտակարգ նվագավար, արտասովոր նվագավար, արքայական նվագավար»—Մոնտե Կարլո, «Իր ողջ էությամբ վերապրող նման մի նվագավարն, իրավամբ, կարող է հրաշքներ գործել երաժշտական աշխարհում»—Ֆրանկֆուրտ,...

...Այս սեղմ, բայց խոսուն մեջբերումը թող երկպի միակամ մի կարծիքով.

«Ծան Դուրյան՝ հանճարեղ նվագավար»—Ամստերդամ:

Իրեւ նվիրյալ ի սկզբան լինելով անարձաթ և բոլորովին անհաղորդ փառքի ու ճանաշման գայթակղությանը, Դուրյան-նվագավարը սրդողած եղավ կյանքի ամենագեղեցիկը արվեստում անմնացորդ վերհանելու իր ձգտմամբ:

Քերին վերապահված հաստատակամություն էր սա, թնաժին, բարձրարժեք մի հատկանիշ, որի վրա, իրեւ յուրովի հենքի, հառնում է հզոր արվեստագետի, անհատի, քաղաքացու միանգամայն ինքնատիք, հոգեբանորեն առլեցուն ու համահունչ հայեցումների ամրողությունը:

Նվագավարական բացառիկ վարպետությամբ նա աշխարհի շատ դահլիճներ է հմայել և ցարդ շարունակում է իր անգնահատելի գործը՝ ամեն անգամ բեմ ելնելով իրեւ փոքրամարմին... մի հսկա, որին ի վերուստ տրված է նվագախմբերին ու հանդիսատեսներին անանց արվեստի խորհրդով պարուելու, տիրելու և հոգեպես վեհացնելու շնորհ և առաքելություն:

Նրա բոլոր ելույթները եղել են մաքրամաքուր, ինչպես աղոթքն է կամ խոստովանությունը: Առանց պարտիտուր, անգիր սիմֆոնիկ համերգներ և օպերաներ է ղեկավարում, հիացմունք ու զարմանք հարուցելով ո՛չ միայն իր բնատուր արտիստականությամբ, կատարյալ արհեստավարժությամբ, այլ նաև նվագավարական շնորհյալ, նախանձելի հիշողությամբ:

Դուրյանն այն եղակիներից է, ովքեր նվագավարելիս կարողանում են միաժամանակ անդրանցիկ թափանցումներ անել հեղինակ-երաժիշտ-ունկնդիր հուզաշխարհային համալիրում՝ շանալով ներդաշնակ դարձնել այդ աներեւոյթ կառույցը: Եվ քանի որ վերին շնորհով սրտեր ու հոգիներ կա-

մըրջող է, այլևս ինչ տարակույս. եթե բեմում ծձան Դուրյանն է, ուրեմն տոն է համերգասրահում, իսկական երաժշտական վայելթի տոն:

Նրա երաժշտական, նվագավարական կերպը ենթակա չէ դյուրին վերլուծության: Այն խորքային ու տարածական շարժումակ ընդգրկում ունի և ինչպես հատուկ է մեծերի ինքնամեկնության վարքին, երբեմն պարուրվում է այսոց համար դժվարաթափանցության խորհրդով: Մրանով չէ, արդյոք, պայմանավորված մասսարովի արտիստական, բեմական առինքնողությունը, երաժիշտների և ունկնդիրների վրա ներգործելու մոգական, սովորական ընկալումից վեր՝ հոգեթագործելու մուն ու գեղեցիկի հավերժական զգացողությամբ տուգորելու ունակությունը:

Դուրյանի ստեղծագործական կյանքը, որ վաղուց հատել է իր կեսդարյա սահմանագիծը, դժվարին որոնումների ու վերընթացի հսկական ողիսական է:

Օտար ակիերում ուսանած և արդեն ճանաշում գտած, գիտակցումով ու սրտի կանչով նա եկավ Խորհրդային Հայաստան՝ ծառայելու հայ մշակույթին ու իր հարազատ ժողովրդին:

Հանդիսատեսի շերմ ընդունելությունը, գնահատությունն ու անկեղծ սերը նվաճեց առաջին իսկ հանդիպումից, ինչ վերածելով փոխադրության, շթուլացավ ու շխամրեց հետագա բոլոր տարիներին:

Հարազատ հողում մշտապես հաստատվելու անթաքուց ոգևորությամբ ու վճռով, նա սկսեց նվագավարական մի բեղմնավոր, ընդգրկուն ու նվիրական գործունեություն, որով հայրենական մշակույթը, երաժշտական կյանքը միայն ու միայն հպարտանալու առիթներ պիտի ունենար:

Ամուսնություն, ընտանիք, զավակ... նա արմատներ էր գցում հայրենիքում: Սակայն առկա էր մեծ ու անշրջելի մի հակասություն, որին համակերպվելու համար մարդ, թերևս, պետք է ուղղակի տիրող կարգերի ծնունդը լիներ:

Դուրյանի՝ ստեղծագործական ազատության և ինքնիշխանության պատկերացումը չէր իրում մեր իրականությունից և, բնականաբար, անհարի էր համակարգի պարտադրանքներին: Նրան անսովոր էր ուղղակի կախվածությունն ենթակայությունը պետական հշխանական համահարթեցու

նող, հաճախ՝ կեղծ արժեքներն ուոճացնող ապարատին, մի իրողություն, որ դժբախտաբար վիճակված էր խոշոր արվեստագետներին, մտավորականներին, ինքնատիպ ու ինքնուրույն մտածող անհատականություններին։ Այս իրականության հանդեպ ներքին խոր անհաջողությունը, ստեղծագործ, ազատական չության ընդգումը, միշագային հանդիսատեսի առջև անարգել հանդես գալու մղումը նրան նորից տարան այն եղերքները, որտեղից եկել էր, տարան վերստին ապացուցելու, որ իսկական արժեքները պետք է պահել ու փայփայել, որպեսզի կատարյալ լինի նրանց փայլատակումների ժողովրդական վայելքը։

Հարկավ, նա դեռ վերադառնալու էր և վերադառնավ... Սակայն մեկնումի ու տունդարձի միջև ժամանակի մի մեծ հատված էր ընկած։

Ծուրզ երկու տասնամյակ՝ եվրոպական, հարավաֆրիկյան, միջինարևելյան, արևելաեվրոպական բեմերում փայլեց Օհան Դուրյանի աննախաղեպ հաշողությունների աստղը։ Մափողույններից թնդացող դահլիճների և ամենարծախնդիր հանդիսականների ու երաժշտագետների հիացական զնահատությունների ուղեկցությամբ Դուրյանն անցնում էր կեռմաններով հարուստ արվեստագետի իր ճամփան։

Կյանքի ու արվեստի դժվարին այդ վերելքը նվագավարը հաղթահարեց իրեն հասուկ հաստատակամությամբ, ինքնուրույն և անմիջնորդ։

Դա մեծ և ուսանելի մի պատմություն է, որն ամփոփում է աշխարհի, մարդու, արվեստի հանդեպ Դուրյան-անհատի, Դուրյան-արվեստագետի անխաթար, անշահախնդիր նվիրվածությունը։

Երաժշտությամբ ի խորոց ապրելու գիտակցումը, ստեղծագործական թափանցումների, ներքին վերլուծումների մըշտակա կարողությունը, կյանքի գեղեցիկը արվեստում վերհանելու ձգտումը՝ նրահոգի գեղագետի ու փոթորկահուզ արտիստի միաձույլ կերպարով են ներկայացնում Օհան Դուրյանին։

Իմացագայական յուրատիպ կերտվածքով, արվեստապաշտության ու մարդամեծարման յուրաշաղախ իր կերպով, նա երից հավաստում է հայտնի այն ճշմարտությունը, որ

ամեն մի ընտրյալ արվեստագետ մի աշխարհ է՝ արարումի սեփական տիրույթների առկա և ներուժային ծավալումներով։ Եվ այդ աշխարհի կառուցիկության, ամբողջականության գաղտնիքը ազատագրված խղճի թոհջքների, հոգու բացվածության մեջ է։

Պատահական չէր կարող լինել ժողովրդի սերն առ Օհան Դուրյան։

Մշակութային այդավագալ նվիրում-ինքնաբացահայտումը և այդորինակ ներդրումը այլ բան չէ, քան ժողովրդյան նվաճում և, ազգային հպարտությունից զատ, այն վաստակի իրեղեն, շշաշիքելի ու գիտակցված փոխանցում է ապագային։

Երիտասարդական զարմանալի ավյուն-կենսախնդությամբ լեցուն մասնարոյին բոլորովին անհարիր է ծերունազարդության ճերմակը։ Կրակոտ ու պոռեկուն հոգին ստեղծագործական հզոր, անհատնում լիցքեր է տալիս նրան, այնպես որ նրա ամեն բեմելին հանդիսատեսը առիթ է ունենում վայելել արտահայտիչ, դասական կերպավորմամբ ընդգծուն, ձեւի ու ոճի բացարձակ դաշնությամբ առանձնացող դուրյանական մեկնումների հրավառությունները։

Բազում և ամենատարբեր նվագախմբերի ու կատարողների հանդեպ աշխատանքային ու մարդկային իր մոտեցումը եղել է նվագավարական գործուն ու դրական մեծապահանգությունը։ Դա իր անփոփոխ ոճն է, որին հարազատ է մնում ցայսօր։

Իր երաժշտաներին նա տրամադրում է հոգերանական վստահության, փոխհասկացության այնպիսի մի տարածք, որտեղ կարեռովողը արհեստավարժության առավելագույն գործոնն է։ Այս առումով, նվագավարն իր յուրակերպ տեսակետն ունի։ Նրա համար դիտարկելին ու ընդունելին ընկալումների և կատարողականության բարձրագույն շափանիշներն են, մնացյալը, թե՛ տեսականորեն և թե՛ գործնական, անհետաքրքիր է ու մերժելի, քանզի անհարիր, անիմաստ է համարում միշակ դրսերումներն արվեստում։

Հստ նրա որակման, արվեստում միշին վիճակը բացառակայալ է։ Եթե կա, ուրեմն դա արարության հետ կապ չունի,

ընդամենը սրբագրած, փայլեցրած արհեստ է: Իսկական արվեստագետի նպատակը ձգտումն է կատարյալին, ստեղծագործ հոգու և իմացության գերագույն ներդաշնակությանը: Նրա համոզումն է այն ճշմարտությունը, թե թեատրումների համար ծնվածք պետք է թոփշքի պաշտամունք ունենա:

Դուրյանն այս հավատամքին է եղել երաժշտական կյանքում առաջին քայլերն անելու, Երուսաղեմում ուսումնառության տարիներին, առաջ յօւրիշում՝ Հերման Շերշենի, Փարիզում՝ Ռոժե Դեզորմիերի ու Ժան Մարտինոնի մոտ կատարելագործման ընթացքում: Կյանքի ու ստեղծագործական գործունեության տարիներին էլ ընթացել են այդ անփոփոխ նշանաբանով:

Զարմանալի՝ ոչինչ, որ այսօր էլ, ինչպես սեփական անձից, այնպես և իր հետ բեմ ենող երաժիշտ-կատարողներից նա պահանջում և կարողանում է կորզել հնարավորությունների, օժտվածության, ունակությունների առավելագույն դրսերում, ինչը հակիրճ բնորոշվում է «բեմական ինքնայրում» արտահայտությամբ:

Մյալ նվագավար է Օհան Դուրյանը: Սակայն ոչ ոք նրանից անգամ չի լսել, թե երաժիշտ դառնալն իր երազանքն է եղել, չի լսել նաև, թե մեկ ուրիշ ասպարեզ կարող էր ընտրել նա:

Միայն մի խոստովանություն. «Իմ էությունն ամբողջությամբ լեցուն է երաժշտությամբ: Ճիշտ էր նվագավար դառնալս, որովհետև միշտ կամեցել եմ հոգուս խոսքը ձեռքերիս, մատներիս թրթիռով հաղորդել մարդկանց, շոշափել երաժշտությունը՝ այդ երկնային, աստվածային, անբացատրելի ու անշշափելի երևութը»:

Օհան Դուրյանի փառքի ճամփան, իրավամբ, եղավ վերձիգ: Ժամանակն, անշուշտ, այն ամփոփելու է իրեն երաժշտական համամարդկային իրողության յուրատիպ մի դրսեվորում: Այդ ժամանակների մեջ, թերեւս, պարզ դառնա Դուրյան անհատականության հնարավորությունների և օժտվածության մի գաղտնաշերտ ևս. այն, որ նրա նվագավարական վահանակին երրեք պարտիտուր չի լինում: Բազում հեղինակների հորինվագֆներ՝ օպերա, թե սիմֆոնիկ մեծ ու փոքր

կտավներ, նրա հոգում են, նրա պայծառ, անդավաճան հիշողության մեջ:

Մասստրոյի ստեղծագործական ժառանգությունն ամփոփում է դեռևս շարժարծված շատ խորհուրդներ, որոնցից մեկն էլ 20—25 տարիների գիտական իր ուսումնասիրությունների արդյունքն է՝ «Ունիվերսալիզմ» երաժշտական նորսիստեմի իր հայտնագործումը:

Հանրությանը ծանոթ են նրա վոկալ ու սիմֆոնիկ կտավների մի մասը միայն: Հեղինակային ծրագրերը բազմազան են և ընդգրկուն: Սակայն առաջնայինը, առաջին սիրո պես ուժգին, կա և մնում է նվագավարականը:

Պատմամշակութային դարավոր վկայումով՝ արվեստում կրթողային նվաճումների գաղտնիքը, Աստծո կամոք, վերապահված է մեծ անհատներին, անեղծ, անխառն արվեստագետներին, ստեղծագործ այն հոգիներին, որոնց ժամանակը «աս»-ի շափումներից դուրս է, և վաստակն էլ՝ անձնավորման կշեռին անհաղորդ:

Քշերին է տրված փառքից ու համընդհանուր գնահատանքից շշանալու շնորհ:

Օհան Դուրյանը հենց այդ ընտրյալներից է, մարդ, որ տեր է իր կոչմանը:

Իր դժվարին ճանապարհին նա հրաշալի դաշնությամբ արժեորեց գոյի, աշխարհընկալման և հոգեոր ինքնամատուցման կարևորությունը, կարողացավ աշխարհի հանդեպ իր վերաբերմունքը բխեցնել ազգային մտածելակերպի ու հոգեբանության ակունքներից:

Կերտվածքի խնդիր էր: Այս, ինքն է՝ առանց դիմանկարյին պաճուճանքների...

Թե՛ հայրենական և թե՛ աշխարհի բեմերում, անկախ մատուցվող նյութից, անկախ հեղինակի ազգային պատկանելությունից, իբրև արվեստի առաքյալ, Դուրյանը հարազատ մնաց ճշմարտության գերագույն պահանջին՝ ազգային արժանապատվության գիտակցումով փայլեցնելով արվեստի համամարդկայնության գաղափարը:

«Երբեք չեմ խնայել ինձ,— հավաստում է մեծ վարպետը,— նվազավարի իմ արվեստը սիրում եմ անսահմանորեն և այն միշտ վեր եմ դասել երկրային, մարդկային բոլոր հաճույքներից»:

Նվազախմբի առջև ասես վերանում եմ իրականությունից, ղեկավարում եմ գոց աշքերով, միայն երբեմնակի նայում որևէ երաժշտի: Այդ պահին նվազախումբն ինձ համար մի հսկա երգեհոն է, որով ես հնչեցնում եմ մարդկության հոգու և խղճի մեղեդիացած համանվագը...»:

Նվազավարական հարթակին Օհան Դուրյանն է:

Ամեն ինչ ասված է: Եվ ամեն անգամ բեմ ելնելով իր և փոքրամարմին մի հսկա, իր և մարդուգի, նա դյութում է հանդիսատեսների սրտերը՝ համոզելով, որ բեմն իր աղոթատեղին է, հարթակն այդ լուսո խորան և, իհարկե, իր անկրկնելի, խոսուն ձեռքերը՝ հավատի ու ինքնայրումի մշտավառ կերպոններ:

## ՆԿԱՐԱԳԻՐ

Անվերժան, անխմանալի խողհրդով ու համառ մի տքնությամբ՝ մարդն ի ծնե, իր տենչերն իրական ոլորտներից վեր պահած, հանց բեռնակիր մի սկեռուն, տարիների միջով տանում է վեր, ճիշտ և ճիշտ դեպի անհայտը, ու երբ ետ է նայում մի պահ, ժամանակի մշուշներից, վերծանումի հանգույն հառնում է հեռավոր, սիրելի, սակայն այլևս անդարձ սկիզբը:

Մտովի ամեն հանդիպումն անցյալի հետ՝ կենսահաստատումի նշանակ-վկայություն է:

Այդպես հուշն է զարթնում, իր և ոսկերերան խոսնակ, մեկ շոշափելիորեն մարմնավոր, մոտիկ, մեկ՝ աղոտ, թափանցիկ ու հեռու:

Երկրային շափ ու տարածքի և ժամանակի մշտագալար, հարահոս երթի մեջ, երբ անգամ փոքրիկ մի ճեղք է բացվում մոռացության վարագույրի վրա, նորիմաստ է դառնում հայցքն այդ փոքրիկ պատուհանից դեպի ետ, դեպի արմատ ու սկիզբ, այնտեղ, ուր ծաղկահյուս շահելության զողանշներն են մնացել և ուր ոսկեր են մարդու ապրած բոլոր տարիները:

Հիշողությամբ է կարենորվում կյանքի հետագիծը և, ուրեմն, թող բաց մնա կարոտարաղձի դուռը անցյալի վրա, որ ավելի հստակ, տեսանող ու միտված լինի մարդու հայացքն ապագային:

## ԳՈՒՅՆԵՐ ԱՆՑՑԱԼԻՑ

Սենք բոլորս զալիս ենք մեր մահկության մօլորակից...

(Ռ. Մ.)

Հիրավի, մտաքերռումի ամեն մի փորձը լույսի մի շող է, որով կենդանություն է առնում կյանքի զարդանկարը, Դան-

դաղ ու վարանոտ արձակվում է հուշերի կծիկը ու նրա ընթացքով ետ պտտվում մանկության մոլորակ տանող գալարաթելը։ Ահա այսպես, կենսապատռմին արված տեսական անդրադերի թելադրումով շնչավորվում է դիմանկարը՝ պարզ և անհավակնոտ, համոզիլ ու մարդկային, ինչպես վայել է իրական վաստակով ժանրաբեռ, արվեստաստեղծ մարդուն։

## ՃԻՆ ՈՒ ԾԱՆՈԲ ԽԱԶՈՒՂԻՆԵՐ

Հայտնի է իր ծննդյանը վերաբերող շատ ուշագրավ մի պատմություն, որն այսօր էլ շարունակում է ներազումով հուզել մասնատրոյին։ Եվ նա, որ ըստ էության ճակատագրապաշտ չէ, մի տեսակ նախապաշարվածի ներշնչվածությամբ հաճախ կրկնում է, որ իր կյանքում համարյա ամեն ինչ ենթակա և ներդաշնակ է ճակատագրական այդ նախանշանին։ Դա մի իրողություն է, որով պայմանավորված՝ փնքը ճշմարտապես երշանիկ է, սակայն այդ հազվագյուտ գանձն իրեն տրվել է ինքնայրումի դիմաց։

Իսկ եղելությունն այս է, ինչի մասին նրան պատմել է մայրը։

1922 թ. սեպտեմբերի 8-ին, ծրուսաղեմի քաղաքացիների թաղամասի բնակիչ, ատաղձագործ Խաչատորի համեստ, բազմանդամ ընտանիքում լույս աշխարհ եկավ հերթական արու զավակը։ Նա ծնվեց պտղապարկով, ասել է թե՝ երշանկության նշանակով։

Այսպես էին մտածում նույն և, նույնիսկ, հիմա էլ տարածված է այդ հավատալիքը, հատկապես Արևելքի ժողովուրդների մեջ։

Մանկանը մկրտեցին սովոր Հրեշտակապետ եկեղեցում՝ անվանակոչելով Հովհաննես։

Անսահման էր ծնողների ուրախությունը, հատկապես՝ մոր, որը հավատում էր նշանակին ու համոզված էր, որ իր փոքրիկի գլխին միշտ լինելու է տիրոջ օրհնյալ ազը։ Սակայն եղավ մի բան, որը, ըստ հավատավախ մայրիկի, ճակատագրական էր որդու համար։

Վարպետ Խաչատորի եղբոր աղջիկները դատարանում վիճարկվող հարց ունեին, իրեն նախապաշարյալ, նրանք համոզված էին, որ միայն պտղապարկի մոգական զորությամբ կշահեն դատը։ Պատահակա՞ն էր արդյոք, թե այնուամենայինվ ինչ-որ խորհուրդ կար, այդպես էլ եղավ. գործն ավարտվեց ի օգուտ նրանց, սակայն ինչ-ինչ պատճառներով աղջիկները ոչ միայն չվերադրեցին, այլև, անհասկանալի դրդվածությամբ, այրեցին պտղապարկը։

Ահա այդպես, հրի փոխակերպվեց երջանկության խորհրդանշը, սակայն, որպես խորհուրդ, չմոխրացավ երբեք։

Սա է եղածը, ինչին յուրահատուկ իմաստ վերագրելով, անվերապահորեն հավատում է աշխարհահոչակ նվազավար Օհան Դուրյանը և ինչը տասնամյակների հեռուներից շարունակում է խորհրդապաշտորեն համոզիլ և ներդաշնակորեն համահունչ թվականին։

Վաղ մանկության հուշերը միահյուսվում են ծննդավայրի մասին ունեցած նախնական այն պատկերացումներին, որոնք ժամանակին, իրավամբ, մյութական հնչողություն ունեին։

Այն սոսկական քաղաք չէր, այլ աստվածահաճո մի բնակատեղի՝ աշխարհի բոլոր քաղաքներից ամենահոչակավորը ոչ միայն քրիստոնյաների, հրեաների, այլև մահմեդական-ների համար և նրա յուրաքանչյուր բնակիչ, մեծ թե մանուկ, այլոց հանդեպ մի տեսակ առավելության գիտակցում ուներ երեք կրոնների այդ քաղաքում ծնված լինելու և ապրելու փաստով։

Իսկ թե որտեղ էին սկզբնավորվում արմատները և ինչ հող ու ջրով էր սնուցվել երուսաղեմահայոց կենսածառը ու էլի բազում հարցերի պատասխաններ, նա դեռ պիտի քաղեր պատմության՝ սերունդների այդ համահավաք հիշողության էջերից։

Ի՞նչ հանգրվան էր հո՛ղն այս աստանդական հայի համար։ Խսկությունը սա էր։

Հայերի առնչումներն ու կապերը ծրուսաղեմ սուլր քաղաքի հետ հիշատակվում են դեռևս պատմական այն ժամանակներից, երբ այն կրում էր Սալեմ, ապա հաջորդիկ՝ Հերուսանվանումը և, վերջապես՝ քաղաքը Դավթի, որ թագավորության կրոնական ու քաղաքական կենտրոնն էր, փա-

ռավոր որպես սրբավայր, և որի հոյակապ տաճարի մեջ էր բնակվում Կենդանին ու Ծշմարիտը, ասել է՝ ինքն Աստված:

Հայ տարրն այստեղ հաստատվեց հատկապես քրիստոնեության տարածման առաջին շրջանում և ապա սկսեց ավելանալ թե՛ կրոնական մղումներով և թե՛ ժողովրդի պատմաճակատագրական հանգամանքների բերումով, այնպես որ՝ հայերն այստեղ հիմնեցին իրենց պատրիարքությունը՝ եկեղեցիներն ու գաղութը:

Ստեղծագործ, հավատավոր ու կառուցող հայը, ամենկերպ նպաստելով երկրի տնտեսական, մշակութային զարգացմանը, հարյուրամյակներ շարունակ շանում էր նաև պահպանել իր ազգային կերպը և սերունդներին փոխանցել ավանդներ ու արմատների կենսունակություն:

Երուսալեմի Հայոց վանքին՝ սուրբ Հակոբյանց տաճարին հարող քաղաքացիների թաղամասը բարեհամբավ էր արդեն քանիերորդ սերնդով քաղաքում ապրող աշխատասեր, բարեպաշտ ու խաղաղակյաց հայ բնակչությամբ: Փոքր էր հայկական թաղամասը, շատ ավելի փոքր, քան հարեւանությամբ ծավալված հրեականն ու արաբականը:

Կային և խառը բնակչությամբ թաղամասեր, սակայն նկատելի էր տարաբնակեցումն ու էթնիկական խտացումները:

Խաչատուրյանների ընտանիքն ապրում էր Վանքին շատ մոտ գտնվող փոքրիկ մի տան մեջ, որից քիչ հեռու սուրբ Հրեշտակապետն էր:

Ամեն կիրակի, լուսնումութին մարդիկ արթնանում էին ժամկոչի ձիգ ու զրնգուն կանչից, որ «Օրհնյա» է Աստված, փառավորյա» է Աստված, օ՛, բարի քրիստոնեայք, համեցեք եկեղեցին ձայնելով, հավատավոր բնակչությանը հրավիրում էր առավոտյան արարողության:

Լույսը բացվում էր օրհներգով: Եվ խորհուրդն էր հոգեբով ու գունեղ:

Փոքրիկ մի մանչուկ էր և, իհարկե, այդ ամենի բուն իմաստն ու էությունը գեռ շեր էլ գիտակցում, սակայն բնագով էր, թե ինչ, մի տաք թրթիռ, անորսալի մի զգացում՝ մայրական գուրգուրանքի պես պարուրում, լցնում էր հոգին, երբ ժամկոչը, հայտնվելով հենց իրենց պատուհանի տակ:

առավոտ ծեգին ոչ թե խոսք էր ասում, այլ երգում էր պարզապես: Համենայն դեպս, այդպիսին էր իր տպավորությունը:

Վաղեմի հիշողությամբ փայտիայված ու մտապահված մեղեդին հետագայում արտացոլում գտավ իր հեղինակած «Կոմիտասական» սյուժեում:

Արեագալին և իրիկնամուտին թախծոտ ու քաղցրալուր ծորում էր եկեղեցական զանգերի ղողանջը: Կարծես հեքիաթ լիներ: Աշխարհում որքա՞ն շքնաղ երգ ու երաժշտություն կա ստեղծված, սակայն իր խորին խորհրդով երկի չգերազանցված է մնում այդ անձեռակերտ, հավատի տուն կանչը ձայնը:

Ազգապահպան կոշվածության իր յուրակերպ իմաստն ուներ Հայոց վանքը, որի պատերից ներս հոգեստ մի Հայաստան կար՝ իր հոչակավոր ձեռագրատնով, ժառանգավորաց վարժարանով, թարգմանչաց դպրոցով, տպարանով, իր ույալ ու համբավավոր հոգեստ դասով:

Վանքը նաև բնակատեղի էր տնանկ ու գաղթական բազում հայերի, որոնք ապրում էին վարդապետների կացարաններում և որոնց տեղաբնակները կոչում էին եկվորներ:

Տեղահայոց կյանքում հավատի ու լույսի տաճարը անգամատելի դեր ուներ:

Ավելի ուշ՝ երիտասարդ տարիքին Հովհաննեսն առավագային ինքնագիտակցումի իսկական դասը, սակայն, քանի դեռ մանուկ էր, որոնք հարց՝ իրենց ով լինելու մասին, շուներ և չէր էլ կարող ունենալ:

Խաչատուրյանների ընտանիքը հնաբնակ էր Երուսաղեմում: Նախնյաց մասին խոսք ու զրոյց համարյա թե չէր լինում նրանց տանը, միայն գիտեին, որ պապերն այստեղ են եկել էրգումից: Բացառությամբ վարպետ Խաչատուրի, որը թերևս մի քիչ գիտեր հայերեն, մյուսներն արաբախոս էին: Նրանց շփումներն էլ հիմնականում արաբների հետ էին:

Հայրն ամբողջ օրը անդադրում ու ժանրաբեռ աշխատում էր և ժամանակ շուներ զբաղվելու երեխաներով: Նա մի փոքրիկ խանութ ուներ Վանքի մուտքի մոտ, որտեղ և վաստեկում էր բազմանդամ ընտանիքի ապրուստը՝ փայտից պատրաստված գեղարվեստական մանր-մունք իրերի, գրքակալ-

ների, խաչերի, մոմակալների վաճառքով, երբեմն էլ, որպես ատաղձագործ, կատարում մասնավոր պատվերներ:

Կարպետ Խաչատուրի առաջին կինը մահացել էր՝ թողնելով նրան վեց արոտ զավակ: Երկրորդ կինն ունեցավ ևս երեք տղա ու երկու աղջիկ: Մի տուն լիբը մանուկներ ու մի տուն լիբը հոգս, որը շուտով բարդվելու էր ավագ եղբոր ու մոր ուսերին:

Հայրը մահացավ, երբ ինքը հինգ տարեկան էր հաղիվ:

Մանկան հիշողության մեջ, թեև աղոտ ուրվագծումներով, հայրը մնաց համեստ, բարի ու աշխատասեր մի մարդ, որից ինքը ժառանգեց մարդկային լավագույն որակներ: Եվ ամենից շատ՝ շանասիրություն ու ազնվություն:

Մեկ տարի անց, ընտանիքի վիճակը փոքր-ինչ թեթևացնելու նպատակով, մայրը երկու զավակներին՝ ութամյա Հակոբին ու վեցամյա Հանային (այդպես էին անվանում փոքրիկ Հովհաննեսին) տեղավորեց Նազարեթի գերմանական գիշերօթիկ դպրոցում, որը երուսաղեմի մայր դպրոցի մասնաճյուղն էր: Այստեղ սովորող 25 երեխաններից միայն երկուսն էին հայ, մնացածը արարեներ էին:

Հանան ամենակրտսեր աշակերտն էր: Դժվար էր հաղթահարել առաջին օրերի անսովորությունն ու հարազատներից հեռու գտնվելը:

Ամեն ինչ նոր էր ու շափազանց օտար: Հաճախ նա մանկան անմիջականությամբ այնքան սուր էր զգում մոր կարտը, թախծում քույր ու եղբայրների համար և, շփոթես ինչու, ամեն արթնացումին մի անբացատրելի անուրջով սպառում «Օքնյա՛լ է Աստված, փառավորյա՛լ է Աստված...» կերկերուն, քաղցրալուր կանչին:

Ինչ լա՞վ էր տանը: Ազատ խաղա, ինչքան սիրտդ կկամենա: Իսկ այստեղ... Իհարկե, դժվար էր միանգամից հարմարվել ու համակերպվել այն խիստ կարգուկանոնին, որով փայլում էր գերմանական դպրոցը: Այստեղ բարձրակարգ ու խստապահանջ ուսուցումը զուգորդվում էր աշխատանքային դաստիարակությանը, այսինքն՝ դպրոցն իր սաներին ընձեռում էր անձի ձևավորման ու լիարժեք ինքնադրսնորման դրդ նախահիմքեր:

Առավոտ ծեզին բոլոր սաներն անխտիր զբաղված էին

այգում կամ դաշտերում: Նրանք սովորում էին հողի լեզուն, սովորում էին այն աիրել ու մշակել, ինչը պակաս կարևոր չէր, քան գիտելիքներ ստանալը:

Ազատ ժամերը լցվում էին օգտակար զբաղմունքով: Դըպրոցը հատուկ հոգատարություն էր տածում, որպեսզի մանուկների մեջ բնականորեն զարգանա հանրօգուտ աշխատանքի հանդեպ սերը:

Այսպես անցնում էին օրերը և նրանք կամաց-կամաց վարժվում էին ու կոփվում որպես ինքնուրույն անձինք:

Մի օր էլ երուսաղեմից Նազարեթ եկավ դպրոցի տնօրինը, իր հետ բերելով փոքրիկ ֆլեյտաներ: Ուզում էր իմանալ, թե աշակերտներից ով կկամենա երաժշտություն սովորել: Մի ֆլեյտա էլ տվեց փոքրիկ Հանային:

Մինչ այդ նման ոչինչ շտեսած մանկան մեջ կարծես ինչոր անծանոթ, բայց քննուց մի զգացում ծնվեց, երբ անվարժ ու փոքրիկ մատներով փորձում էր ծածկել ֆլեյտայի անցքերը, հնչյուններ կորզել գործիքից և, երբ շանգերն ապարդյուն եղան ու տնօրինը ետ վերցրեց գործիքը, տղան վիրափորանքից լաց եղավ: Նրա հուզմունքը նկատելով, տնօրինն անմիջապես վերադրեց ֆլեյտան ու շսխալվեց: Բացի Հովհաննեսից ուրիշ ոչ ոք նվազել չսովորեց:

Նազարեթի գերմանական գիշերօթիկում եղբայրներն ուսանեցին վեց տարի: Տարին երկու ամսով արձակուրդ էին զալիս երուսաղեմ, և ամեն անգամ մայրը հիացմունքով ու խանդաղատանքով նկատում էր զավակների ավելի լրջմիտ, ավելի կազմակերպված դառնալը: Դպրոցն, իրոք, շատ բան տվեց հայ մանուկներին:

Հետագայում, արդեն երուսաղեմի մայր կրթօշախում շարունակելով ուսումը, Հովհաննեսը վերջնականապես ճշտեց իր երաժշտական կողմնորոշումը՝ սովորելով զաշնամուր և երգեհոն նվազել, իսկ Հակոբը, որ թերևս ավելի լավ էր սովորում, քան կրտսեր եղբայրը, ստիպված էր թողնել ուսումն ու աշխատանքի անցնել՝ թեթևացնելու համար ընտանիքի հտաք: Սանր ժամանակներ էին: Հովհաննեսը մանկավարժի գիպլոմ ստացավ ճիշտ այն ժամանակ, երբ սկսվեց Երկրորդ համաշխարհայինը և, իրեւ ուսուցիչ, բարձր դասարանների աշակերտների հետ մեկնեց Բեթղեհեմ: Դպրոցի մնացած աշա-

կերտներն էլ ուղարկվեցին Նազարեթ, իսկ Երուսաղեմի գերմանական համբավավոր կրթօջախը անգլիացիները վերածեցին զորանոցի:

Թեթեհեմում նա դասավանդում էր անգլերեն, արաբերեն, երաժշտություն: Գերմաներենն այլևս չէր թույլատրվում ավանդել:

1939—40 թթ. էական դեր ունեցան Հովհաննեսի կյանքում, երբ կարծես առկայժեցին իր հետագա ճանապարհի լույսերը: Նա ընդունվեց Երուսաղեմի հրեական կոնսերվատորիա:

Նվազավարական արվեստի ուսումնառությունն ընթանում էր Վալտեր Պֆեֆերի և Զորջ Սինգրի ղեկավարությամբ, իսկ կոմպոզիտորականը՝ Ցողեֆ Գրինտալի: Բոլորն էլ անվանի երաժիշտներ էին: Սինգրի կրակոտ, ինքնատիպ կերպով տարված էր ի խորոց և ամենայն պատասխանատվությամբ էր կյանքի սկզբանից հանդիպեցին Պետք է որ ճակատագիրը նրանց հանդիպեցիներ երեք տասնամյակ հետո, երբ Արևմտյան Գերմանիայից մասսարոն Արևելյան Բեռլին եկավ՝ ներկա լինելու իր երթեմնի սանի համերգին: Ու երբ հանդիպման անակնկալից անշափ ուրախացած Օհան Գուրյանը (Հովհաննես Խաչուցորյան) իր գործընկերներին ներկայացրեց Սինգրին, ասելով, որ նա իր մեծ վարպետն է, անվանի նվազավարը շեշտված հարգանոռ ու հպարտությամբ ի լուր բոլորի նշեց. «Վարպետը հիմա դու ես»:

Հետաքրքրական է, որ Հովհաննես Խաչուցորյան իր ժամանակին Երուսաղեմի կոնսերվատորիայի միակ հայ ուսանողն էր: Հետագայում լույս ընծայվեց մի գիրք Պաղեստինի երաժիշտների մասին, որոնցից միայն ինքն էր այլազգի, մնացածը հրեաներ էին:

Դեռ կոնսերվատորիայի ուսանող, նրան Հայոց վանքից հրավիրեցին թարգմանչաց դպրոցում արաբերեն դասավանդելու:

Այս առիթն անշափ օգտակար եղավ նրա համար և այդուհետ նա այլևս հայ իրականության մեջ էր, հաղորդ այն ամենին, ինչն իրեն անծանոթ էր մինչ այդ: Համակվել էր յուրահատուկ ոգևորությամբ ու եռանդով: Հայ համայնքի մեջ երգախոռնը ստեղծելով, սկսեցին համերգներ տալ: Այն-

պես որ, ի մոտո շիվելով Հայրենակիցների հետ, ճանաչեց նրանց հոգեոր-մշակութային կառուցը, ավանդույթները, նիստուկացը, սիրեց ու սովորեց մայրենին:

Նա այլևս Հանա չէր, այլ Հովհաննես, դեպի արմատները դարձած մի երիտասարդ, որն անցնելով ազգային ինքնագիտակցումի առաջին լուրջ դասառնումները, հասկացավ, որ այդ ամենով գեռ իմաստավորվելու էր իր ապրելիք կյանքը:

Նրա ուսումնառության տարիները համբնկան Երկրորդ համաշխարհայինի ծանր ու դժվարին տարիներին և ճիշտ այն ժամանակ, երբ ավարտվեց պատերազմը, Հովհաննես Խաչուցորյանը ստացավ Երուսաղեմի կոնսերվատորիայի ավարտական դիպումը:

Նրա կյանքում յուրովի նշանավորվեց 1945-ը:

## ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

Մեծ բեմերի ու լայնաշունչ գործունեության բաղձանք ունեցող երաժշտի համար հանրության հետ առաջին հանդիպումը միշտ էլ վճռորոշ է ու ճակատագրական: Եվ, որպես անգիր, բայց ընդունված կանոն, միշտ կարիք է լինում, որ մեկը՝ անկողմնակալ, անաշառ ու բարյացակամ մի ուժ, ստարի, լուսավորի այդ ճամփան:

Հովհաննեսի համար այդ անձը Վալտեր Պֆեֆերը եղավ: Արժանիորեն բարձր գնահատելով իր սանի կարողությունները, նա Երուսաղեմի ուղիոնվագախմբի նվազավարին առաջարկեց երիտասարդ երաժշտին վստահել առաջիկա համերգներից մեկի ղեկավարումը...

Երախտիքի արժանի վերաբերմունք՝ ոգևորող ու պարտավորեցնող:

Հովհաննես Խաչուցորյանը լիովին արդարացրեց փորձառու և բարեհամբավ նվազավարի հույսերն ու վստահությունը, ավելին՝ բացառապես հրեա երաժշտներից բաղկացած նվազախոռնը, առաջին հսկ փորձից, համակրեց ու անթերի տեսավ հայազգի նվազավարի կատարողական արվեստն ու բեմական ինքնատիպ կեցվածքը:

հաշատությանների ընտանիքը, որ առանձնակի կարևորություն չէր տալիս ո՛չ նրա մասնագիտությանը և ո՛չ էլ այդ ուղղությամբ նրա ապագա գործունեությանն ու ծրագրերին, դժվար թե կանխատեսեր Հովհաննեսի ապագա փառքն ու ճանաշումը: Այսպես որ, նրան բոլորովին չէր զարմացնում մերձավորների անտարբերությունը: Հակառակ՝ նույնիսկ երբեմն զվարճություն էր պատճառում և, հատկապես, հիշարժան ու ծիծաղարժ էին մոր հետ կապված դեպքերն ու պատմությունները:

Երբ իրենց հարկի տակ հայտնվեց երաժշտական առաջին լուրջ նվագարանը, մայրը տարակուսանքով հարցրեց որդուն:

— Տղա՛ս, սա ի՞նչ է: Թո ինչի՞ն է պետք սա իրը:

— Ախր, ես երաժիշտ եմ ու ինձ անհրաժեշտ է տանը գործիք ունենալ: Սա դաշնամուր է: Ես պետք է պարապեմ, երաժշտություն ստեղծեմ:

Այս փաստարկները՝ անհասկանալի թվալով, ոչնչով շփառատեցին մոր կասկածն առ այն, որ որդին անկարեւոր, ինչ-որ փուլ գործով է տարված:

— Տղա՛ս, ինելքը զգիւուն գործ մը սորվիր, գնա գոնե ատամնարույժ դարձիր, որ կարողանաս օրվա հացդ վաստակել: Էղ գործիքն էլ, ի՞նչ ասեմ, որ բերել ես, ոչի՞նչ, թող մնա: Ինձ համար մեկ-մեկ քայլերգ-մալերգ կնվագես:

Զարմանալի կին էր մայրը, հոգում բյուր նուրբ երանգներ, որոնց արտացոլումն ավելի հաճախ երեսում էր իր հրաշալի ասեղնագործության մեջ:

Նրակերտ, ժանեկահյուս հորինվածքներում ուղղակիորեն խոսում է գեղեցիկի անմիջական ընկալումը, նրաճաշակ սրտի թրթիռը: Մյուս կողմից՝ անբացատրելի մի անտարբերություն ուներ որդու երաժշտական օժտվածության և ունակությունների հանդեպ: Ստուգապես, չէր հասկանում այդ արվեստի բուն էությունը: Իր համար դա շատ բարդ մի բնագավառ էր և, բնականաբար, չէր շանալու խորանալ հանգամանքների մեջ:

Միամիտ էր, աստվածավախ ու բարեպաշտ: Բազմագավակ մոր իր պարզ ու անհավակնոտ աշխարհն ուներ ու այդ աշխարհի նեղիկ պատուհանից էր նայում կյանքին: Ուզածն

այն էր, որ երեխաներն արհեստ ունենալին վաղվա օրն ապաց հովելու համար: Իսկ թե ինչ էր արվեստը՝ իր խնդիրը չէր: Գիտեր ասենք, որ տղաներից մեկը քիչումիշ զութակ է նվազում, այսպես՝ արևելյան մեղեղիներ: Երբեմն լսում էր նրա նվազը, առանց ոգևորության, իսկ ինչ էր սովորել Հովհաննեսը կոնսերվատորիայում, բնավ չէր հետաքրքրում մորը:

Մի օր էլ, որդու սենյակ մտնելով, տեսնում է նրան հայելու առաջ կանգնած, փայտիկով ինչ-որ տարօրինակ շարժումներ անելիս: Մնում է ապշած:

— Քեզ ի՞նչ է պատահել, տղա, էղ ի՞նչ ես անում,— հարցնում է վախեցած:

— Ղեկավարում եմ, մայրի՛կ,— անվրդով պատասխանում է որդին ու շարունակում շափ տալ:

Մայրը տարակուսանքով նայում է շորսրոլորն ու զարմացած շարունակում:

— Իսկ ի՞նչ ես ղեկավարում, թե գաղտնիք չէ...

— Ես դիրիծոր եմ, մայրի՛կ,— հակիրճ և, մոր համար բոլորովին անհասկանալի, հնչում է որդու պատասխանը:

Միամիտ կնոջը թվացել էր, թե որդին ինչ-որ հիվանդության անուն է տվել: Այդպես հուզված դուրս գալով սենյակից, նա կանչել էր տանեցիներին ու տրտմագին հայտնել.

— Խեղճ երեխաս խենթցեր է, գացեք-տեսեք:

Տիկին Հասմիկի մտավախությունը որեւէ հիմք չուներ, իսկ Հովհաննեսն արդեն իր ապագա վերընթացի ճանապարհին էր: Եվ եկավ օրը, երբ նա պետք է ինքնահաստատվեր իբրև նվագավար:

Ահա և առաջին բեմելը երուսաղեմում:

Աննկարագրելի հուզմունք լեփ-լեցուն դահլիճի ու արհեստավարժ նվագախմբի առջև և պատասխանատվության այնպիսի մի բաժին, որպիսին կարող է ունենալ իր առաջին իսկ համերգին Մոցարտի սիմֆոնիան ներկայացնող նվագավարը:

Դահլիճում նաև հարազատներն են: Մայրն ու քույրերը առաջին անգամ են կենդանի կատարում տեսնում և ինչ-որ տիխով բան կա այս իրողության մեջ: Մի պահ նրանց սեռուն հայացքներն էր զգում թիկունքին, հետո ամեն ինչ գնաց-ձուլվեց երաժշտությանը: Այլևս ինքն էր, նվագախումբը ու մեծ, ընդգրկուն, աներևակալիորեն ձգող-տանող երա-

Թըշտությունը: Ուշքի եկավ, երբ դահլիճը թնդաց ծափեթից: Շըշվեց, հայացքով փնտրեց մորը: Տեսավ միայն մի պահ: Ու մի շերմագին զգացում ապրեց, որ կարողացել է նրան իրենով հպարտանալու առիթ պարգևել:

Համերգից հետո շնորհավորանքի տարափ տեղաց: Երիտասարդ նվազավարը՝ հաջողությունից մի տեսակ շփոթված և անթաքույց հուզումով, վայելում էր իր առաջին հաղթանակը, երբ մոտեցավ կոթողային կեցվածքով, անհողողող ու խստադեմ մայրը: Եվ, ի լուր բոլորի, հնչեց նրա հանդիմաննքը.

— Աս ի՞նչ խայտառակությո՞ւն... տղաս, քեզ համար քիչ է թե գետինը մտնայի: Բեմին վրա ամենքը բանով մը զրադշակած էին, նվագ կընեին, իրենց թուղթերուն կընայեին, իսկ դուն... դուն այդ ծիծեռնակի պոշը հագիդ ու այդ հիմար փայտիկովի ի՞նչ կընեիր, շհասկցա՛... ամո՞թ չէ՞:

Ներկաները մի պահ կարկամեցին, ապա գլխի ընկնելով, ընկրկեցին: Միժաղից թուլացած երաժիշտը գրկեց մորն ու համբուրեց իրեն պարգևած կյանքի, այս երջանիկ պահերի, զատ ու շատ այլ բաների և, ամենից շատ՝ նրա այդ պարզ ու միամիտ անգիտության համար:

Այս համերգից երկու ամիս անց նա մեկնեց Շվեյցարիա՝ ուսումը շարունակելու և կատարելագործվելու:

## Վերելք

Այլևս կանխորոշված էր Հովհաննես Խաչատրյանի նվազավարական ուղին, որ ձգվում էր դեպի այն ոլորտները, ուր իշխողը արարշության շնորհն է ու գեղեցիկի կատարյալ ըմբռնումը:

Որպես իր բո՛ւն կոշման հավատավոր՝ Երուսաղեմում ծնված, կրթված ու բեմելած հայազգի երաժիշտն ուզենորվեց Եվրոպա՝ խորացնելու դասական երաժշտության ու արվեստի իր իմացությունը:

Կյանքի և ստեղծագործականի կեռմաններն ինքնուրույն հաղթարելու վճռականությամբ նա հայտնվեց իրեն մինչ այդ անժանաթ իրականության ու հարաբերությունների մեջ,

որն էր եվրոպական և, ինչին հարկ էր զգուշորեն վերաբերվել՝ շանալով զերծ մնալ համահարթվելու աղդու վտանգից: Հարկ էր նաև զգոն լինել՝ ինքնատիպորեն առանձնանալու, քանզի մեծ էր ու զորեղ «իդմ»-երի ու ազդեցությունների դաշտը, իսկ ինքն այնքան շահել էր...

Օտարափ առաջին հանգրվանը եղավ Ցյուրիխ քաղաքը:

Միջավայրն առինքնող էր երաժշտական հագեցածությամբ և արվեստների նրբաճաշակ ընկալումներով: Այս ամենն, անշուշտ, որոշակի դեր ուներ, որ նա անմիջապես մերվեց նոր պայմաններին:

Ուսումը շարունակելու համար սովորելու շատ բան կար: Եվ նա սկսեց դասեր առնել Ցյուրիխի ուադինվախմբի նվազավար, հանրածանոթ երաժիշտ Հերշենի մոտ, որը զարմանալի մի անձնավորություն էր՝ տարօրինակություններով ինքնատիպ, մի քիչ խենթավուն ու տաղանդավոր:

Պարապմունքներն ընթանում էին անկանոն, նվազավարի տրամադրությամբ պայմանավորված, բայց դա չէր խանգարում, որ երիտասարդ երաժիշտը նրանից ստանար առավելագույնը:

Երուսաղեմից հարազատները օգնում էին կարելվույն շափ: 1945—46 թվականներն էին: Ընտանիքը համեմատարար թեթևացած էր հոգսերից ու կարիքից: Եղբայրներն աշխատում էին: Ճիշտ է, նրանցից և ոչ մեկը արվեստի բնագավառում չէր, սակայն հիմա արդեն հասկանում ու փայփայում էին երաժիշտ եղբոր նվիրական իղձը:

Սովորելու շատ բան կար, և ժամանակն էլ կարծես արագ էր թոշում: Հարկավոր էր բաց շթողնել ոչ մի առիթ, որը կարող էր իմացության ընդլայնմանը նպաստել:

1947 թ. անակնկալ ու երջանիկ մի բերումով նա հանդիպում է «Ռուբախ այրին» հանրածանոթ և շատ սիրված օպերետի հեղինակ Ֆրանս Լեհարին:

Սանոթանալով հայազգի երաժշտին և ապա արժանվույն գնահատելով նրա նվազավարական կարողությունները, Լեհարը Ցյուրիխ եկած ֆրանսիացի մի իմպրեսարիոյի հորդերում է համերգ կազմակերպել, և շուտով Փարիզի հանրահոլակ «Կոլոն» նվազախմբի հետ «Պալի դը Շայո» ամենա-

գեղեցիկ ու ամենահայտնի դահլիճում կայանում է այդ համերգը՝ Հովհաննես Խաչատրյանի ղեկավարությամբ:

Ի՞նչ կարող էր ասել այս անծանոթ անուն-ազգանունը հոշակավոր երաժիշտների արվեստը վայելած հանդիսականին: Սակայն դահլիճը լեփ-լեցուն էր և պետք է խոստովանել, որ այդ հարցում անշափ կարեոր դեր էր խաղացել հրեա իմպրեսարիոյի հմտությունը: Գովազդներում նա օգտագործել էր նվագավարի՝ Երուսաղեմի կոնսերվատորիան ավարտելու փաստը: Իսկ այս երաժշտական հաստատության համբավն արդեն հայտնի էր Եվրոպայում՝ շնորհիվ հրեա այն անվանի երաժիշտների, ովքեր պատերազմի տարիներին, ճիշտ կողմնորոշմամբ, հաստատվեցին Երուսաղեմում՝ ստանձնելով երաժշտական ազգային դպրոցի ամրապնդման գործը:

Ինչեւ, հաջողությունն աննախադեպ էր, և փարիզյան այդ համերգը, աներկրա, լուսավոր դուռ էր բացում հայ երաժշտի հետագա բեմական գործունեության առջև:

Իրավ, կարճ ժամանակ անց, նույն Ֆրանց Լեհարի միջնորդությամբ ավստրիական խոշոր հրատարակություններից մեկի տնօրեն պարոն Շլեն կազմակերպեց Խաչատրյանի հաջորդ համերգը՝ այս անզամ Վիեննայի նշանավոր «Տոնկյուստեր» նվագախմբի հետ «Կոնցերտ Հառուց»-ում:

Համերգի ծրագրում ընդգրկված էր նաև սիմֆոնիկ մի գործ, որի հեղինակը ինքը՝ Հովհաննես Խաչատրյանն էր: Ոչ մեծածավալ այդ ստեղծագործությամբ հեղինակը կարողացել էր ընդգրկած երանգներով և երաժշտական արտահայտչականությամբ ներկայացնել պատերազմի՝ իրեն շարիթի ու ավերման և խաղաղության՝ իրեն համամարդկային բաղանքի գաղափարը: Այդ գործը պատվերն էր համերգի կազմակերպիչների և հետագայում այն կատարվեց նաև Փարիզում:

Ոգերովելու առիթ կար անշուշտ: Հաջողության աստղն էր շողացել օտարության մեջ ինքնահաստատվող երիտասարդ երաժշտին: Մնում էր ընդառաջ գնալ այդ լույսին՝ տքնությամբ հաղթահարելով ամեն մի խոշընդոտ:

Մեծանուն նվագավար Հերբերտ Փոն Կարայանը ներկա էր համերգին և, գոհունակությամբ արտահայտելով տպագործությունը, նրան հրավիրեց իր մոտ՝ հետագա դասեր առնելու

Այդ երեկոյի հետ մի հուշ էլ է կապված: Այն պահին, երբ նվագավարը՝ հանդիսատեսի շերմ ընդունելությունից հուզված, շնորհավորանքներ էր ընդունում, նրան է մոտենում մի երաժշտասեր.

Դուք մեզ կատարյալ վայելք պատճառեցիք, դա շարունակությունն էր այն մեծ տպագորության, որ ունեցանք Բուդապեշտում՝ լսելով Զեր «Զութակի կոնցերտը»:

Նվագավարն իսկույն կուահեց իրողությունը.

Ներեցեք, պարոն, ես այն Խաչատրյանը չեմ, — սիրալիր պատասխանեց նա, — Բուդապեշտում դուք լսել եք հայ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի գործը: Ես Հովհաննես՝ Խաչատրյանն եմ:

Թերևս, այդ հապանցիկ հանդիպումն էր, որ հուշեց նրան փոխել անուն-ազգանունը՝ օտար ունկնդրի մոտ հետագայում որևէ շփոթ չառաջացնելու նպատակով: Համենայն դեպքու, այսպես է մեկնարանում ինքը՝ նվագավարը: Դրանից հետո հայտագրերում երեաց Օհան Դուրյան անունը:

Ի դեպք, Օհանը հետևողական շեղավ ու շգնաց Հերբերտ Փոն Կարայանի մոտ: Իսկ ի՞նչն էր պատճառը: Իհարկե, ոչի՞նչ ավելի, քան սովորական, անմեղ մի պատմություն, ինչին վիճակված չէր սիրավեպ դառնալ: Ո՞վ շփիտե, որ կյանքում ոչ մի հոգեվիճակ ի գորու չէ մարդու գործնական ծրագրերը տակնուվրա անել այնպես, ինչպես դա կանի զգայական, ինքնամոռաց տարվածությունը:

Այդ շրջանում Օհանի սրտային նուրբ գործերն այլ կերպ չեր կարելի բնորոշել, քան երիտասարդական, օդեղեց հափրշտակություն:

Ով էր նրա արկածի հերոսուհին: Իհարկե... Ցյուրիխում բնակվող շիկահեր, սիրունատես մի ելքի, որ գերել էր նրան:

Ահա և համբավավոր նվագավարի բարյացակամ, խոստումնալից հրավերին հետևելու փոխարեն նա գնաց իր զգացմունքի ետևից: Հույզեր, երիտասարդական անուղղներ, սակայն որոշողը ժամանակն էր:

Ուշացումով միայն նա հասկացավ, որ իր զգացմունքներն այնքան էլ խորը չէին և որ կապն այդ տեսական չէր կարող լինել:

**Երիտասարդ** սրտի զգայական պոռթկումն ու վաղանցուկ ներշնչանքը թեթև թոշնի պես ճախրեց-անցավ և այդ զարդարիկ ապրումներից մնաց շիկահեր աղջկան նվիրված մի գեղեցիկ երգ:

Այստեղ պետք է հիշել, որ Օհանը երգեր սկսել էր գրել վաղուց: Դեռևս երուսաղեմում սովորելու տարիներին:

Գերապատիկ Թորգոմ պատրիարքի բանաստեղծությամբ գրված հուշիլ ու գեղեցիկ երգը առաջինը մեզ հասցրեց մեր վաղամեռիկ սոխակ լուսինն Զաքարյանը: Ավելի ուշ այն սկսեց հնչել Ալիս Շահմիրյանի, ապա՝ երիտասարդ երգուհի Վիկտորյա Ավետիսյանի կատարմամբ:

Հետո արդեն պետք է ծնվեին քնարաշունչ, մեղեդիական նրբակերտ գործեր, որոնք արվեստագետի հուզական կերտվածքի բավական խոսուն արտացոլումներն են:

Ցյուրիխում Դուրյանը մտերմացել ու բարեկամացել էր մի խումբ հայ ուսանող-երաժիշտների հետ: Հանդիպում էին երիտասարդ, շատ բարեհամբույր մի տիկնոջ ճաշարանում:

Տիկին Ֆիշերը, որ արվեստասեր անձնավորություն էր, առանձնահատուկ վերաբերմունք ուներ շնորհալի, բարեկիրթ ու սրտաբաց հայ տղաների հանդեպ և նրանց ընդունում էր իբրև հարազատների: Նա սիրում էր հաճելի անակնականեր մատուցել և ահա մի օր Օհանին հրավիրեց հիշարժան մի համերգի:

Լյուցերն քաղաքում, որը Ցյուրիխից մոտ 200 կմ հեռավորության վրա է գտնվում, նվագավարելու էր հոշակավոր Արթուրո Տոսկանինին: Ի՞նչ մեծ տպավորություն և ի՞նչ վայելք: Նման արվեստագետին տեսնելն ու լսելն արդեն իսկ իրադարձություն էր:

Շատ նվագավարներ էր տեսել, հիացել նրանց կատարուական վարպետությամբ, բայց Տոսկանինին մարդու հոգու և բանականության հետ երկխոսող իր արվեստով ու բեմական զարմանալի արտահայտիչ կեցվածքով, պարզապես, անզուգական էր:

Գետք է ենթադրել, թե որքան երախտապարտ էր Օհանը նրբազգաց տիկին Ֆիշերին, որ ստեղծել էր այդ բովանդակ վայելքն ապրելու հնարավորություն: Գալով տիկնոջը, արժե նկատել, որ նա հոգու խորքում համակրում էր Օհանին,

ստեղծագործելու համար նույնիսկ առանձին սենյակ էր տրամադրել նրան, աշխատում էր ամեն կերպ օգտակար լինել, որպեսզի երիտասարդ երաժշտը սովորելուն զուգընթաց ստեղծագործի ու հանդես գա համերգներով: Անշափ գնահատելի էր, որ նա հովանավորեց նվագավարի փարիզյան համերգը:

Տպավորված շվեյցարուհու մարդկային անկեղծ ու հրաշալի կերպարով՝ Դուրյանը որոշեց մի երգ ընծայել նրան և, իբրև երախտագիտության նշան, առաջարկեց ընտրել որևէ բանաստեղծություն: Ստացվեց հովաթաթավավ, գեղեցիկ մի գործ:

Էմմա Ֆիշերն զգացված էր, սակայն տարիներ էին պետք, որ հեղինակը կուահեր, թե ինչու էր նա իրեն առաջարկել հենց այդ բանաստեղծությունը, խորիմաստ մի ստեղծագործություն, որը լիովին արտահայտում էր կանացի անպատախան զգացմունքի խոստովանություն, ապա և՝ անխոսափելի բաժանման, հրաժեշտի սթափ տրամադրություն: Լալագին՝ ոչինչ:

Իսկ ինչ կարող էր անել ինքը, երբ կնոշ հոգում կատարվածին անհաղորդ ու անգիտակ, ակամա վիրավորել էր նրան՝ ոչ միայն շարձագանքելով զգացմունքներին, այլև շատ հաճախ նրա մոտ կազմակերպած հավաքույթներին ու խնջույքներին մասնակից դարձնելով իր էլզիին:

Զահել, վառվուն տարիքում ում հետ չեն պատահում նման հանդիպումներ ու բաժանումներ:

Այդպիսին է մանրումեծ գաղտնիքներով հյուսված, բազում անակնականերով լեցուն կյանքը, որի թեկրին աստվածային կամոք օրորվում է յուրաքանչյուր կոչվորի կենաց պատմությունը:

Ցյուրիխում որոնումների մեջ գտնվող արվեստագետին վստահություն ներշնչեց սեփական կարողությունների հանդեպ: Այդքան էլ դյուրին շէր եվրոպական երաժշտական հասարակայնության ուշադրությունը գրավելն ու ինքնահատատվելը, համերգներ կազմակերպելը, հաջողություններ ունենալի այն պայմաններում, երբ հանդիսատեսին գրավելու համար հրավիրվում էին ամենաճանաշված երաժշտներ:

**Վիեննա—Փարիզ—Վիեննա համերգներից հետո, 1949 թ.**  
նա որոշեց հաստատվել Փարիզում՝ գեղեցիկ արվեստների օրրանում, բնավ չխնալվելով, որ այստեղ ամեն ինչ տրամադրելու, նպաստելու էր ազատ և անկաշկանդ ինքնադրսելուրմանը: Ինքն այդուհետ ապրելու էր ոգու, ճաշակի և ազատության մայրաքաղաքում, որտեղ, Բողերի խոսքերով՝ «Իշխում է լոկ կարգ ու գեղեցկություն»...

**Փարիզում Օհանը շատ խնդիրներ համեմատաբար հեշտ էր լուծելու: Այստեղ նա այնքան էլ օտար միջավայրում չէր, որովհետև կար իր ավանդույթներն ստեղծած հայկական համայնք: Համայնքն, իրավ որ, սատարեց իր երաժիշտ զավակին: Դա բարոյահոգերանական մեծ իմաստ ուներ նաև:**

Անդրանիկ Մալազյանի գլխավորությամբ, շատ արագ կերպով ստեղծվեց արվեստագետին հովանավորող կոմիտե, որին անդամակցում էին համայնքում արժանի հարգանք վայելող մարդիկ՝ Պողոս Ֆրենկյան, Արմենակ և Գեղամ Աճեմյաններ, Վարչե Զիլինգարյան, Պերճ Չարչյան, Մկրտիչ Կազանչյան և այլք, ովքեր հայտնի գործարարներ լինելուց զատ, արվեստասեր էին, ազգասեր ու կարեռ նշանակության բոլոր հարցերում պատրաստակամ: Նրանցից ոմանք ինքներն էին ստեղծագործում, ինչպես ասենք Գեղամ Աճեմյանը, որի հեղինակած պիեսը ներկայացվեց Շարլ Ազնավուրի մոր, հոր և քրոջ մասնակցությամբ: Ահա այդ պիեսում, Աիդա Ազնավուրյանի կատարմամբ հնչեց նաև Օհան Դուրյանի «Սիրերգը»: Բանաստեղծական տեխստը Աճեմյանին էր:

Թատերական, համերգային նման միջոցառումներ, երեկույթներ հաճախ էին կազմակերպվում և պետք էր ըմբռնել, որ համայնքն իր ներսում ջանում էր փայփայել մշակութային ամեն մի դրսերում՝ լիներ դա սիրողականի, թե արհետավարժության արգասիք: Կարենը ազգային գիտակցումի, հայ ոգու պահպանումն էր օտար միջավայրում մի կողմից, մյուս կողմից՝ միանգամայն ավելորդ չէ նշել, թե առկա ու ներուժային ինչ մեծ ներդրում ունեին հայերը Ֆրանսիայի մշակութիւնը բոլոր բնագավառներում:

Այդ ներդրման մեջ իր մասն ունեցավ նաև Օհան Դուրյանը՝ նախ մինչև հիսնականների վերջերը, ապա ևս մեկ

**տասնամյակ՝ 1980-ից 1991 թթ., երբ նա ապրում ու ստեղծագործում էր Մարսել քաղաքում:**

Հիշատակելի է այն փաստը, որ Փրանսիական կառավարությունը բարձր գնահատեց նվագավարի բեղմնավոր գործունեությունը՝ 1998-ին շնորհելով նրան երկրի շորս կարեղորագույն պարգևներից մեկի՝ «Գրականության և արվեստի ասպետի» բարձր կոչում: Իսկ առավել բարձր գնահատությունն այն էր, որ Փրանսիացի արվեստասերը ճանաչեց ու սիրեց հայ երաժշտին և բոլոր այն նվագախմբերն ու անհատ կատարողները նույնպես, որոնց հետ առիթ ունեցավ աշխատել մասնարորդ Դուրյանը:

Իսկ մինչ այդ.

Փոփոխվող ժամանակների, վերաժեռորդումների ու նոր ըմբռնումների հորձանուտում իսկական, մնայուն ճանաչման մղումն էր առաջնորդում նրան և նա հաստատակամ եղավ լընկրկվելու ամենատարբեր բնույթի դժվարություններից: Փարիզի և ընդհանրապես՝ Ֆրանսիայի հետ նա նվիրականորեն կապեց իր կյանքի լավագույն տարիները:

Այդ շրջանն, իրավ որ, ստեղծագործական բերկրանք տվեց նրան:

Իր ղեկավարած համերգների մասին մամուլում դրվածանուղով էին արտահայտվում և իր մասին՝ առանձնապես «Դուրյանը եկավ մեզ ապացուցելու իր յուրատիպ վարպետությունը թե՛ իրեն նվագավար և թե՛ իրեն կոմպոզիտոր...» (Paris Images musicales), «Դուրյանը մեծ երաժիշտ է: Նա բարձր ճաշակի օրինակ է տալիս...» (Paris Cri de France), «...Դուրյանը մի անուն է, որ պետք է մնա երաժշտության պատմության մեջ: Նա զտարյուն այն տաղանդներից է, որ պետք է գրավի հասարակայնությանը...» (Paris Cri de France), «Օհան Դուրյանը լիցքավորում է իր երաժիշտներին և ունի յուրաքանչյուրին իր կրակը փոխանցելու, նրանցից առավելագույնը կորպելու վարպետություն...» (Կոստանդնուպոլիս), իսկ ահա ինչ է գրում Ամստերդամի «Het Vrije Volk»-ը. «...Դուրյանն իրեն նվագավար հանձարեղ է...»: Սա գեռ հիսնականների վերջերին էր:

Ում չին ոգուրի այս բնորշումները, երաժշտական ոլորտներում մեծ հեղինակություն ունեցող անվանի գործիշ-

Ների կարծիքներն ու գնահատությունները, բայց նա հեռու էր հաջողություններից գլխապույտ ունենալու մարդկային թուլությունից:

Այդ տարիներին նա համերգներով հանդես եկավ Ֆրանսիայում, Թուրքիայում, Հոլանդիայում:

Ցուրաքանչյուր հանդիպումը դասական բարձր երաժշտության պահանջն ունեցող հանդիսականի և մեծ համարում ունեցող նվազախմբերի, կատարողների, երգիչների հետ նրա համար ճանաշման մի նոր աստիճան էր: Եղան նաև մշտական աշխատանքի հրավերներ, խոստումնալից առաջարկություններ, ինչպիսին Կոստանդնուպոլիսի կոնսերվատորիային էր, երբ երկրորդ անգամ համերգ ունեցավ այնտեղ:

Սակայն իր ապագա ծրագրերին հետամուռ՝ նա գերադասում էր ղեկավարել առանձին համերգներ: Դա անհրաժեշտ փորձի ձեռքբերման յուրօրինակ միջոց էր, գործնական վարժեցման հրաշալի դպրոց: Նա անպայման պետք է անցներ այդ դպրոցը, քանի որ, իրավամբ, առանձնահատուկ իմաստ ու կարևորություն էր տալիս նվազավարի, ասել է թե՝ երաժշտություն վերակերտողի գերաշնորհ կոչմանը:

Գիտեր, որ արվեստում իր երազ բարձունքին հասնելու համար անցնելիք ճանապարհ ուներ: Եվ այդ դժվարին վերելքն իրենից պահանջում էր մասնագիտական անթերի վարպետություն:

Ահա ինչու, այդ տարիներին իր ժամանակը նա հիմնովին տրամադրեց նվազավարության ամենանրին գաղտնիքների կատարյալ ուսումնասիրմանն ու յուրացմանը:

Մասնագիտական փորձառության և վարպետացման դասերը Ֆրանսիայում նրա համար ապահովեցին հայտնի երաժշտաներ Ռոժե Դելորմիերը և Ժան Մարտինոնը, որոնք նշանակալի դեր խաղացին Դուկյանի ստեղծագործական կյանքում: Նա արդեն եվրոպական շափանիշների նվազավար էր, որի թե՛ առաջընթացն էր ակնհայտ և թե՛ հաջողություններն անհերթելի:

Աշխարհի որևէ ծագում, հասարակական որևէ միջավայրում հանգամանքները դիմագրավելու կամքի, անհատականական, ստեղծագործական կերտվածքի լիարժեք դրսնորմանք է, որ օժտված, տաղանդավոր մարդը նվաճում է հոգակ:

Հանկարծական, աղմկոտ մուտքերն ու վառվուն փայլատակումները հաճախ չեն լինում տեսական կամ շարունակական: Այս իրողությունը լավ գիտեր Օհանը ու նաև սթափ էր նայում այն ճշմարտությանը, որ ինքն անանց արժեքներով ու անուններով հոչակված Փարիզում էր ամրապնդում իր իսկական վերելքի աստիճանները:

Բնատուր ջանասիրությունն այն լավագույն որակն էր, որ նա ներդաշնակորն զուգակցում էր օծվածության հետ և երբեք չէր հրաժարվում ամենադժվարին ծրագրերի իրագործումից: Նպատակամետ հաստատակամության այդ գիծը վատահություն էր ներշնչում նաև հայրենակիցներին, ովքեր հովանավորում էին նրա համերգային գործունեությունը:

Նրա մտերիմները գիտեին, թե որքան սահմանափակ էին երիտասարդ արվեստագետի հնարավորությունները առօրյա զվարճությունների, հանգստի և շատ ու շատ հաճույքների համար:

Ողջ էությամբ երաժշտության մեջ սուզված՝ նա կամովին գրկում էր անձը մի քաղաքում, որը հագեցած էր կյանքի ամենապուրախ ու գեղեցիկ ոիթմերով:

Սակայն, որքան էլ զրազված, նա չէր թերանում հաճախ մասնակցել հայոց շրջանակներում տեղի ունեցող հայրենակցական միջոցառումներին:

Ահա, նման երեկովիներից մեկի ժամանակ էր, որ Մարսլում հանդիպեց գեղեցկատես, մանկամարդ օրիորդ Ալիսին, տեղի օպերային թատրոնի ապագա մեներգչուհուն, որը տարիներ անց դառնալու էր իր կյանքի ընկերուհին:

Այն ժամանակ մտքովն անգամ չէր անցնի, որ նվազակցելով նազելի աղջկան, մի զերմ ու քնֆուշ զգացմունք էր արթնացրել նրա սրտում:

Ինչեւ, այսպիս անցան տարիները: Ինքն արդեն ձևավորված երաժշտ էր, արվեստում արդեն որոշակիորեն ինքնահաստատված: Եվրոպան իրեն տվել էր ամենակարևորը՝ կանաչ ճանապարհ: Բազում ծրագրեր կային ու կար ստեղծագործական եռանդ: Եվ ահա ճակատագրական մի առիթ նոր ուղի ուրվագծեց իր առջև:

Ուղևորություն Հայաստան...

Ինչպես էր պատկերանում իրեն այդ ճամփորդությունը՝ Յ Խուզան Մահաեսյան

Ժանոթության նպատակով այցելություն նախնյաց երկիր, թե՞ ուխտագնացություն՝ բառի իսկական իմաստով։ Սակայն, հոգում թաքրուցյալ խորհուրդ ուներ, ինչը երբեք չէր արտահայտել։ Նա մտադիր էր մնալ Հայաստանում, և դա վաղուց խմորված ծրագիր էր։

Ուրախ էր ընձեռված պահի և հնարավորության համար, Ամեն դեպքում, ինքն առաջին անգամ ոտք պիտի գներ հայրենյաց հողին, պիտի տեսներ լեռն Արարատ, որի ձյունամած գահից կենաց ու սիրո հավերժական հույսն է մաղվում հայոց վրա։

Այս գիտակցումն իրեն անիմանալի, աննկարագրելի հույզ էր պատճառում։

1957 թվականն էր և իրեն ներկայացել էր ճակատագրական այդ պահը ո՛չ իրեն պատեհություն, այլ օրինաշափորեն։ Երկի այդպես էլ պիտի լիներ։

Հայոց սկիուռքի պայման միասնության, ոգեղեն պատվարի, Սփյուռք-Հայրենիք կապերի ամրապնդման առաջելությամբ Փարիզում էր գտնվում Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն 1-ինը։ Տեղի հայության համար դա բացառիկ իրադարձություն էր և շատերն էին այդ օրերին ձգուում նրա աջը համբուրելու պատիվն ունենալ, Երջանիկ մի ընձեռումով Օհանը հանդիպեց Վեհափառին, ինքնաներկայացման համար նվիրեց իր մի ճայնապնակը ու երկյուղածորեն խնդրեց հնարավորություն ստեղծել Հայրենիք այցելելու։

Հայտնի է, որ այն ժամանակներում նման խնդիրները հեղտությամբ չէին լուծվում և դա, եթե ո՛չ միակ, ապա գոնեամենահուսալի ճանապարհն էր՝ արգելքները հաղթահարելու։

Կաթողիկոսը ոչ միայն շմերժեց, այլև ավելին՝ արգեն Հայրենիքում նրան, դաշնակահար Բաֆֆի Պետրոսյանին ու գրող Անդրանիկ Մառուկյանին ընդունեց էջմիածնում։

## ՃԱՆԱԳԱՐՀ ԴԵԳԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Այն ամենը, ինչ գիտեր ոգեղեն Հայրենիքի մասին, գրքային էր, պատճենագիր գաղված։ Ուստի և՝ օր առաջ ուզում էր սեփական աշքերով տեսնել իր երազանքի իսկական պատերը։

Եղավ այսպես։ 1957 թ. օգոստոսին Մոսկվայում տեղի էր ունենում ուսանողական-երիտասարդական միջազգային փառատոն, որին մասնակցող ֆրանսիական պատվիրակության կազմում էին նաև հայազգի արվեստագետներ՝ դաշնակահար Բաֆֆի Պետրոսյան, նվազավար Օհան Գուրյան, նկարիչ Ռիշար Ժերանյան, պարուհի Ալիս Պոյաճյան։

Այն, ինչ կատարվեց Կրեմլի սյունազարդ դահլիճում, վեր էր ամեն սպասումից։

Նվազավարական հարթակին Օհան Գուրյանն էր, գաշնամուքի մոտ՝ Բաֆֆի Պետրոսյանը։ Մրագրում՝ Ռախմանինովի շ-րդ դաշնամուրային կոնցերտը։

Հեղինակային մտահղացման գեղարվեստորեն անթերի մատուցում, հանդիսատեսին պարզեած կատարյալ վայելք։

Դահլիճը թնդացող ծափողզույններով ընդունեց երաժիշտակատրողին և հատկապես նվազավարին, որն ամրող ղեկավարման ընթացքում ասես երաժշտություն էր կերտում։

Տպագրությունն, իրոք որ, ցնցող էր. այդպես են վկայում և մամուլը, և ականատեսները, այդ թվում՝ նաև Հայաստանի պատվիրակության անդամները։

— Մենք առանձնահատուկ զգացումով, հպարտությամբ էինք համակված։ Սփյուռքի երիտասարդ հայ արվեստագետները բացառիկ ճաշակ ու վարպետություն դրսնորեցին։ Օհանը, իրոք որ, գերեց։ Ողջ էությամբ՝ ինքը երաժշտություն էր, խորապես պոետիկ և միաժամանակ տիրական։ Դահլիճը պարզապես հմայված էր, — պատմում է անվանի լրագրող, արձակագիր Կլարա Թերզյանը։

Տպագրված էր նաև Օհան Գուրյանը։ Դա նրա առաջին հանդիպումն էր խորհրդային երաժիշտների ու երաժշտասերների հետ։ Հետագայում, երբ առիթ եղավ շուրջ մեկ տասնամյակ համերգներ ղեկավարել Խորհրդային Սիության բազմաթիվ քաղաքներում, հանդիս գալ ամենատարբեր նվազախմբերի հետ, նա պիտի խոստովաներ, որ հանդիսատեսի հետ փոխազարձ համակրանքի ու վստահության կամուրջը հիմնվել էր մուկօվյան այդ առաջին հանդիպումների ժամանակ։

Այստեղ արդեն նրանց՝ Օհանի և Բաֆֆիի համար հոգացողներ կային՝ ի գեմս մեծանուն կոմպոզիտոր Արամ եա-  
35

շատրւանի և լեռն Խաչատրյանի, ովքեր սիրով ու մեծահոգաբար կազմակերպեցին նրանց ելույթները Մոսկվայի ուղիոսիմֆոնիկի հետ:

Եվ այսպես, փառատոնի օրերին, ունենալով Ամենայն Հայոց կաթողիկոսի հրավերը, Սփյուռքի երկու հայ երիտասարդ երաժիշտներ ոտք դրեցին Հայաստան:

Բաֆֆի Պետրոսյանի համար դա առաջին այցը չէր: Այստեղ նա ազգակից բարեկամներ էլ ուներ: Դեռ 1956 թվականի նոյեմբերին, Քրանսահայ ճանաշված դաշնակահարը եղորհդային Միությունում համերգային իր շրջագայությունն սկսել էր Երևանից: Սիմֆոնիկ նվագախմբի հետ ունեցած մի քանի համերգներով ու մենահամերգներով նա սքանչացրել էր հայ երաժշտասերներին:

Իսկ Օհան Դուրյանը, առաջին անգամ լինելով, զարմանալի հուզմունք ու սրդողածություն էր ապրում:

Ինչպես էր պատկերացնում նա Հայաստանը և ինչպես տեսավ: Ի՞նչ զարմանալի զգացողություն, կարծես ծնվել ու մեծացել էր այստեղ և ինչ-որ աներեւութ թելեր իրեն վազուց, վաղուց կապել են այս հող ու շրի հետ: Թվում էր, ամեն ինչ տեսել, մտապահել էր հեռավոր, աղոտ մի հիշողությամբ և հիմա վերականգնվում էին պատկերները:

Հայրենիքն այլևս երազ չէր հեռուներից ժամանած հայորդու համար, այլ իր անկրկնելի գեղեցկությամբ հառնող իրեղեն գոյություն, որտեղ համառ տքնությամբ լինելիության իր պատմությունն էր կերտում իմաստուն ու աշխատասեր մի ժողովորդ:

Շրջագայություն նախնաց երկրում, հանդիպումներ, ժանրություն: Ամենուր նրանց ընդունում էին որպես հարազատների, որոնք ճակատագրի բերումով ապրում ու ստեղծագործում էին Սփյուռքում:

Օհանը բառեր չէր գտնում նկարագրելու տեսածն ու ընկալածը: Հարազատ շունչ կար չորադին, տաք ու ծանոթ զգացում՝ ասես ինքն անբաժանելի մի մասնիկը լիներ այս իրողության: Իսկ Հայաստանը... իրոք որ, չին ու նոր արժեքների օրրան էր, անձեռակերտ ու ձեռակերտ հրաշքների մի թանգարան բաց երկնիք տակ:

Հիմա արդեն հասկանալի էր, թե ինչու արտերկրում ապ-

րող ամեն մի հայի կարոտաբաղձ երազանքն էր այս փոքրիկ երկիրը և որ մեկ ամիսն այնքան սուղ ժամանակ էր, որպեսզի դրսել մեկը կամ զբոսաշրջիկը կարողանար ամբողջական պատկերացում ու վայելումն ունենալ դարերից ժառանգած անգնահատելի հարստության, պատմամշակութային, հոգեր կառուցից, ժողովրդի ստեղծագործ նկարագրի, ազգային կերտվածքի ու նվաճումների մասին: Հարկավոր էր ապրել այստեղ՝ ընկալելու, հասկանալու համար այն առեղծվածը, թե տիեզերական այդ ինչ ուժ, ինչ ոգի էր առաջնորդում թանկ ու անդառնալի կորուստներով հարուստ, ցավի մեջ իմաստնացած այս ժողովրդին, որն արյան, ավերի դեմ իր դարավոր դիմակայմամբ, իր անվերջ ու անընդմեջ մաքառումով կարողացել էր հասնել այսօրվան:

Ապրել իր ժողովրդի հետ և ողջ հոգով ու կարողություններով ժառայել նրան. սա էր իր վերջնական վճիռը:

Անմոռանալի էին համերգները Հայաստանի Փիլհարմոնիկ նվագախմբի հետ, առաջին նվագավարումը հայ բեմում, որով մեկընդիշութ նվաճեց երաժշտասեր հասարակայնության սիրտն ու համակրանքը:

Բեթհովենի ու Ռախմանինովից գործերի անբռնազրու, խստառձ մեկնարանումը երիտասարդ արվեստագետի բնութագրական ինքնատիպության խոսուն հայտն էր և, բնականաբար, դա եղավ թե՛ նվագախմբի և թե՛ մայր բեմում բազմաթիվ հեղինակություններ տեսած հայ հանդիսատեսի հետ հրաշալի, փոխհասկացված մերձեցման նախապայման:

Մեկ ամիս անց, մշտական աշխատանքի հրավերով, հայ-ֆիլհարմոնիայի գլխավոր նվագավար Միքայել Մալունցյանի կողքին, հանձին Օհան Դուրյանի՝ հայտնվեց երկրորդ նվագավար: Նա արդեն Հայաստանի քաղաքացի էր, այդուհետ լիիրավ ու անբաժանելի մասը հայ մշակութային մտածողության և իրողության:

Սա շրջադարձային նշանակությամբ մի փաստ եղավ Դուրյան-նվագավարի կյանքում, քանի որ նրա հետագա համընդհանուր ճանաչումն ու փառքը, ըստ էության, մեկնարկ ստացավ մայր Հայրենիքից:

Այստեղ, ինչպես և պետք էր սպասել, նոր շունչ ու բովանդակություն ստացավ նրա նվագավարական ծրագրը և,

որում եվրոպական, համաշխարհային դասականների հանրաճանաչ գործերի կողքին, իրավացիորեն ու անհրաժեշտաբար, տեղ գտան ազգային դասական ու ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները:

Նոր ու գեղեցիկ մի աշխարհ էր դա: Ազգային նկարագիրներկայացնող, խոհափիլիսոփայական ու քնարական ի՞նչ հզոր, շարժունակ ու ներուժային պատկեր ուներ հայ երաժշտական մշակույթը, որին մինչ այդ ժանոթ էր հպանցիկորեն:

Առասպելի վաղեմությամբ դարերի խորքերում սկզբնավորված և մշտահոս մի բնթացքով՝ այն զուլավել, ինքնամաքրվել, խտացել ու ամրողացել էր դասականորեն, ինչի վառ օրինակն ու վկայությունը Սայաթ-Նովայի, Կոմիտասի մեծահարուստ, անգնահատելի ժառանգությունն էր, Ա. Տիգրանյանի մեծակտավ, անգուգական և, իրոք որ՝ համաշխարհին հնչեղության «Անուշը», իրենց նախորդող և իրենցից հետո եկող հայ երաժշտական մշակույթի պայծառ ցոլանքներով հանդերձ: Այդ ավանդույթներն են սնել Ալ. Սպենդիարյանի, Ա. Խաչատրյանի բարձրարժեք, մնայուն, ազգային հենքով ստեղծված գործերը:

Հաղորդվելով հայ հին ու նոր ժամանակների երաժշտական արժեքներին, համակվելով այդ ամենը ստեղծագործաբար յուրացնելու ձգտմամբ, Դուրյանը պետք է համոզվեր, որ ինչպես նարեկացու տիեզերաշունչ պոեզիայում, մեր երաժշտական մտածողության մեջ նույնպես գերակա են հոգեոր ու իմացական համամարդկային խտացումները:

Ժամանակակիցների ու մամուլի վկայությամբ՝ նրա և ո՞չ մի համերգն անտարբեր շեր թողնում երաժշտասերներին:

Հայ, ոռւս և արեմտյան դասականների ստեղծագործությունների վարպետ մեկնությունները, երաժշտական հարուստ իմացությունը, արտիստական զարմանալի գրավիչ պահպաժքն ու երաժշտական ինքնատիրապետությունն այն արժեքավոր որակներն էին, որ շահեկանորեն առանձնացնում, անհատական հնչողության էին տանում Օհան Դուրյան-նվագավարի անունը:

Հարկ էր տեսնել, թե քեմում ինչ կերպարանափոխություն էր ապրում, երբ ողջ էությամբ երաժշտության ու նվագա-

խմբին համաձույլ՝ խոսուն և արտիստիկ ներքին բուռն շարժունակությամբ, նա ունկնդրին մոգականորեն ուղեկցում, առաջնորդում էր ոգեղենության ոլորտները: Մեկ համոզող ու խոհուն, պահերի մեջ ասես քարացած, մեկ պոռթկուն ու պարտազրող, որպես զորեղ հոգեհմա: Այս, հանդիսականին ի տես, զուսապ ու սահուն շարժումներով տեսլական կոթող կերտող, երաժշտություն ձևավորող փոքրամարմին մարդը նվագավարական հարթակի վրա կարծես վերաճում էր ինքն իրենից, դառնում թեսածող հսկա:

Երաժշտասեր Հայաստանը, իրավ որ, սիրեց իր Օհանին: Նվագավարման այս շրջանը հատկանշական եղավ բազմաթիվ ելույթներով ոչ միայն հայրենիքում: Նրան սպասում էր համերգային մեծ շրջագայություն Խորհրդային Միության քաղաքներում և հանրապետություններում:

Նրա ղեկավարումներն ամենուր թողնում էին արտակարգ տպավորություն և դա պատահական չէր, որովհետև Օհան Դուրյանը երաժշտասերներին պարգևում էր իսկական երաժշտության կենսատու լույսն ու շերմությունը:

«...Հուզական դյուրահաղորդությունն, մտքի խորություն՝ ահա ինչն է հատկանշական Դուրյանի կատարողական կերպին...»— գրում է մոսկովյան «Սովետսկայա կուլտուրան», կիտվայի պահանջութ արվեստասերի համար նվագավարը «...շատ բարձր վարպետության երաժիշտ է...», Ռիգայի «Յինյան» նշում է, որ «Դուրյան-նվագավարը գրավիչ անձնավորություն է, կարելի է ասել՝ անսովոր: Երաժշտությունը նրա հոգում է, իր արտահայտիլ ձեռքերի մեջ: Արտակարգ երաժիշտ է...», իսկ ահա «Վեհերնի կենինգրադը» լիահույս է ու վստահ, որ ի դեմս Դուրյանի, Խորհրդային մշակույթը արժանի համալրում է ունեցել. «...Ճշմարիտ երաժշտությունը, նվագախմբի հրաշալի տիրապետումը, նրա վարպետ, կրօտ, սակայն ոչ ճնշող ղեկավարումը հաստատապես վրատահեցնում են, որ խորհրդային արվեստագետների աստղաբույլը հարստացավ նվագավարական արվեստի արժանավոր ներկայացնությունը»:

Հայաստան գալու երկրորդ տարում արդեն Օհան Դուրյանը նշանակվեց ֆիշարմոնիայի գլխավոր նվագավար:

Փոփոխություն եղավ նաև նրա անձնական կյանքում:

հնչպես պետք է ենթադրել, դժվար էր ապրել միայն ստեղծագործական հոգսերով ու հաջողություններով։ Նա կարիք ուներ ընտանեկան շերմության, մտերիմ շնչի ու սիրող սրտի։

Ահա և արվեստի երկրպագուների մեջ նա հանդիպեց իր կյանքի ընկերուհուն։ Գեղարվեստաթարբական ինստիտուտի ուսանողուհի Քնարիկ Հովհաննիսյանն էր ընտրյալը։

Համերգային ելույթների գործած տպագորությունը, օրեցօր աճող ճանաշումը, հանդիպումներն ու ծանոթություններն արվեստասերների հետ գրավիլ ու լուսավոր մի պասակ էին հյուսում նվագավարի անվան շուրջ և շատ բնական էր, որ երկրպագուներով շրջապատված՝ նա այնուամենայնիվ պետք է լուծեր ընտանիք կազմելու խնդիրը։ Քնարիկն այն վառ բնագործությունն էր ու անմիշական կերպարը, որին սիրեց և որի հետ ամուսնացավ։

Այս միությունը յուրօվի իմաստավորեց երաժշտի կյանքը։ Քնարիկը իրատեսորեն էր գնահատում ամուսնու հնարավորությունները, կարողությունները, որպես մշակութային ինքնատիպ երևույթի՝ տեսնում նրա դերն ու տեղը և, իհարկե, զարմանալի չէ այն կնոշական ճիշտ, գուցեն ինքնազոհ գիտակցումը, որով արվեստում իր հետագա անցնելիք ճանապարհը, որոշ առումներով, ենթակայեցրեց նրա վերընթացին։

Շուտով երիտասարդ ընտանիքը համալրվեց ու թերևս ոչինչ համեմատելի չէր այն բերկուանքին, այն մեծագույն երջանկությանը, որ նրանց պարզեց նարեկ որդու ծնունդը։ Դա նոր աշխարհ էր, հոգու մի նոր, բովանդակ թրթիռ, անբացարելի զգացում։ Եվ ամեն մի սիրող հոր պես, այդ փոքրիկ, անմեղ գոյության մեջ, նա թափուն խանդաղատանքով գորգուրում էր իր բարի հույսերն ու երազանքները։

Իբրև գիտակոր նվագավար, մի քանի տարի ղեկավարելով Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբը, և այդ հրաշալի կոլեկտիվը բարձրացնելով կատարողական մի նոր աստիճանի, Օհան Դուրյանը միաժամանակ համերգային-ստեղծագործական ընդգրկում գործունեություն ծավալեց արդեն նաև միութենական սահմաններից դուրս։

Նրա ծրագրում, իրենց բազում արժանիքներով ու կշռությով, առանձնանում էին ոչ միայն եվրոպական դաստիան

հեղինակների, այլ նաև հայրենական կոմպոզիտորների սիմֆոնիկ կերտվածքները, ինչպես արդեն դասականի շարքերն անցած՝ Ալ. Սպենդիարյանի սյուիտները, Ա. Խաչատրյանի ստեղծագործությունները, այնպես և Էդ. Միրզոյանի, Ալ. Հարությունյանի, Էդ. Հովհաննիսյանի, Կ. Օրբելյանի, Զ. Տերթագեսույանի, Ալ. Աճեմյանի գործերը։ Համերգային իր բազում շրջագայությունների ժամանակ օտար ունկնդրին նա ամենամեծ պատասխանատվությամբ ու պատվախնդրությունների ներկայացնում ոչ միայն հայ դասական, այլ նաև ժամանակակից երաժշտական մշակույթը՝ ի գեմս մեր տաղանդաշատ կոմպոզիտորների, որոնցից շատերի հետ ուներ սերտ մտերմություն։

Վաթսունական թվականների սկզբներին միանգամից ընդլայնվեց համերգային ուղևորությունների շրջագիծը, ընդլայնվելով ողջ Արևելյան եվրոպան՝ Լեհաստան, ԳԴՀ, Չեխոստրկելով ողջ Արևելյան եվրոպան՝ Բուլղարիա, Շարավալալիկիա, Հունգարիա, Թուրքիա, Հայաստան, Վրաստան, Ադրբեյջան, Արևմտյան Ասիա... ամենուր հայ արվեստագետը սպասված, թանգագին մի հյուր էր, ում երաժշտական վաստակի համբավն արդեն ժանոթ էր իրենց։

Ժամանակի մամուլը վկայում է Դուրյանի, բառի բուն իմաստով՝ հաղթական երթն ու հաջողությունները։ Զպեսք է մոռանալ, թե նրանից առաջ ովքեր էին հանդես եկել այդ նշանավոր բեմերում և որպիսի կարողություն ու որակ էր պահանջվում դափնեվորված ու տիտղոսավոր անունների կողքին առավելապես փայլելու համար։

Ահա և Օհան Դուրյանը՝ ինքնահաստատված ու վստահ, որպես մի հրաշալի վարպետ, ում ծափահարել էր և՛ Արևմուտքը, և՛ Արևելքը, ահա փոքրամարմին մոգը, որ հընթացս առինքնեց նաև Արևելյան եվրոպան։

Վկայությունները ժամանակի մամուլում են. ինչպես ասենք, Չեխոստրկակայի տասնյակ քաղաքներ՝ գեղատես ու երաժշտական Պրահայի գլխավորությամբ, հիացմունքով ընդունեցին ու ճանապարհեցին հայ նվագավարին, առանց երկմտելու, որ շեխ երաժշտական վայելեց միշազգային շափումների մի արվեստագետի երաժշտական խորիմաստ մեկնությունները, նվագավար, որն իր բոլոր համերգներին «առաջին իսկ պահից իշխում, տիրում էր թե՛ նվագախմբին և թե՛

հանդիսատեսներին...», «արտասովոր, բացառիկ նվազավար, գերող ու ոգեկորող...», ակարծես թե ապրում է միայն ու մի- այն երաժշտության մեջ...», «...միջազգային մասշտարի դի- րիժոր է Դուրյանը...», «Կատարելության գագաթ էր Շուտա- կովիչի 5-րդ սիմֆոնիայի դուրյանական մեկնությունը...», Նման հայտարարություններն ու կարծիքները երաժշտասեր հասարակայնության բարձր գնահատանքի հավաստումն էին:

Զեխոսլովակիա կատարած մի քանի համերգային այցե- լությունների ժամանակ ղեկավարելով Պրահայի սիմֆոնիկ ուղիումֆոնիկ, Բրատիսլավայի Փիլհարմոնիկ և ուղիո- սիմֆոնիկ, Թրնոյի, Օստրավայի Փիլհարմոնիկ, Կարլովի Վա- րի սիմֆոնիկ նվազախմբերը, Օհան Դուրյանն այնքան խորը անմոռանալի տպավորություն թողեց, որ հանդիսատեսը չէր կարող փափագ շնայտնել՝ նման դիրիժորին նորից ու նո- րից տեսնելու իր երկրում:

Պետք է ասել, որ Դուրյանի համար նույնպես արժեքավոր էին այս ելույթները, ժանոթությունը երաժշտական հրաշալի ավանդույթներով հարուստ չեխ և սկզբակյան մշակույթին, ինչը խորապես նպաստեց ավելի ճիշտ հասկանալու մեծ դպրժակի, Սմետանայի ստեղծագործությունների երաժշտա- կան կոլորիտը: Նրա ծրագրում յուրահատուկ տեղ ունեցավ հատկապես Դվորժակը, որի սիմֆոնիայի հրաշալի ու հոգե- մոտ մեկնություններով դեռ շատ էր հանդես գալու նվազա- վարը տարբեր երկրներում:

1964-ին՝ Բուխարեստի, Արագի, Բրաշովի, Տիմինչոուա- րայի Փիլհարմոնիկ նվազախմբերի հետ Ռումինիայում Դուր- յանի ներկայացրած համերգների ու «Հոգիներ բոցավորող նվազավարի» գործած արտակարգ տպավորության մասին մամուլը դեռ շարունակում էր իր խոսքն ասել, երբ նա հան- դես էր գալիս արդեն մեկ այլ երկրում: «Նման բան հազվա- պիսի ցնծությամբ ընդունեն դիրիժորին, ինչպես երեկ նեղավ...»: «Որպես մի քանդակագործ, իր տասը մատներով նա երաժշտություն էր կերտում...», «Իր զգայուն ձեռքերով ձեւավորում, կառուցում էր երաժշտության հնչողականու- թյունը...»:

Անմոռաց էին Սոֆիայի Փիլհարմոնիկի հետ համերգները:

Դուրյանի անթերի մատուցումների մասին բուլղարական մամուլը գրում է. «...Մենք այն տպավորությունն ունենք, կարծես ինքն է հեղինակն իր ղեկավարած դործերի...»:

Բառացիորեն՝ համերգային հրավառություններ էին հուն- դարական սիմֆոնիկ նվազախմբերի հետ 1965-ի ելույթները: Դուրյանը նվազավարական վարպետության օրինակ էր, երա- ժշտների կարողությունները վերհանող, հանդիսատեսներին հուզող ու համոզող: «...Առաջնակարգ դիրիժոր է Դուրյանը, որի ազ ձեռքը երաժշտություն է քանդակում, ձախը՝ ձեւ- վորում է այն...», «Նվազախմբին ղեկավարելիս, նա պար- զապես ստեղծագործում էր...»:

Նմանատիպ տպավորություն ունեին Հարավսլավիայի երաժշտասերները Բելգրադի ուղիումֆոնիկ և Լյուբլիա- նայի Փիլհարմոնիկ նվազախմբերի համերգներից, որոնց դիրիժոր Օհան Դուրյանը ուղղակիորեն գերել էր հանդիսա- տեսին Պրոկոֆևի 3-րդ սիմֆոնիայի արտակարգ մաքրա- հունը, զգոր ու խորիմաստ իր մեկնաբանությամբ:

Իսկ Վարշավայում՝ նվազավարի ոգեշտնը, առինքնող կերպով, հնչողական առկեցուն մեկնումներով ու ցուցաբե- րած վարպետությամբ հիացած, երաժշտական շրջանակները նրան տեսան իրեն Արևելյան Եվրոպայի Տուսկանինի: «Ռուս Մուզիկանին» այդպես էլ գրեց, շեշտելով, որ Օհան Դուրյանը մոգականորեն դյութել է թե՛ բեմ, թե՛ դահլիճ:

Այս տպավորությունը շմարեց կեհաստանի բոլոր այն քաղաքներում, ուր սիրահոժար հանդես էր գալիս հայ նվա- զավարը՝ ղեկավարելով Վարշավայի, Կոտովիցեի, Բգովի, Լոձի, Կրակովի, Վրոցլավի, Պոզնանի Փիլհարմոնիկ նվա- զախմբերը:

Դա արվեստագետի բեղմնավոր վաստակի ու հաջողու- թյունների հունձքն էր, որի պսակյալ հատվածներից մեկը Դեմկրատական Գերմանիայում ղեկավարած համերգներն էին:

Այս երկրում Օհան Դուրյանի դիրիժորական գործունեու- թյան պատմությունը թուուցիկ լինել չի կարող, որովհետև իր կյանքի նշանակալի մի հատված ուղղակիորեն կապվեց Արե- վելյան Գերմանիայի երաժշտական, մշակությային իրողու- թյան հետ:

Խակությունը սա էր.

1962 թվականին նրան հրավիրեցին Հայպցիգ՝ ղեկավարելու հոչակավոր «Գևանդհառուզ» նվագախմբի համերգը։ Շոստակովիշի, Ռավելի ու Թորոգինի սիմֆոնիկ ստեղծագործությունների զարմանալիորեն ինքնատիպ, ճշգրիտ ու երաժշտականորեն հագեցած դուրյանական մեկնարանությունները անտարբեր չէին թողնելու ո՛չ բարձրաճաշակ ունկնդրին և ո՛չ էլ մասնագետներին։ Հատկապես աշքի էր ընկնում նվագախմբի առկա և ներուժային կարողությունների նրա խորը ըմբռնումն ու երաժիշտների հետ փոխհասկացության հրաշալի մթնոլորտ ստեղծելու ունակությունը։ Այն, որ Դուրյանը ղեկավարում էր առանց պարտիտուր և առանց նվագավարական փայտիկի՝ կատարյալ ճշգրտությամբ և նյութի անթերի մատուցմամբ, ուղղակիորեն հիացմունքի էր արժանի<sup>1</sup>։

Այս համերգից հետո «Գևանդհառուզ» տնօրինությունը ՕՀան Դուրյանին առաջարկեց մասնակցել նվագախմբի գեղարվեստական ղեկավարի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին։ Մինչ այդ, արդեն երկու թեկնածու կար այդ տեղի համար, մեկը՝ Բեռլինի սիմֆոնիկ նվագախմբի ղեկավար Կուրտ Զանդերլինգն էր, մյուսը՝ Բեռլինի «Կոմիշե» և Լայպցիգի օպերային թատրոնների երաժշտական ղեկավար Վացլավ Նոյմանը, երկուսն էլ առաջատար դիրիժորներ, որոնց վաստակն ու ներդրումը ակնհայտ էր։

Երբ որոշվեց երրորդ թեկնածուն, ի ոեմս Դուրյանի, նրան առաջարկվեց երկու համերգների ղեկավարումով սեպտեմբեր ամսին կատարել «Գևանդհառուզ» նոր համերգաշրջանի բացումը։ Համերգներից մեկն անպայման պետք է ծրագրում ունենար Մոցարտի և Բրուկների սիմֆոնիաները։ Այդպիսին էր մրցույթի պայմանը։ Մյուսի ծրագիրը Դուրյանն ինքն էր առաջարկել՝ Շոստակովիշի 12-րդ և Բերլիոզի «Ֆանտաստիկ» սիմֆոնիաները։

<sup>1</sup> Այստեղ պետք է հուշեմ ընթերցողին՝ ուշադրության առնելու գրքում կետեղված «Փաստագրական պատառիկներ ՕՀան Դուրյանի ղեկավարած բազում համերգների մասին արտասահմանյան մամուլում հրապարակված նյութերից» բաժինը։ Այն տակիս է հոչակավոր նվագավարի՝ նախ 1962—69 թ., ապա 1969—91 թ. գործունեության անկողմնակալ զնահատակի մոտավոր պատկերը։

Անտոն Թրուկների բարդ ու բավական ծավալուն սիմֆոնիկ երկի ներառումը մրցույթային ծրագրում բոլորովին էլ պատահական չէր. այն յուրահատուկ մի «փողծաքար» էր բոլոր նվագավարների համար։ Օհան Դուրյանն առաջին անգամ պետք է ղեկավարեր 19-րդ դարի ավստրիացի մեծանուն կոմպոզիտորի գործը, այնպես որ, պատասխանատվությունը կրկնակի էր։

...Այն, ինչ տեղի ունեցավ 1963 թվականի սեպտեմբերյան համերգներին, Օհան Դուրյանի դիրիժորական գործունեության մեջ արձանագրվեց, իրավամբ, փառահեղ հաղթանակ։ Համերգներից հետո «Գևանդհառուզի» տնօրենը նրան պաշտոնապես հայտնեց հետեւյալը։ «Նվագախմբի և ժողովրդի ընտրյալը Դուրյանը։ Ակնկալում ենք Ձեր համաձայնությունը պաշտոնն ստանձնելու վերաբերյալ։»

Իհարկե, դրական պատասխան տալուց առաջ Դուրյանը պետք է ճշտեր, թե ինչպիսին կլինի Մուսկվայի վերաբերմունքն այս խնդրին, արդյո՞ք ինքը կստանա կենտրոնի պաշտոնական համաձայնությունը։

Գերմանական կողմը որոշեց Մուսկվայի միջոցով վճռել այդ խնդիրը, իսկ ինքը, ստանալով գալիք համերգաշրջանում «Գևանդհառուզի» մեկ ամսվա բոլոր ութ համերգները նվագավարելու ժանրակիո առաջարկությունը և ճշտելով կատարվելիք ծրագիրը, գալիս է երեան, շարունակելով այստեղ իր մշտական աշխատանքը։

Ինչ խոսք, ինքն անձամբ իրավունք շուներ Լայպցիգի հետ կապ պաշտպանել, հետեւ գործերի ընթացքին։ Նրան առաջարկված էր պաշտոն և բնակության իրավունք մեկ այլ երկրում, ուրևէ համար կ քաղաքացիության ընդունում, պարզ չէ<sup>2</sup>, թե ետրհրդային Միությունում ինչ պատճեններ էին հասնելու արվեստագետի առջև։ Համապատասխան ատյաններում նրան հասկացրեցին, որ այդ մասին մտածելն անգամ պրգելվում է։ Իր ղեկավարումին էլ եղակի չէր։ Իշխանությունները սարսափ ունեին, թե մեր լավագույն ուժերը հոգեգործությունները առաջարկում են աշակերտական անկաշկանդ կանդ ու ինքնիշխան դրսերումներից հետո ալլաս կամովին շեն վերադառնա այնտեղ, ուր համայնավարական թելադրանքի տակ էր նաև մշակութային կյանքը։

Այսն ինչ պարզ էր: Մոսկվան մերժեց խնդիրը, փոխարենն առաջարկելով հրավիրյալ դիրիժորի կարգավիճակ՝ որոշակի ժամկետով: Եվ քանի որ այդ պատասխանն էլ էր ձգձգվել, «Գևանդհառուզ» ստիլված էր եղել գեղարվեստական ղեկավարի պաշտոնն առաջարկել Վացլավ Նոյմանին:

Մեկ տարի անց, արևելաբլուպական մի շարք երկրներում կատարած համերգային շրջագայությունից հետո, Դուրյանը նորից Գերմանիայում էր: Պետք էր իրագործել ութ համերգների վերաբերյալ պայմանագրային ծրագիրը:

Մամուլը բացահայտ համակրանքով նշեց հայ նվագավարի վերադարձը, շմոռանալով շեշտել, որ և նվագախումբը, և երաժշտասեր հասարակայնությունը ուրախ էին Օհան Դուրյանի հետ կրկին հանդիպելու առիթով:

Բեթհովեն, Վագներ, Հայդն, Դվորժակ, Շուտակովիչ, Բրամս... հարուստ ու բովանդակալից էր ծրագիրը, որով հանդես էր գալիս Դուրյանը, բառացիորեն ոգեղեն տոնի վերածելով յուրաքանչյուր համերգ: Լայպցիգ, Բեռլին, Բոնո, ապա նորից Բեռլին... և ամենուր հիացմունք ու շերմագին ընդունելություն: Գերմանացի երաժշտասերը որքան բարձր պետք է գնահատեր մի նվագավարի, որպեսզի նրան միակամորեն համեմատելի տեսներ դարի խոշոր երաժիշտներից մեկին՝ Արթուր Նիկիշին: Ըստ նրա բնորոշման, այդ նմանությունը ոչ միայն երկու նվագավարների իշխող, հիպնոսացնող ուժի մեջ էր, այլ նաև արտօաքինի:

Մի կողմից Դուրյանը զարմացնում էր երաժշտական մեկնարանումների իր աննախադեպ ու անսովոր մոտեցումներով, մյուս կողմից՝ ինքնադրսեկորման բացառիկ հնարավորություններով, զգացմունքայնությամբ, գերող ու կախարդող արտիստական կրթով: Նա այնպիսի փայլով էր ներկայացրել Բրուկների սիմֆոնիաները, որ այդուհետ երաժշտագետները սկսեցին նրան անվանել «Բրուկներյան դիրիժոր, որպիսին ո՛չ թե դառնում», այլ ծնված են լինում»:

Թերեւ, ստեղծագործական իսկական նվաճումների ոգին էր ներշնչում ու առաջնորդում հայ արվեստագետին՝ տարեքի պես հորդացող ուժով և երաժշտական անխառն թաթախածությամբ իրականացնելու բեմական իր առաքելությունը,

դարձյալ ութ համերգով 1965-ի համերգաշրջանում ևս շքեղորեն հանդես գալու «Գևանդհառուզ»-ի հետ:

1966 թվականին Լայպցիգի օպերային թատրոնը դիմում է Օհան Դուրյանին՝ ստանձնելու երաժշտական ղեկավարի պաշտոնը:

Այս անգամ Մոսկվան արգելք չեղավ, իհարկե՛ շտալով նաև լիարժեք համաձայնություն: Մահստրոն աշխատանքը պետք է համատեղեր երևանում և լայպցիգում:

Հարկ է նշել, որ միաժամանակ նա երեք նվագախումբ էր ղեկավարում երևանում՝ ֆիլհարմոնիկը, օպերայինը և ուղիոյի սիմֆոնիկը, որի հիմնադիրը ինքն էր:

Սա զարմանալի մի շրջան էր Օհան Դուրյանի կյանքում, պատկերացնելուն անգամ դժվար է, թե նա ինչպես էր կարողանում նման ծանրաբեռնվածության պայմաններում պահպանել համամասնությունը, ճշգրտորեն դասավորել ծրագիրը, չթերանալ ո՛չ երկրում, ո՛չ դրսում:

Համերգային ղեկավարումներից զատ, միայն փորձերը երաժշտական այդ մեծ կոլեկտիվների հետ տևական ժամանակ ու ահռելի շանքեր էին պահանջում:

Թերեւ այստեղ է, որ պետք է կրկին խոսել Օհան Դուրյան-ֆենոմենի մասին, այս՝ առեղծված, որի գաղտնյաց գաղտնիքը ստեղծագործական ու մարդկային իր կերպի մեջ է:

Հոգեկան ու ֆիզիկական լարված, բայց և ոգեշունչ համարդումով էր գործում Դուրյանը: Եվ, որքան էլ ծանր, այդ ծավալուն գործունեությունն, իրավամբ, հաճույք էր ու բերկրանք մի կողմից, մյուս կողմից՝ նաև շպետք է անտեսել, թե որպիսի կամք էր պահանջվում դիմակայելու այդ ժամանակների կարգերի, համայնավարական ինքնակալության ու անթափանցության արսուրդը և հաղթահարելու այն բոլոր պատճենները, որոնք անպայմանորեն հասնում էին մեծատաղանդ արվեստագետների, գիտնականների, նշանավոր անձանց ճանապարհին:

Այս առումով, նա չէր կարող բացառություն լինել: Կամ, թեկուզ օտար բեմերում առաջներից կամ լավագույններից մեկի անուն վաստակելու իրողությունը: Մի՞թե այդքան հեշտ էր ծրագրեր իրագործել որոշ անվանիների մասնագիտական

խանդի առկայությամբ: Բայց սա մշտապես արդիական երեվութ է արվեստի աշխարհում նույնպես: Կարեռը սակայն, բեմի հրաշքներից մեկն էր. այն, որ ամեն մի տհաճ ապրում, ամեն մի տառապանք արտիստի կյանքում մոռացության է մատնվում՝ հանդիսատեսի պարգևած հիացական առաջին ձայնարկումով:

Դուրյանն էլ անակնկալի շեկավ, երբ Վ. Նոյմանն անթաքուց խանդով կրնատեց հրավիրյալ նվագավարի համերգների թիվը «Գեանդհառուզի» հետ: Սակայն այնքան մեծ էր նվագախմբի համակրանքը նվագավարի հանդեպ, որ բավարարելով երաժիշտների պահանջը, Դուրյանին տրվեց երկու ծրագրով տարեկան չորս համերգ ղեկավարելու հնարավորություն, այն դեպքում, երբ ուրիշ հրավիրյալներ միայն մեկ համերգի իրավունք ունեին:

Ինչ իսոք, նա իր հիմնական գործն ուներ լայպշիգի օպերային թատրոնում, որտեղ առաջին անգամ հանդես եկավ Վերդիի «Արդարի ղեկավարմամբ»:

Տպավորությունն անջնջելի էր: Հանդիսատեսները, որոնք մինչ այդ Դուրյանի արվեստի հմայքը վայելել էին համերգային դահլիճներում, կասկած անգամ չունեին, որ օպերայում նույնպես նվագավարը կփայլի իր ողջ իմացությամբ ու շուրջով:

Այդպես էլ կար՝ նա կարողացավ գերագույն նրբությամբ ու վարպետությամբ համաձուկել նվագախումբ-բեմ-հանդիսատես փոխկապակցված ոգեղեն տիրույթը:

Այդպիսի աննախընթաց հաջողություն էր վիճակված Վագների «Էրնեստին»-ի դուրյանական խորաթափանց, բովանդակալից, քնարական մեկնարանությանը:

Այն, որ Դուրյանը մեծակտավ գործերի հիանալի գիտակ մեկնաբան էր, որը կարողանում է ունկնդրին հասցնել երաժշտությունը՝ նրագույն թրթիռներից մինչև ծավալաշունչ ալիքումներ, աննկատ չեր մերակ:

Ժամանակի երաժշտական մթնոլորտում ամեն մի նորույթ արժանի գնահատություն էր ստանում: Այդպես եղավ նաև հայ նվագավարի դեպքում, որի և ո՛չ մի համերգ կամ օպերային ներկայացում շանտեսվեց, ընդհակառակը՝ նրա գոր-

ծունեռությունը օրվա թեմա էր մամուլի, երաժշտական գնահատողների, հանդիսատեսների համար:

Թերթերը գրում էին, որ Վերդիի «Դոն Կարլոսը» թերևս երբեք այդպես չէր շահել՝ դրամատիկ, հուզաթաթավ արտահայտականության տեսակետից, ինչպես դա եղավ Դուրյանի խորիմաստ ղեկավարմամբ:

Երաժշտական քննադատների միակամ կարծիքով ամեն ինչ պայմանավորված էր երաժշտական հեղինակային մտահղացման մեջ նվագավարի առավելագույն ներթափանցումի և անսխալ ընթերցման վարպետությամբ:

Ընդհանրապես, Դուրյանը սկզբունքային, անվարան մուտքում ուներ (և ունի — Ո. Մ.) մի շատ կարևոր խնդրի հանդեպ, ինչպիսին հեղինակային գործիքավորումներն էին: Նվագավարներից շատերն են փորձել փոփոխություններ մտցնել նույնիսկ ամենաճանաշված կոմպոզիտորների գործիքավորումներում, ջանալով, սեփական հայեցողությամբ, տպավորիչ դարձնել իրենց մատուցումը: Բայց Դուրյանը երբեք չի արել նման բան, համարելով դա ոտնձգություն հեղինակի դեմ, որն, անշուշտ, երբեք չէր կամենա իր ստեղծագործությունը լսել այլ հնչողությամբ:

Այնար է հիշատակել օպերային բոլոր ներկայացումները, որոնք գնահատվում էին շատ բարձր և հատկապես շեշտվում էր նվագավարի բացառիկ հմտությունն ու օժտվածությունը:

Քննադատների ճիշտ բնորոշմամբ՝ Օհան Դուրյան-դիրիժորը օպերա էր մտցրել կատարողական նվագախմբային-սիմֆոնիկ յուրատիպ մի ոճ, որն իրենն էր:

Դժվար է նաև ամբողջական անդրադարձ անել «Գեանդգաուզի» հետ իրականացրած այն բոլոր համերգներին, որոնք, անժխտելիորեն հարստացնելով տվյալ երկրի մշակույթը, միաժամանակ նրա նվագավարական նվաճումներն էին փաստում: «Թեթևասահ», որպես անտառային մի ողի, մոտենում, խոնարհումներ է անում, կանգնում նվագախմբի առջև՝ առանց պարտիտուրի, առանց նվագավարական փայտիկի... Ու երբ սկսում է ղեկավաղել, թե՛ հանդիսատես, թե՛ կատարող երաժշտ, տեսնում ու զգում են, որ իր ներսում կախարդն է, մոգը, որ նա տարված ու արթեցած է երաժամկետ Սահմանայան

թըշտությամբ։ Մոգական ճառագումն իրենից բխում, անցնում է երաժիշտներին, ապա՝ փոխանցվում դահլիճին...»— գոյում, վկայում էին թերթերը։

1968 թվականն էր, Զեխոսլովակիայում՝ խորհրդային զինված ճնշման փաստից զայրացած, ազգությամբ չեմ Վացլավ Նոյմանը, իրեն բողոքի նշան, թողեց Հայպիկն ու անցավ Ֆեղերատիվ Գերմանիա։ Նույն քայլին դիմեց նաև մեկ այլ անվանի չեմ նվազավար՝ Դուրնովսկին, որ ղեկավարում էր Դրեզենում։ «Գևանդհառուզը» դարձյալ դիմեց 05ան Դուրյանին, բացել 68-ի խաղաշրջանը՝ նոյմանի ծրագրով։ Նվազախումբն այլ ծրագիր չէր հասցնի պատրաստել, նոյմանիկ մեկ ամիս էլ չուներ, իսկ ահա Դուրյանը կարող էր անել անկարելին։ Ուրիշ ելք չկար, օպերային ներկայացումներին զուգընթաց, պատվախնդրությամբ ու անմնացորդ մի նվիրումով նա իրագործեց այդ դժվարին խնդիրը, համընդհանուր հիմքումի նոր էշեր ավելացնելով ստեղծագործական իր կենսապատումին։

Հատկանշական ու հիշատակելի էր դեկտեմբերի 31-ի համերգը «Գևանդհառուզի» հետ, նվազախումբն ավանդաբար, ամեն տարի այդ օրը տոնականորեն հանդես էր գալիս Բեթհովենի 9-րդ սիմֆոնիայի կատարմամբ։ Ինչպես հայտնի է, երաժշտական այս հանրահոչակ ստեղծագործության գրական հենքը Շիլլերի «Տաղ ցնծության» ոլ պակաս հայտնի ու սիրված գործն է։

Այս հրաշալի ավանդույթը նախաձեռնել էր Արթուր Նիկոլը 1918 թվականի դեկտեմբերի 31-ին։ Ահա և հոբելյանական 50-րդ համերգը, 05ան Դուրյանի ղեկավարմամբ։ Տպավորությունը ցնցող էր, արձագանքը՝ միանշանակ, ըստ մամուլի վկայության, ավելի լավ մատուցում հնարավոր չէր պատկերացնել։

Նվազախումբը պաշտոնապես շնորհակալություն հայտնեց նվազավարին։ Հեռագրում նշված էր նաև սրտապին ցանկություն միասին աշխատանքը շարունակելու մասին։

Դարձյալ մեկ դիմում հղվեց Մոսկվային, ակնկալիքով, որ այս անգամ գոնե մերժում չի լինի և Դուրյանը հնարավորություն կատանա աշխատել «Գևանդհառուզի» հետ։

Սակայն, վերադառնալով Երևան, նվազավարը հասկացավ, որ իր դեմ այլևս ճանապարհները փակ են լինելու։ Խորհրդային վարագույրը կտրուկ իշավ նրա ստեղծագործական ծրագրերի վրա՝ խափանելով Դրեզենի «Շտատսկապետի» հետ 1969 թվականին Ֆինլանդիա, Նվեգիա, Նորվեգիա համերգային ուղևորության պայմանագիրը։

Այդպես խափանվեց նաև «Գևանդհառուզի» հետ Հարավ-սլավիա մեկնելու ծրագիրը։ Հինգ տարի անց այդպես խափանվելու էր ԱՄՆ, Ճապոնիա համերգային ուղևորությունը։

Ինչեւ։

Նվազախումբն ստիպված էր այդ ընթացքում կատարել այլ ընտրություն՝ ի դեմս Թեոլինի «Կոմիշե» օպերային թատրոնի գեղարվեստական ղեկավար Կուրտ Մազուրի։ Ի դեպ, նա Դուրյանի մոտ երեմն տրտնջում էր, որ Լայպշիցում ինքը միայն ուղիղումքոնիկի համերգները ղեկավարելու ինքը միայն ուղիղումքոնիկի համերգները ղեկավարելու համարկել թագավորությունում, այնին իրական ցանկությունը «Գևանդհառուզի» հետ աշխատելն էր ու չէր էլ թագնում, որ նման հրավեր չի ստանում։ Իհարկե, Մազուրը շահեց։ Հիմա նա միաժամանակ ղեկավարում էր նաև նյու Յորքի Ֆիլհարմոնիկը։ Այդ պատվավոր առաջարկը նա ստացավ «Գևանդհառուզի» նյույորքյան համերգներից հետո։ Մազուրն, անվիճակում մի պահ վերանալով հանգամանքից, փորձենք պատկերացնել Դուրյանի պես վառվուուն անհատականության այդ հետագա կորուստները, որ արդյունք էին խոշոր արվեստագետների, մտավորականների հանդեպ խորհրդային սիմառ սահմանափակ, ճիշտ է ասել՝ անմարդկային վերաբերմունքի։

Դեռ լավ է, որ նա «Գևանդհառուզի» և Լայպշիցի ուղիղումքախմբի հետ հասցեց երաժշտական որոշ գործարներ նվազագումբի համար։ Այդ թվում նաև՝ ոռու դասականների, Եվ ընդհանրապես, իր փայլուն մեկնարանություններով ինչպես էր նա մասսայականացնում նաև իր երկրի երաժշտական արվեստը օտար բեմերում։ Այլ ժամանակներում և հանգամանքին գործիչները իրավացիորեն կունենալին բարունքում նման գործիչները օգագությունը իրեն մշայական ու նյութական ամենայն օժանդակություն՝ իրեն մշայակային դեպաններ։ Զէ՞ որ ամենուր նրա հայ նվազավար

Ինելու փաստին հավելվում էր նաև իր երկրի արտիստ, արվեստագետ, երաժիշտ լինելու իրողությունը: Եվ մի՞թե նվազ էր նրա ծառայությունը իր ազգի կամ խորհրդային մշակութային կյանքին, որի վկայությունը համերգային լայնածավալ գործունեությունն էր Միության բազմաթիվ քաղաքներում, ընդունակությունները:

Ինչեւ, Օհան Դուրյանը նորից ծրեանում էր, իր հետ կատարվածից ընկճված ու ճնշված, անորոշ սպասումների մեջ: Ժամանակ էր պետք ծանրութեան անելու, վերլուծելու և հասկանալու, թե ինչ խորհրդով էր ստեղծվել Խորհրդային կոչվող բացօթյա այս բանտը, որը համաշխարհային հոլովույթից շանում էր ամեն կերպ մեկուսացած պահել իր ստեղծագործ ժողովրդին, ինչո՞ւ էր իշխող վերնաշերտն այդքան անհանդուրժող սեփական երկրի մշակույթի, զրականության ու գիտության բացառիկ երեւյթների հանդեպ, որտեղ և ովքեր էին հորինում ու ամրագրում ստալինյան կասկածամտության ախտը շարունակող շափորշներ՝ անձի ազատության և ստեղծագործական դրսերման վերաբերյալ:

Հարկավոր էր հասկանալ պարադոքսը, թե ինչպես է, որ կուսակցական համահարթեցնող, ճնշող մամլիչի տակ, անձի ու գործի իրական անզատության առկայությամբ, ստեղծագործ, տաղանդավոր մարդիկ՝ անբացատրելի մի նվիրումով ու նաև տոկունությամբ, շարունակում էին կերտել բարձր մշակույթ՝ հարստացնելով, պահպանելով հայրենի գիտության, գրականության արվեստի մրցունակ, հաճախ՝ հաղթանակող ու նախանձելի որակ:

Բարդ էր: Բարդ էր ու անըմբռնելի, թե ինչպես իսկական, մեծ մշակույթի համամարդկայնության խնդիրը այստեղ նեղացվում, հարմարեցվում էր համայնավարական-բյուրոկրատական ընկալումներին: Եվ, իհարկե, սխրանք էր, որ հեղափոխությունից այս կողմ ժառանգած անջրպետասահմանային ժանրու ճածկույթի տակ, այնուամենայնիվ, առանձին դրսերումներով պոռթկում էր ժողովրդի ստեղծագործ ներուժը, դեմ հանդիման կանգնելով գորշության մշտակաղմակայումին:

Ժամանակներն այդպիսին էին, և նրանք, ովքեր հետամուտ էին ճշմարտության որոնմանն ու հաղթանակին, պի-

տեին, որ մեծ հաշվումներով՝ մշակույթի հեղափոխիչ դրսեռների գինը ինքնամերժ, ինքնազո՞ն մաքառումն է... Համակարգի դեմ: Բայց դա առայժմ լուր ու խորքային ընդվեցում էր, իրականում ալիքի վրա՝ մեծավ մասսամբ, թմրկահարվող անուններ էին, դափնեվորված, կոշումնախեղդ արված, շքանշանակիր, ինչպես իրենք՝ երկրի այրերն էին ու վստահելի, ասել է թե՝ «քաղաքականապես հասուն...»:

Ահա, այս ամենի շուրջ պետք է խորոց վրդովված մասսատրոն, շարունակելով իր մշտական աշխատանքը Հայաստանի ֆիհարմոնիկ և, իր իսկ հիմնադրած, ուղիունավուտատեսային նվազախմբերում:

Տեղի իշխանություններն անզոր էին մոսկովյան վճիռների գիմ: Ու, թերեւ, ինչ-որ տեղ մասսատրոյին սփոփելու նպատակով էր, որ որոշվեց «Անուշի» հորելլյանական նվագավարումները տալ նրան:

1969 թվականը Թումանյանական տարի էր մեզանում: Հայ ժողովուրդը տոնում էր հավերժի ճամփորդ իր Մեծ զավակի 100-ամյա հորելլյանը: Եվ մեր օպերային կյանքում այս խոշոր իրադարձությունը նշանավորվեց Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի նոր՝ Աճեմյանական հրաշալի բեմադրությամբ:

Դուրյանը փորձեց հրաժարվել, պատճառաբանելով, որ տարիներ շարունակ օպերայում «Անուշ» են ղեկավարել անվանի նվագավարներ Զալիկյանը, Պոկանյանը, Ստեփանյանը, Գավթյանը և ուղիղներ ու կարիք չկա նեղացնել որևէ մեկին, մանավանդ որ՝ ինքն էլ օպերայում չէր: Բայց մշակույթի նախարար Կ. Ռեգուլյանի հավաստմամբ՝ դա Հայաստանի կառավարության որոշումն էր, և արդեն ընտրված էին նաև երգիչները՝ երեք կազմով:

Անուշ՝ Գ. Գասպարյան, Լ. Վարդանյան, Ա. Նշանյան Սարու-Վ. Միրաքյան, Ա. Հայրյան, Տ. Լևոնյան

Մոսի-Միհրան Երկար, Ա. Կարապետյան, Դ. Պողոսյան Ներկայացումները պետք է տրվեին՝ սեպտեմբերի 13-ին՝ առաջին կազմով, 14-ին՝ երկու ներկայացում, 2-րդ և 3-րդ կազմերով և 19-ի հանդիսավոր՝ դարձյալ 1-ին կազմով: Ամեն ինչ արդեն որոշված էր, երբ օպերայի աստղ, մեծանուն երգչուհի Գոհար Գասպարյանը սկսեց պնդել, թե Տ. Լևոնյանը երգչուհի Գոհար Գասպարյանը սկսեց պնդել,

յանը պետք է հանդիս գա 1-ին կազմում, նա այդ պահանջը ներկայացրեց նվազավարին ու երբ վերջինս չկարողացավ քավարարել այդ անհիմն պահանջը, ինչոր մի պաղ անջրպետ մտավ երգունու և նվազավարի մինչ այդ հարգալից հարարերություններում:

Ահա և սեպտեմբերի 13-ը: Դահլիճում, ինչպես ասում են, ասեղ գցելու տեղ չկա: Դուրյանը առաջին անգամ է ղեկավարում օպերայում, այն էլ՝ «Անուշ», անգիր, առանց պարտիտուր:

Պատահարար, թե ինչպես, հենց առաջին պատկերում մեծատաղանդ երգունին «իրեն թույլ է տալիս» միալվել և հինգ տակտ սպասելու փոխարեն սպասում է մեկ տակտ ու վերսկում երգելու: Մաստրոն առաջին պահ խումագի է մատնվում՝ շկասկածելով, որ երգունու սխալն է, և մի կերպ սթափելով՝ նշան է անում երկար պահել բարձր նոտան, մինչեւ բաց թողած չորս տակտերը հավաքելով, համընկեցնում է ու շարունակում ղեկավարելու:

«Ներկայացումից հետո, կյանքում առաջին անգամ ես համակվեցի դիրիժորական պարտության, տապալման վախով, երբ ստուգեցի ու տեսա, որ ես ոչ մի միալ չեմ թույլ տվել: Ու թեև առաջին անգամ էի «Անուշ» ղեկավարում, բայց պարտիտուրը անգիր գիտեի ժայրեծայր և անթերի: Ես ոչ մի միտումնավորություն չտեսա այդտեղ: Պարզապես այդ օրը հասկացա, որ Գոհարը ինձ համար անկանխատեսելի է բեմում: Ես այն մարդն եմ, որ կարող էր և կաթված ստանալ տեղում: Նվազավարելիս ես շեմ ղեկավարվում, ես ղեկավարում եմ...», — հետագայում անշար հիշողությամբ պիտի պատմեր Դուրյանը:

Իսկ այդ օրը նա պաշտոնապես խնդրեց, որ թույլ տան հանդիսավոր ներկայացումը ղեկավարել մեկ ուրիշին, նորից ու նորից պնդելով, որ պետք է երգեն առաջին կազմի երգիչները, պետք է Գոհարը լինի Անուշի գերություն:

Այս հարցը քննարկվեց վերևներում, որտեղ ոչ մի կերպ շրմունքեց մաստրոյի տարբերակը: Երար մեջ բանակցելով որոշեցին, որ Գ. Գասպարյանը այդ օրը չի երգելու, միայն թե ղեկավարի Դուրյանը, միայն թե նա չգործի այնպես, ինչպես իր խմացությունն է թելադրում ու շմոռացան ամենա-

թարձր մակարդակով հայտնել նրան. «Դու չես որոշողը, որ պետք է իմանաս, որ արվեստագետի քո գլուխը պատկանում է ո՛չ թե անձիդ, այլ պետությանը»: Սա գեռ կենտկոմական բարձրաստիճան մի շինուազիկի հոխորտանք էր: Դուրյանը գեռ լսելու էր սթափեցնող «հայրական հորդորներ»:

Մինչև վերջին պահը, մինչև հանդիսավոր ներկայացման սկիզբը, գեռ փորձում էին համոզել Դուրյանին հանդես գալ Գ. Գասպարյանի հետ: Այդ պատճառով նույնիսկ 30 ր ուշացումով սկսվեց ներկայացումը: Դահլիճում էին կառավարության ղեկավարները, Ա. Միկոյանը, Հ. Բաղրամյանը, պատվագոր այլ հյուրեր: Անուշի գերը ու պակաս փայլով երգեց Լ. Վարդանյանը: Իսկ Օհան Դուրյանին երաժիշտները, երգիչներն ու պարողները ձեռքերի վրա տարան դեպի կուլիսներ: Փառահեղ ներկայացում էր:

Հաջորդ օրը «Սովետական Հայաստան» թերթում հոդված լույս տեսավ, որտեղ ներկայացվեց ողջ եղելությունը: Սակայն դա առանձնապես դուր շեկավ որոշ շրջանակներին: Ամեն ինչ պարզ էր ու հասկանալի: «Ես ասել էի ճշմարտությունը, որն այնքան էլ հաճելի չէր ոմանց: Եվ այն օրը, երբ օպերային թատրոնը մեկնում էր Մոսկվա՝ հորելլյանական ներկայացում տալու, կենտկոմը նշանակեց հոդվածի քննարկում՝ երաժիշտների մասնակցությամբ, որոնցից ոչ մեկը շկարողացավ ասել, թե որն է եղել իմ մեղքն այս խնդրում»— պատմում է Դուրյանը:

Այդ օրը նա չի մոռանա երբեք, այդ օրը իր համար լրիվ պարզ դարձավ «պետական» վերաբերմունքն իր հանդեպ, որն այնպես խոսուն արտահայտվեց հանրապետության ղեկավարի «դու գեռ կտեսնես» վերջնակարծիք-սպառնալիքով՝ արված երևան-Մոսկվա ինքնաթիռում:

«Անուշի» մոսկվյան ներկայացումը, իրոք որ, ցնծող էր: Թերթերը գրեցին, որ «օպերայի հերոսը Օհան Դուրյանն էր»: Ու էլի բազում հրաշալի բնորոշումներ հայ օպերային թատրոնի կատարողական բարձր մակարդակի, ներկայացման փայլուն ոեժիսուրայի, նկարչական, գեղարվեստական ձեռքորման մասին:

Գալով Դուրյանին՝ հավաստումը միանշանակ է. այս, նա ինքնամոռացության շափ ոգեշնչված ու ներքին կրակով ղե-

կավարեց այդ շքնաղ գործը: Եվ բոլորովին էլ զարմանալի չէ, որ երբ վերջնամասում՝ անծանոթ լինելով նրա նվագավարական լուծմանը, որտեղ ուժգին ֆորտեներից հետո երաժշտությունը շարունակվում է մեղմորեն և մարող շնչառյան պես՝ աննկատ ձուլվում լուսթյանը, հանդիսատեսն շտապեց հենց ֆորտեների ժամանակ խլացուցիլ ծափերով ազդարարել իր հիացմունքը, մասստրոն անակնկալ, հանկարծական հուզումով, ուղղակիորեն նվազեց ու ընկավ զեկավարման վահանակի առջեւ: Դա նաև գերլարված հոգեվիճակի ապացուց էր: Այդպիսին է արվեստագետի կյանքը՝ երբեք հարթ և ուղղագիծ: Հատկապես, երբ նա գործ ունի կատարողական ասպարեզի, կենդանի լսարանի ու հանդիսատեսի հետ: Այստեղ հաջողության բերկրանքը մեկինն է ու բոլորինը, ապրումի տառապանքը՝ անհատական:

«Անուշի» հաղթանակը Մոսկվայի Մեծ թատրոնում կատարյալ էր, որովհետև աստվածային կամեցողությամբ՝ մեծն Տիգրանյանը «Հանդիպել էր» երկու անհատականությունների՝ Վարդան Աճեմյանին, Օհան Դուրյանին, ապա և՝ օպերային արտիստների, երգիչների, նվագախմբի հրաշալի մի բույզի:

Իհարկե, մշակութային նման նվաճումների տերն, ի վերջո, ժողովուրդն է, Միայն ցավալի է, որ ժամանակի կինովակերագրության թերացման պատճառով, սերունդներին չի մնացել դրա նյութեղեն ժառանգությունը:

Երբ վերադառն ծրեան, Դուրյանն արդեն անտրամադիր էր: Նախ, տանելի չեր ղեկավարության կողմից արհեստականորեն ուսնացված անախորժ մթնոլորտը՝ Դուրյան-Գասպարյան ստեղծագործական ու մարդկային հարաբերությունների շուրջ: Հարկավոր էր պարզապես բարեկիրթ վերաբերմունք՝ չպարտադրելու երկու նշանավոր արվեստագետներին միասին հանդես գալ: Ամենքին էր պարզ, որ ո՞չ նվագավարը և ո՞չ էլ մեծանուն երգչուհին, չէին կարող իրար հանդեպ ստեղծագործական խանդ ու նախանձ ունենալ: Նրանք շատ վեր էին նման մանր թուլությունից:

Ընդհանրապես, այս պատմությունը մանրամասնորեն ներկայացնելն ինքնանպատակ չէ: Ժամանակին շատերին թվում էր, թե այս պատճառով է նվագավարն առաջին անգամ հեռացել Հայրենիքից: Բնավ ո՞չ: Պատճառն ավելի լուրջ

էր ու վիրավորական: Բանն այն է, որ սկզբում խափանելով Դրեզդենի «Շտատսկապելե»-ի հետ սկանդինավյան երկրներում տեղի ունենալիք համերգային շրջագայության պայմանագիրը, համապատասխան ատյանները շրավարարվեցին: Մասստրոն պայմանագիրը ուներ նաև «Գեանդհառուպի» հետ Հարավալավիայում համերգներ և օպերային ներկայացումներ ղեկավարելու: Բայց դարձյալ թույլ շտվեցին իրականացնել ծրագիրը: Այս մասին կայացիգում դեռ տեղյակ չէին ու ինչպես կարող էին ենթադրել, թե հայրենի կառավարությունը «պատժում է իր անհնազանդ, բմբուստ արվեստագետ-զավակին»:

Օհան Դուրյանն առաջին անգամ հնարավորություն շուներ պատասխանել կայացիգի օպերային թատրոնի տնօրինի այն խիստ հիշեցմանը, որ նվագավարն իր ուշացումով վիժեցնում է պայմանագիրն ու ծրագրերը:

Գերմանիայում, իհարկե, պետք է գուշակեին, թե ինչ է կատարվում այստեղ, բայց փաստն այն էր, որ նրանց պաշտոնական պատասխան չէր տրվում: Մինչ այդ թեթև ձեռքով հանվեցին նաև հյուրախաղային այլ համերգներ: Սա արդեն ամեն սպասածից վեր էր:

Ու թեև կային մարդիկ, որ ամեն կերպ ջանում էին օգնել մասստրոյին, ինչպես Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Էդվարդ Միրզոյանը, որ լինելով ազնիվ ու տաղանդավոր մարդ, ամեն ինչ արեց՝ օժանդակելու արվեստագետ-բարեկամին, բայց ավագ: Նրանց դեմ կանգնած էր համայնավարական սկեռվածությունը՝ ՊԱԿ-ի աշալուրջ հսկողությամբ:

Պարզ է, որ Դուրյանը երբեք չէր ստանալու երկրից ընդմիշտ հեռանալու թույլտվություն, բայց ունենալով անձնական հրավեր թեյրութից, ուր տեղափոխվել ու բնակվում էին մայրն ու քույրերը, մեկնեց այնտեղ:

Թեյրութում, շտեսնելով այլ ելք, նա դիմեց վճռական քայլի՝ ամերիկյան դեսպանությունից խնդրելով, որ իրեն թույլ տրվի այժմեղից մեկնել ԱՄՆ: Ու քանի որ փաստարկները համոզի էին, համապատասխան ատյանները տվեցին իրենց համաձայնությունը:

«Դա փախուստ էր, բայց ոչ իմ Հայրենիքից, իմ սիրելի ժողովրդից ու Հայրենի մշակույթից: Երևանում իմ ընտանիքն էր մնացել, իմ միակ զավակը... Իմ փախուստը տիրող կարգերից էր, ինձ համար անհաղթահարելի, անարդար իրականությունից», — հետագայում պիտի խոստովաներ երաժիշտը:

Ամերիկա, ասել է՝ նորից օտարություն...

Սա արդեն ո՞չ եվրոպա էր, որտեղ փայլուն ճանաշում ուներ նա, ո՞չ Արևելք էր, որը բազմիցս նվագվարել էր, օվկիանոսից անդինն էր, որտեղ ամեն ինչ պետք է սկսվեր զրոյից՝ փախստականի կարգավիճակից մինչ մշտական աշխատանք: Ճիշտ է, ուներ բարեկամներ, մտերիմներ, ովքեր պատրաստ էին սատարել նրան, բայց սկզբնական շրջանում նա նույնիսկ վախենում էր բացահայտ հանդես գալ, աշխատում էր այնպես անել, որ խորհրդային գործակալները չկարողանան իրեն հայտնաբերել: Ապրում էր Սան-Ֆրանցիսկոյում:

Մի օր էլ նրա մոտ է գալիս Կոնստանդին Օրբելյանի եղբայրը, որն այնտեղ էր բնակվում և հայտնում, որ համերգային շրջագայությամբ Սան-Ֆրանցիսկոյում են գտնվում Ռուբեն Ահարոնյանը, Էլվիրա Ուզունյանը և էլի ուրիշներ, որոնք ցանկանում են հանդիպել մասսարոյին, հանձնել նրան նամակներ Ա. Քոչինյանից ու իր ընտանիքից:

Պարզ է, տեղն արդեն հայտնաբերված էր և հանդիպումն անխոսափելի:

Հեկ առաջին քարտուղարն իր նամակում հավաստիացնում էր, որ բոլոր պայմանները կստեղծի ու կրավարարվեն նվագավարի պահանջները, միայն թե նա վերադառնա Հայստան:

Մի նամակ էլ հատուկ նարեկ որդուց էր բերվել, որտեղ տղան սրտաճմլիկ ու զգայացունց խոսքերով խնդրում էր հորը վերադառնալ:

Վերադարձի մասին վախենում էր անգամ մտածել, ոչ մի վստահություն շուներ, թե խոստացածի համաձայն իրեն կտրամադրվի ստեղծագործական ազատություն: Միակ խընդրանքն այն էր, որ թույլատրեն ընտանիքին միանալ իրեն: Սա, իհարկե, երազանքի պես մի ակնկալիք էր:

Չորս ամիս Սան-Ֆրանցիսկոյում ապրելուց հետո Դուրյանը տեղափոխվեց Նյու Յորք: Ապրում էր երուսաղեմցի բարեկամի, իր նախկին սան Զոլաքյանի տանը, որը շատ շանքեր թափեց ՄԱԿ-աշխատակից իր ծանոթների միջոցով կազմակերպելու և կարգավորելու մասսարոյի տիկնոց և որդու հետ կապված խնդիրը: Սակայն, արդեն օգոստոս ամսին պարզ դարձավ, որ Մոսկվան կտրականապես մերժել է միշնորդությունը:

Այդ ժամանակ էր, որ Նյու Յորքի հայտնի հեռուստաընկերություններից մեկը՝ հատուկ ծառայությունների ծրագըրմամբ, առաջարկեց նրան ելույթ, որով պետք է հրապարակավ հայտարարել Հայրենիքից իր հեռացումի բուն պատճառները:

Սա, ինչ խոսք, լայն հնարավորություն էր ընձեռելու հետագա գործունեության համար: Հասկանալի է, որ այս ելույթով Օհան Դուրյանը ամերիկյան հանդիսատեսին պիտի ներկայանար որպես այլախոհ արվեստագետ... Սակայն, մինչև նա ժանրութեթև կաներ համաձայնություն տալու, դեպքերն այլ ընթացք ստացան:

Երևանից զանգահարում է է. Միրզոյանը, անկեղծ խոստումներով ետ կանչում մասսարոյին, ասելով, որ եռո՞ճըրդային Հայաստանը տոնելու է իր 50-ամյա հոբելյանը, Երեվանը սպասում է ՄԱԿԿ գլխավոր քարտուղար Բրեժենևի այցելությանը, լինելու են մեծ հանդիսություններ, համերգներ, որ միայն Օհան Դուրյանն է ղեկավարելու: Այդ զանգից հետո, գալով Ամերիկա, նա դաշնակահարուհի Լյուսի Խշիանյանի միջոցով հաղորդել էր, որ նարեկը հոր կարոտից ծանր հիվանդացել է: Սա արդեն հոգեպես տակնուվրա արեց նվագավարին ու նա, հրաժարվելով հեռուստաելույթից, ասել է՝ սեփական ձեռքով փակելով ստեղծագործական իր գովազդի դեմ բոլոր դռները, որոշեց վերադառնալ Երևան:

Այդ ժամանակ ժան Մարտինոնը նրան Փարիզ էր հրավիրել համերգների:

Այս ուղևորությունը, հանդիպումն իր ծանոթ ու սիրելի հանդիսատեսի հետ, կարծես թե փոքր-ինչ փարատեցին, մեղմացրին նրա ապրումները:

Դուրյանը Երևան վերադարձավ փարիզյան համերգային նոր պայմանագրով, մտածելով, որ այլևս իրեն չեն խանգարի և ինքը հայաստանյան գործունեությանը գուգընթաց, նորից առիթներ կունենա նվազավարել միջազգային բեմերում: Հայրենիքում Օհան Դուրյանին առաջին դիմավորողը ՊԱԿ-ն էր: Զանում էին ստանալ եղած ու շեղած կապերի բացահայտում, անուններ, գործիչներ, ում հետ կարող էր ծանոթ լինել նվազավարը՝ արտասահմանում ապրող հարազատներինը ներառյալ: Բացարձակապես աններելի էր, որ Օհան Դուրյանը «շեր խոստովանում»:

Աստված գիտե, թե ինչ գնով Միրզոյանին հաջողվեց վերջին պահին կորզել ՍՍՀՄ մշակույթի նախարար Ֆուրցեայի համաձայնությունը, որպեսզի Դուրյանը կարողանար՝ համաձայն պայմանագրի, մեկնել Փարիզ:

Ապահովության համար նրա հետ ուղարկեցին նաև ակամայից անհարմար վիճակի մեջ հայտնված հարգարժան կոմպոզիտորին:

Փարիզ հասան համերգից մեկ օր առաջ և միայն մեկ փորձով Դուրյանը ղեկավարեց համերգը՝ դարձյալ իրեն հատուկ բացառիկ վարպետությամբ: Միրզոյանի համար դա նորույթ չէր: Նա պատմում է, որ «1958 թ. Դուրյանը պետք է հանդես գար Մոսկվայում Զիվան Տեր-Թադևոյանի 1-ին սիմֆոնիայի կատարմամբ: Ակզրում Մոսկվայում համաձայնեցին, ապա մերժեցին՝ պատճառաբանելով, թե քանի որ ուրիշ ստեղծագործություններ էլ են հնչելու, ապա նվազախումբը կվարի իրենց նվազավարը: Դուրյանը համաձայնեց բոլոր ստեղծագործություններն էլ ղեկավարել և մի ամրող համերգ տալ Մոսկվայում, իսկ ծրագրի մեջ մտնում էին տարրեր երաժշտություններ և ոուս, և ուկրաինացի, և այլ ազգի կոմպոզիտորների գործերից: Ի դժբախտություն մեզ, նոտանները ուշ տեղ հասան, շատ քիչ ժամանակ էր մնացել, իսկ Օհան Դուրյանը սովոր էր ղեկավարել անգիր, ինչպես ինքն է ասում՝ գոց: Այդ կարճ ժամանակամիջոցում անգիր սովորել հնարավոր չէր: Որոշեց. հայ կոմպոզիտորի գործը կղեկավարի անգիր, մնացած՝ նոտաններով: Ակսվեց համերգը: Ի զարմանս ինձ՝ տեսա նոտակալը շկա: Մտածեցի, որ համերգը սկսելու է մեր կոմպոզիտորի ստեղծագործությամբ:

Ես ապշեցի... Հնչեց ոուս կոմպոզիտորի երաժշտությունը, հետո մոլդավացու երաժշտությունը և բոլորը՝ անգիր: Հետո նա ինձ ասաց.

— Գիտես ինչ, ես մտածեցի. քո այդ ժողովրդին շպիտի հայտարարենք, որ մեղքն իմը չէ: Հանդիսատեսը պիտի նայի ու մտածի, որ նվազավարն իր ազգայինը անգիր է կատարում, իսկ մյուսներինը՝ նոտաններով: Ես երկու գիշեր անքուն անցկացրեցի, որպեսզի շվիրավորեմ հանդիսատեսին:

Ահավասիկ, ինչի է ընդունակ Օհան Դուրյանը...»:

Փարիզի «Շանզ էլիզե» թատրոնում ֆրանսիայի ազգային հեռուստատեսության նվազախմբի հետ Վագների, Սեն Սանսի, կիստի ու Ռեգերի սիմֆոնիկ ստեղծագործությունների կատարումը տոնական տրամադրությամբ էր համակել հանդիսատեսին:

ՏԱՍՍ-ի թղթակիցը պիտի շտապեր հայտնել ֆրանսիայից, թե Դուրյանի ղեկավարած համերգն այնպիսի օվացիաների արժանացավ, որ հանդիսատեսներից շատերն ուղղակի բեմ ելան՝ շնորհավորելու նվազավարին:

Տունդարձին, արդեն օդակայանում, Դուրյանը նկատեց իրեն հետևող խորհրդային գործակալներին: Վախենում էին, թե ինքը Փարիզում կմնա:

Վերադարձան: Ու նորից հայտնվեց անտանելի իրավիճակում, երբ չէին թույլ տալու ոչ թե արտասահման, այլ նույնիսկ Մոսկվա գնալ նվազավարելու: Դա դեռ 1971 թվականն էր: Եվ դեռ բավական ժամանակ կար, մինչև իր երկրորդ հեռացումը դեպի օտար ափեր:

Մինչ այդ, հայ երաժշտական մթնոլորտը շարունակում էր շնչել դուրյանական արարումների բերկրանքով: Կա սերնդի հիշողություն, և այդ հավաստումով, նրա ոչ մի ելույթը անտարբեր չէր թողնում արվեստի իսկական գնահատողին: Լինեին սիմֆոնիկ համերգներ, թե օպերային ներկայացումներ, նվազավարական հարթակում կախարդորեն հոգեփոխվող ու հոգեփոխող երաժշտն էր, իր գործի անմեկնելի սիրահարը:

Հայ և համաշխարհային երաժշտության հրաշալի մեկնարանը, անկախ ամեն ինչից, շարունակում էր ժառայել հարազատ մշակույթին, շարունակում էր իր երաժշտասերին

պարգևել մեծ արվեստի երջանկությունը ու դեռ երկար պիտի հիշվեին «Անուշ», «Արշակ 2-րդի», «Ալմաստի» փայլուն ղեկավարումները, դասական սիմֆոնիաների մատուցումները, նաև ժամանակակից կոմպոզիտորների տասնյակ ստեղծագործությունները, որոնց առաջին հնչեցնողն է եղել թե՛ մեզանում և թե՛ արտասահմանում:

1973 թվականին Օհան Դուրյանը հրավիրված էր ԱՄՆ կոս Անշելիսում և նյու Յորքում «Անուշ» ղեկավարելու: Բոլոր ատյաններն այս մասին նախապես տեղեկացված էին և երբ ընդամենը մեկ ամիս էր մնում մեկնումին, նյան հայտնեցին, որ Մոսկվան մերժում է՝ պատճառաբանելով, որ այդ հրավիրը ուշացումով է տեղ հասել:

Սա արդեն մերժումների գագաթն էր, որը ստիպեց նվագավարին կայացնել իր վճիռը...

Երեանյան վերջին համերգը Վերդիի «Ռեքվիեմ» էր ու նաև մի համերգ Կիևում՝ 1974 թվականի մարտին, ծրագրում՝ Թրուկներ, 4-րդ սիմֆոնիա և Ռավել՝ «Բուերո», Ու շմարող ծափեր, ծաղիկներ... ծաղիկներ հայ մեծանուն նվագավարին...

Երեանում գարուն էր...

Նորոգումի զարմանալի շունչ կար ամենդի: Եվ այդ շունչը կարծես թե ներթափանցում էր հասարակական տրամադրությունների մեջ: Ինչ-որ բան, այնուամենայնիվ, սովորական հունից շեղված՝ փոփոխվում էր մեզանում:

Հակասական ժամանակների մեջ, մի կողմից՝ անուրանալիորեն հզորացող, կառուցվող նյութեղենի կողքին հոգեվորի զարգացման համայնավարական պլանավորման վտանգի ահազնացումը սթափեցրել էր մտավորական սերնդին: Ու թեև Կրեմլի կարգախոսներն անշեղորեն պարտադրվում և իրագործվում էին տեղերում, թեև ամեն քայլը հսկելի էր պիտանվտանգության գործակալների կողմից, բայց ազգային, մշակութային ինքնուրույնության, ինքնագիտակցումի գիծը շարունակվում ու խորացվում էր սերնդի գործունեությամբ և դա սքողել չէր լինի...

1965-ի՝ իրոք որ պայման վերաբնացումից հետո նորովի իմաստավորվեցին ներկա ու գալիք բոլոր «Ապրիլները»՝ սերունդը նվաճել էր Ծիծեռնակարերդի բարձունքին Հայոց մեծ

եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող սուրբ հուշակոթող ունենալու իրավունքը:

Դժու 37-ից Ժամանակներով այնքան շհեռացած, եթե հայը Մինասի, Սևակի պես կորուստներ էր տալու, եթե իր ռքաղաքականներն» ուներ խորհրդային բանտերում, ուրեմն շարունակվում էր մաքառումը, որպեսզի ազգը հուշարձան կանգնեցներ իր Անդրանիկին, հավերժացներ իր Սարդարապատը, բարձրածայն խոսեր Հայ Դատի մասին, երթևեկելի դարձներ Հայրենիք—Սփյուռք կամուրջը... Հնարավո՞ր է թվել ամենը: Սա իրողությունն էր. «Համակարգի մեջ՝ համակարգի դեմ», ծանր ու անխուսափելի: Ըմբռնել էր պետք, հասկանալ, որ եթե հայրենասեր, ազգասեր շատ գործիչներ կարողանում էին համախորհրդային կոնտեքստում ազգային խընդիրներ լուծել, առնակատումներից խուսանավել, ապա իշխանական ուռնացված համակարգում գտնվելու էին նաև ոչ քիչ թվով այն պաշտոնամոլ դրածոները, հլու, ստրկամիտ կամակատարները, ստեղծագործական ազատական պոպթկումները հսկող-խոշընդուղողները, որոնց խղճի վրա մեր շատ ու շատ կորուստներն են բարդացած:

70-ականների սկիզբն էր և, իրոք, խորհրդային ահեղ սառուցը, ճաք տված, հալլում էր կաթիլ-կաթիլ... Ամենքն էին զգում ու տեսնում:

Ինչու դա չզգաց հայրենապաշտ արվեստագետը, որ ամեն ինչից խոռվ, նորից Հայրենիքից հեռանալ էր ուզում: Հրաժարվելով իր սիրած աշխատանքից, նվագավարական հարթակից ու բեմից, նա առանձնացել էր ամենքից: Եվ ահա, գարնան ավետարեր ծաղկունքին ու նորոգումին անհաղորդ, իր խոռվից հետ մեկուսի, սպասում էր... անուրախ, տանջող մի սպասումով:

Քաղաքում արդեն լուրեր էին պտտվում, որ մասսարոն պատրաստվում է մեկնել: Արվեստագետի այդ քայլը միանշանակորեն չէր մեկնաբանվում: Շատերի համար դավաճանության պես մի բան էր դա: Հետո նա մեկ անգամ ևս պիտի ասեր, որ ինքը հեռանում էր ոչ թե Հայրենիքից, այլ իշխող կարգերից: «Մտերիմներս, ընկերներս խուսափում էին ինձ հետ շփվել, կամ վախենում էին որոշ ատյաններից, կամ չէին ուզում հոգիս պղտորել: Ես հոգնած ու խոցված էի և այդ


ապրումների մեջ ավելի խորն էի զգում մենակությունս, ու սպասումն էր թվում երկար,— պատմում է, վերհիշելով անցածը:— Միշտ մտաբերում եմ թռչնակիս, իմ բոլոր վատ օրերի մխիթարությունն էր: Տղաս էր գտել փողոցում, թևակոտոր, ձմռան ցրտից համարյա քարացած: Տուն բերեց: Ու ես բուժեցի խեղճ ծիտիկին, գուրգուրանքով, քնքանքով պահեցի վեց ամիս: Թռչել չէր կարողանում: Մի օր էլ պատշաճրում գարնան տաք արևից ջերմացած, կարծես թռչելու ցանկությամբ ուսիցս սահեց ու ընկավ 4-րդ հարկից: Ես սարսափից ճշացի: Հրաշք պիտի լիներ, որ փրկվեր: Ու փրկվեց, որովհետև ապրելու էր: Միանգամից գետին շընկավ, այլ սկզբից՝ մայթեղրի ծառին, ապա ճյուղերին թեթևակի գարնվելով, հայտնվեց մայթին և անցորդներից խուսափելով, փախավ ու գետնին կպած լուսամուտից ընկավ շենքի նկող: Հուզված ու հուսահատ, ուղիղ մեկ ժամ որոնումներից հետո նկուղի աղբակույտերի մեջ գտա ծիտիկիս և, երբ ափիս մեջ առա, մի այնպիսի սրտաճմլիկ ծվլոց արձակեց, որ երբեք չեմ մոռանա: Նա զգաց, որ հարազատ ձեռքերի մեջ է...

Մարդն էլ այդ թռչնակի պես կարիք ունի հարազատ վերաբերմունքի, տաք, մխիթարող գուրգուրանքի, որքան էլ արտաքուստ ուժեղ ու անկոտրում թվա: Ինչպես կյանքում, արվեստում էլ է այդպես...»:

Արվեստագետի այս հուշի մեջ ճշմարիտ խորհուրդ կա: Մյուս կողմից՝ իսկ եթե ինքն ավելի համբերատար լիներ... փոփոխվող ժամանակների հետ նորովի կարծենորվեր իր բացառիկ նվիրումը: Մեզանում հենց այդ շրջանում էլ սկսվեց բարոյաճոգերանական նոր դաշտի ձևավորումը: Իհարկե, հեղափոխություն շեղավ, աթեիզմը գլխիվայր շուր շեկավ, բայց այն, որ մշակույթը, այդ թվում նաև՝ երաժշտական, նոր փուլ մտավ ազգային ավանդների վերագնահատումով, ակներև էր:

Երկար շարշրկումներից հետո, Մոսկվայում, վերջապես թույլ էին տվել Մատիսլավ Ռոստրոպովիշին՝ երկու տարով մեկնել արտասահման աշխատելու:

Երևանն էլ, կարծես քաջալերված այդ օրինակից, Դուրյանին թույլատրեց երկու տարի աշխատել արտասահմանում: Իրականում, ոչ թե երկու տարվա, այլ վեցամսյա ժամկետ



Օհան Հովհաննը տիկնոջ՝ Ալիսի հետ:  
Մարտնի, 1990թ.:





Երկու Օհան՝ պապ ու բոն:  
Փարիզ, 1989թ.:



Սոր, քոյլերի և եղբայրների հետ:  
Բեյրութ, 1969թ.:

Արարումի պահեր:  
Լու Անդելս, 1979թ.:





Երանի ես և քոչել խնանայի: Ավինյոն, 1987թ.:

Իմ լսու, իմ անուշ Պուատ: Երևան, 1998թ.:

Սիրատմներ՝ Պուատն, Դոլին, Սիսին: Երևան, 1998թ.:



Էր նախատեսած, խոստումով, որ այնտեղ արդեն էրկարացումը կանի տվյալ երկրում խորհրդային դեսպանատունը:

1974-ին Օհան Գուրյանը սկզբում մեկնեց Բեյրութ՝ մորը տեսակցելու, որտեղից և պետք է անցներ Ավստրիա:

Բեյրութում աշքին է ընկնում Համերգային ազդագիր՝ ծրագրում նաև իր հեղինակային գործերը: Ֆրանսահայ երգչուհի Ալիս Շահմիրյանի համերգի ազդագիրն էր: Նա ղեռ Պարսկաստանում էր երգում, որտեղից անմիջապես գալու էր կիբանան:

Դուրյանը ճանաշում էր Մարսելի օպերային թատրոնի տաղանդավոր երգչուհուն, որը 1972-ին իր ղեկավարությամբ, ապա 1973-ին՝ Հակոբ Ռուկանյանի ղեկավարությամբ երևանում հանդես էր եկել Անուշի գերեզով: Այստեղ Գուրյանը հանդիպում է նվազակցող դաշնակահարուհուն՝ չվլանալով՝ մի քանի փորձ անցկացնում, և ապա, քանի որ շուտով մեկնելու էր Վիեննա ու չէր կարողանալու մասնակցել երգչուհու համերգին, հաջողության մաղթանքին կից թողնում է նրան իր հարազատների հեռախոսահամարը: Ալիսը պետք է հանդիպեր նրանց՝ ճշտելու, թե ինչպես կարող էր Վիեննայում գտնել Օհանին:

Նախ՝ 1974-ի վերջին նրանք հանդիպում են Ֆրանսիայում, ապա 75-ի ապրիլին՝ Վիեննայում և այլևս շեն բաժանվում իրարից:

Վերջնականապես ճշտելով, որ Քնարիկը չի ուզում լքել երեանը, և չի միանալու իրեն, Գուրյանը ամուսնություն է առաջարկում Ալիս Շահմիրյանին: Նրանք բնակություն հաստատեցին Բադենում:

Վաղուց արդեն անցել էր արտասահմանում գտնվելու վերաբերյալ Խորհրդային Միության թույլատրած վեցամյա ժամկետը: Նվազավարը կոնկրետ պատասխան չէր ստանում, դեսպանատանը կարծես չար խաղ էին խաղում իր հետ, ասելով, թե Մոսկվան երկարացրել է ժամկետը, բայց իրենք դեռ գրավոր հիմք չունեն: Ավստրիական մարմինները արդեն երկու անգամ, խախտելով իրենց իսկ օրենքները, երեքական ամսով ժամանակ էին ձգում, գործերը կարգավորելու համար հնարավորություն տալով երաժշտին, որի մասին իրենք ունեին կայուն ու բարձր կարծիք: Միտումնավոր քաշքուկն այնկայուն ու բարձր կարծիք: Միտումնավոր քաշքուկն այնկայուն ու բարձր կարծիք:

քան երկար է տևում, որ այլևս որևէ ճար չունենալով, ծհան Դուրյանը հանդես է գալիս հեռուստատեսությամբ՝ հայտարարելով, որ քաղաքական ապաստան է խնդրում ավստրիական կառավարությունից: Հենց այդ օրն էլ խորհրդային դեպանատնից հայտնում են, թե Օհան Դուրյանի թղթերն ու անձնագիրը պատրաստ են: Ուզ էր, եղածն արդեն եղել էր: Իհարկե, մի մութ վրեժինդրությամբ Մոսկվան շարունակում էր վիժեցնել նվազավարի ծրագրերը: Սակայն Օհան Դուրյանը, արդեն Օհան Դ. Նարկ անվամբ, իր առաջին համերգը տվեց Վիեննայում, 1976-ի սեպտեմբերին ղեկավարելով Ավստրիայի ռադիոհեռուստատեսության սիմֆոնիկ նվազախումբը: Ավստրիայի կոմպոզիտորներ Ծրեկաների դրամատիկ ուվերտյուրը, Շպրոնգը դաշնամուրային կոնցերտն ու Պրոկոֆիկ Յ-րդ սիմֆոնիան նա այնպիսի մի շուրջով ու անսախադեպ հնչողականությամբ մատուցեց, որ թերթերն անմիջապես հայտարարեցին. «Վստահ ենք, որ նա ոչ միայն արեւլյան Տոսկանինի է, այլ իր այս նոր գործունեությամբ դառնալու է նաև արևմտյան Տոսկանինի»:

Հիսունչորսամյա նվազավարին ավստրիացի հանդիսատեսը տեսավ իրեւ ավագ սերնդի արվեստագետ, սակայն կատարողական բացառիկ մի եռանդով ու իմացությամբ լեցուն, որին մնում էր ցանկալ երկար ու բեղմնավոր գործունեություն իրենց երկրում ու երկրից դուրս և բազում հաջողություններ: Այո, ճիշտ էր նկատել երաժշտասիր հանդիսատեսը՝ Օհան Դուրյանն, իրոք, ճառագող նվազավար է, ճառագող անձնավորություն: Այդ համերգին ներկա էր արևմտագերմանական «Ֆիլհարմոնիկա Հունգարիկա» նվազախմբի տնօրինը, որն անմիջապես Դուրյանին հրավիրեց ղեկավարելու իրենց առաջիկա համերգը:

Նվազախմբը, որ բացառապես կազմված էր 1968-ից հետո Հունգարիայից վտարանդված երաժշտաներից և Գերմանիայում արդեն մեծ համբավ ուներ, մշակութային իր ներդրումն էր անում երկրի երաժշտական կյանքում: Եվ առանք համերգային ազդագրերում երեսում է հայ նվազավարի անունը, իսկ թերթերն ազդարարում են ռԱրևելյան Տոսկանինին կղեկավարի գալիք շարաթօրյա համերգը: Դուրյանն առաջին անգամ էր հանդես գալու արևմտագերմանական

երաժշտասիր Հասարակայնության առջև, «Նա ունակ է երաժշտական անսահման արտահայտչականության: Նա նկարում է երաժշտությունը, երաժիշտներին գերում, տանում իր ետևից: Թվում է, թե նվազավարելիս ինքն իրեն է տոնականորեն կերպավորում... Վստահարար կարելի է ասել, որ Մառնորեն կերպավորում... Սա մեծ նվազավարի երեկո էր...», եվ, իհարկե, երաժշտագետները, քննադատներն ու լրագրողները պիտի շեշտեին, որ նման մի արվեստագետի, ում համեմատել են Տոսկանինի, Բեռնստայնի, Քլայդերի հետ, սովետներն արգելել էին ելույթներ ունենալ Արևմտագումբում:

Հատկանշական էին ոչ միայն այս նվազախմբի, այլ նաև «Վեստֆալիշե» սիմֆոնիկի հետ այն երեք փառահեղ համերգները, որոնցում նվազավարը փայլեց իր վարպետությամբ, իսկ «Ֆիլհարմոնիկա Հունգարիկայի» կատարմամբ թեթևովների 9-րդ սիմֆոնիայի ներկայացումը Բադ-Այլինգ քաղաքում համարվեց Օհան Դուրյանի հաղթական հաջողությունը: Այս նվազախմբի հետ նա դեռ շատ էր հիացնելու երաժշտասիրին:

Դուրյանի ստեղծագործական վերելքի երբեմնի վկաները, երեսուն-երեսունհինգ տարի հետո նորից հանդիպելով նվազավարին, պիտի խոստովանեին, որ իրենք առաջին անգամ զգացին, թե ինչպես կարող է «համերգն ամրողությամբ ու բացարձակապես կախված լինել ղեկավարողի անհատականությունից»:

Վիեննայի թատրոնի սիմֆոնիկին, առաջին անգամ իրը ունկնդիր լսելով, հայ նվազավարը հայտարարելու էր, որ դա այնպիսի մի նվազախումբ է, որի հետ ինքը կարող է «երաժշտություն ապրել»: Ու նա երաժշտական ճանաչված կոլեկտիվի հետ իսկապես ապրեց Մոցարտի «Փախուստը» իր ողջ խորքով, հուզականությամբ, գունեղ ու մեղեղային պրտահայտչականությամբ:

Այդ տարին Դուրյանի կյանքում նշանավորվեց ոչ միայն Վիեննայում, այլև եվրոպական մի շարք քաղաքներում նվազավարած համերգներով, որոնցից էր Հվեյցարիայի հիստերգեն քաղաքի հուզական փառատոնին «Ֆիլհարմոնիկա Հունգարիկայի» հետ ելույթը, երբ ամենքն էին հիացած հայ

նվազավարի՝ Հայդնի երաժշտության լիահունը, ճշգրիտ ու չափազանց հուզիլ մեկնաբանությամբ:

1977 թվականին Օհան Դ. Նարկը ավստրիական քաղաքացիություն ստացավ շատ պատվավոր պայմաններում՝ պետության վարչապետ Բրունո Կրայսկին, ներկա գտնվելով մասսարոյի համերգին և նրանով իրավամբ հիացած, ի լուր ներկաների հայտարարեց. «Մեզ համար մեծ պատիվ է ու հպատություն Զեզ նման քաղաքացի ունենալը»:

Այսպես Ավստրիան բացառություն արեց և 1977-ին Դուրյանը երկրի լիիրավ քաղաքացի էր, ասել է՝ այլևս վերջ պիտի ունենային խորհրդային խարդավանքները:

1978—1979-ը բացառիկ բեղմնավոր էին արվեստագետի ստեղծագործական կյանքում: Նա համերգային հետաքրքիր ու հագեցած ծրագրերով հանդես էր գալիս Ավստրիայում, Արևմտյան Գերմանիայում, Շվեյցարիայում, Մոնտե-Կառույում, Լոս Անջելեսում, Բելգիայում, Երուսաղեմում, Մոնակոյում:

Ինչ կար այլևս, որ մթագներ արվեստագետին. դժվարին դեգերումներից հետո վերագտել էր իրեն, ստեղծագործում էր համընդհանուր հարգանքի, ընտանեկան հոգատար, փոխհասկացված մթնոլորտում, վայելելով ակնհայտ հազորությունների վաստակած բերկրանքը: Սակայն, թվում է, թե խաղաղվել էր հոգին... տարիներ հետո պիտի խոստովաներ, որ իրեն համար ամենից դժվարը Հայրենիքից, հայ մշակույթից ու միջավայրից օտարվելն էր, ինչին նա գնացել էր ստիպողաբար և նա ամեն գնով պիտի կարողանար հաղթահարել կարոտը՝ հետագա գործունեությունը տանու շտալու համար: Սա մի կողմից: Մյուաը, որ կարեռում էր ոչ պակաս, իրեն մաշող ցավն էր՝ սիրասուն զավակից հեռու լինելու և հակառակ իր բոլոր շանքերին, նրան իր մոտ բերելու անկարողության զգացումը:

Ավստրահապատակ դառնալու լուրը շուտ հասավ Հայաստան: Ոչ անակնկալ, բայց տխրեցնող էր լուրն այդ: Օհան Դուրյանի այս հեռացումը ժամանակավոր չէր: Ճիշտ է, բարերախտաբար, ճակատագիրը հետո փոխելու էր ամեն ինչ, բայց, առկա եղելությամբ, Դուրյանը երկար, շատ երկար էր

բացակայելու հայ բեմից ու մեր մշակութային իրողությունից:

Տիւուր էր և ընտանիքը, ցավագնորեն երկատված:

Դուրյանը հույսը չէր կորցնում և շարունակում էր խընդրանք հղել ամենաբարձր ատյաններին՝ միջնորդելու, որպեսզի որդուն թույլ տան իր մոտ գալ: Դիմեց բոլորին՝ Բրեծնեց ակսած մինչև Քարտեր, Ժ. Դեստեն, մինչև... Հոռմի Պապ: 1980 թվականին, վերջապես, հաջողեց լուծել հարցը:

Մինչ այդ, Օհան Դ. Նարկը (ի գեպ՝ բեմական իր այս անունը որդու պատվին էր կրում— Ռ. Մ.) շարունակում էր նվազավարել եվրոպական առաջնակարգ նվազախմբեր, բնավ չնվազեցնելով իր իմաստնացած, գունեղ ու խոսուն իմացության փայլը, համերգից համոզելով երաժիշտ կատարողներին, իրեն գնահատող ու մեծարող երաժշտասերներին, որ իսկական արվեստագետի կյանքը ինքնայրումի ճառագումով է լուսավորում մարդու հոգին և ինքնայրումի շերմանիամբ բալասանում մարդու ցավող սիրտը:

Այդ տարիներին նա շարունակում էր և իր հեղինակային գործերով զրադշել:

1978-ին, լուս Անջելեսում, համերգներից մեկի ժամանակ կատարվեց նաև «Շննիվերսալիզմ» կոչվող իր հեղինակած պարտիտուրով գրած մի գործ, որն անմիջապես շարժեց երաժշտագետների հետաքրքրությունը: Բոլորովին նոր մի ոճ, իր նախատիպը շունեցող, երաժշտություն, որ հագեցած է անծանոթ, զարմանալիորեն յուրօրինակ հնչողականությամբ:

Այս գործի մասին գրվեց Վիեննայում՝ գրավիչ մի վերտառությամբ. «Սա մեր կյանքի սիստեմն է»:

Շուրջ քսան տարվա աշխատանք է թափված այդ ստեղծագործության վրա, որը թերեւ բնորոշելի է իրեւ գիտական հայտնագործություն երաժշտության մեջ: «Շննիսխտեմը» մի աղյուր-պարտիտուր է, որի հիմամբ կացող են ծնունդ առնել բազում երաժշտական գործեր:

Օհան Դուրյանը դեռ երկար պիտի շարունակեր մշակել որպես գյուտ արդեն պաշտոնական գրանցում ստացած իր աշխատանքունը, մինչև հանրությանը վերջնականապես այն ներկայացնելու վճիռ կկայացներ:

Նրան սպասում էին «օպերային գեղավարումներ», որոնք փայլելու էին, ինչպես համերգային սիմֆոնիկ ղեկավարումները: Վկա՝ Դոնիձետիի «Դոն Պասկուալեն», Վիեննայի ազգային օպերայում, Մոցարտի «Կախարդական սրինգը», Շտրաուսի «Արաբելան», Զայկովսկու «Օրլեանի կույսը», Գերմանիայի օպերաներում:

1979-ին, համերգային ընդգրկուն շրջագայությունների սահմաններում, ուղիղ երեսունչորս տարի անց նա նորից հանդիպեց Երևանի ուղին վագախմբի հետ: Երեք համերգ, ծրագրում Մոցարտ, Բախ, Սկրյարին: Եվ մի անբացարելի զգացում, ինքը կանգնած էր այն նվագախմբի առջև, որի հետ կայացել էր նվագավարական իր առաջին ելույթը՝ հեռավոր 1945-ին:

Որքան տարբերություն կար իր ներկա և 23-ամյա Հովհաննես Խաչատրյանի՝ Երևանի կոնսերվատորիայի սանի դիրիժորական ինքնարացահայտումի, ինքնամեկնման կերպերի միջև:

Հիմա Դուրյանը գագաթ էր, իր հասուն, վաստակած փառքի մեջ իմաստնորեն լրջմիտ, զուսպ ու հավասարակշիռ:

Ինչ ոգևորությամբ էին համակվել նաև տեղի հայությունը, Երևանի հայ հոգեոր դասը, մշակութային գործիչները: Հանդիսականին մի քանի օր տիրականորեն գերող երաժշտի փառքի ուղին սկիզբ էր առել այս սուրբ քաղաքում: Հայեցի հոգին ու միտքը օծվել Հայոց վանքի հովանու տակ:

Մինչև 1980 թվականը Օհան Դուրյանն ապրեց ու ստեղծագործեց Ավատրիայում: Նրա արվեստի երկրպագուները հաճախ էին տեսնում սիրելի մասնակիցին պուրակներում՝ կնոջ հետ զրունելիս: Նրանից անպակաս էր իրենց սպիտակ թութակը, որ միշտ նստած էր լինում տիրոջ ուսին: Կորցնելով իր նախկին թռչնակին, մասնաւոր ամենաշերմագին քնքանքով էր կապվել իր մայս նոր բարեկամին: Սա կարծես բանական մի շունչ լիներ, ծլվում էր, խոսում, հասկանում տիրոջ տրամադրությունը և որքան էր տիրում, երբ համերգային որոշ ուղեկորությունների ժամանակ մասնարուն ստիպված էր լինում բաժանվել իրենից: Հետո սկսում էր սպասել նրան անհամբեր, մարդկային մի սպասումվէ: Արտակարգ մի թռչուն էր, իր փոքրիկ անձը վստահաբար նվիրած մտե-

թիւներին: Մի օր նա այնպես զարմացրեց մահստրոյին, որ դժվար է հավատալ: Տիկին Ալիսը տնային գործով էր զբաղված, մասնարուն, բազմոցին պառկած, հանգստանում էր: Եվ հանկարծ թութակը թուավնստեց նրա կրծքին, մի քիչ սպասեց ու... ծու ածեց: Ո՞վ ուրախություն ու զարմանք: Մի՞թե թոշունը կարող էր մարդու հետ այդպես կապվել, կարծես ստացած շերմության ու գորգուրանքի համար երախտիքն էր հայտնել այդպիսով: Մասնարուն շարունակում էր պահել իր համար շատ թանկաժեք այդ նվերը, երբ արդեն վաղուց, վաղուց շկար այլևս այդ փոքրիկ, այդ քնքուշ էակը:

Անշափ բեղմնավոր է Ավատրիայում ապրած տարիների ստեղծագործական հունձքը: Խսկ այդ համընդհանուր գնահատությունն ու արձագանքը, որով արժեորվում էր նվագավարի ներդրումն ու ծառայությունը միջազգային բեմերում, վեր էր ամեն սպասվածից:

Մոնակոյի «Կոնգրեսապալատում» ներկա-գտնվելով Դուրյանի համերգին, նիցայի կոնսերվատորիայի ուկտոր Անդրե Պերենը պիտի գրեր. «Օհան Դ. Նարկի հոգու ալեկոծող դիվային կիրքը նվագավարությունն է...»: Վիեննայի ուղին հեռուստատեսության սիմֆոնիկի հայազգի ղեկավարը վերստին հիշեցնելու էր, որ ինքը սոսկ ճշգրտորեն շափ տալը շի համարում դիրիժորություն, այն ունի այդ արվեստի կատարյալ ըմբռնում, այն, որ նվագախմբի ու երգիչների գեմ կանգնող մարդը պետք է լինի ոգի, ճգողական մի կետ, կոմպոզիտորի էության անսխալական վերծանող: Դիրիժորը պետք է կարողանա կամարակապել կոմպոզիտորի, երաժշտի և ունկնդրի նվիրական մտածումներն ու զգացումները:

1980 թվականը գերհագեցած էր համերգային արժանահիշատակ հրավերներով: Նվագավարը միշտ էլ առանձնահատուկ պատասխանատվությամբ էր ներկայանում իր հանդիսատեսին, այնպես որ անակնակալ չէր հրաշալիորեն ընդունվող ու գնահատվող ելույթների շարք Մյունխենում, որտեղ թավարիայի ուղին վագախմբի հետ Դուրյանը Մենդելսոնի «Ռուի Բլաս-ուվերտյուրի», Շումանի «Ճութակի կոնցերտի» և Շոստակովի 10-րդ սիմֆոնիայի բարձրարվեստ, ուղեղունչ մեկնաբանումներով ուղղակի հիացրեց երաժշտակեր հասարակայնությանը: Մամուլն անվարան վկայեց, թի

Երաժշտական ի՞նչ մեծարժեք պարզէ էր ծհան Դ. Նարկինվագավարի՝ «Հոգի, սիրո ու միտք ձուղող» մատուցումը և, թե որքա՞ն մեծ սփանչելիք էր լսել աշխարհահռչակ ջութակահար Հենրիկ Շերինգին, որը Շումանի կոնցերտը կատարեց իրոք որ աստվածային փայլով:

Իսկ Շտուտգարդի պետական նվագախմբի հետ նա ներկայացրեց նաև Պրոկոֆիևի՝ ջութակի 2-րդ կոնցերտը (ջութակահար՝ Ցիի Ցայտլին), «...Այս փոքրամարմին, կենսախինդ մարդը, որի դիմագծերը կարծես Զայկովսկու, նիկիշի և էյնշտեյնի խառնուրդ դիմագծերն են, հրաշալի է ճանաշում ոռուսական հոգու ծավալն ու խորքերը... Ամեն մի նվագախումը կարող է այսպես փառահեղ ներկայանալ, եթե նրա առջև կանգնի Դ. Նարկի պես մի նվագավար...»: Այսպիսի կարծիք հայտնեց երաժշտին մամուլը:

Այդուհետ, համերգային շրջագայությունները շարունակվեցին իտալիայում, ապա Բելգիայում, որտեղ Օհան Դուրյանը՝ Բրյուսելի ռադիոհեռուստատեսության սիմֆոնիկ նվագախումբը իր բացառիկ ղեկավարումով ուղղակիորեն պիտի զարդարեր երկու խոշոր քաղաքներում կայացող երաժշտական փառատոնը:

1980-ին կյանքի ճանապարհը Դուրյանին ու նրա ընտանիքին բնակության տարավ Ֆրանսիա: Այդպես էլ պիտի լիներ, տիկին Ալիսն իր մշտական բեմն էր կարոտում, նարեկին պետք էր միշտավայր, ուր կարող էր մշտական շփումներ ունենալ հայերի հետ: Որդու ապագան էլ էր բեմարվեստը: Գալու էր այն օրը, որ Նարեկ Դուրյանը Ֆրանսիայում «Անուշ» բեմադրեր, իսկ նվագավարական վահանակի առջև կանգներ հոչակավոր հայրը:

Ֆրանսիան հոգեհարազատ էր: Այստեղ տասնամյակներ առաջ իր բեմելն էր ունեցել, ղեկավարելով Փարիզի «Կոլոն» հոլակավոր նվագախումբը: Այստեղ ապրել էր ութ տարի, շարունակել երաժշտական ուսումնառությունը, հետագայում՝ հանդես եկել համերգային այցելություններով: Իրեն ժանոթ միշտավայրում էր ապրելու և ստեղծագործելու:

Հաստատվեցին Մարսելում, որտեղ Ալիս Շահմիրյանը, որպես մեներգուհի, իր աշխատանքը շարունակեց տեղի օպերային թատրոնում՝ ընդուապ մինչև 1991-ը, միաժամանակ 78

մասնակցելով համերգային բազմաթիվ շրջագայությունների տարրեր քաղաքներում և տարրեր երկրներում:

Դուրյանի առաջին համերգը կայացավ Փարիզում, որտեղ Շնյուվելորկեստը ֆիլհարմոնիկ» նվագախմբի հետ ներկայացրեց Մոցարտի դաշնամուրային 9-րդ կոնցերտը՝ մենակատարությամբ անվանի դաշնակահար Ալեքսիս Վայնսբերգի:

Մայիսյան Փարիզը շերմորեն ողջունեց իրեն քաշածանոթ նվագավարին: «Հաճախ չէ, որ հանդիպում, հայտնարերում ենք մեծանուն դիրիժորների: Օհան Դ. Նարկի՝ Փարիզով անցնելը երևոյթ է, որով տպավորված են ոչ միայն երաժշտասեր հանդիսատեսները... Նա մի բացառիկ նվագավար է, որի անունը դժվար է շնչառակել...», — զբում է երաժշտագետ Ժերար Մանոնին:

1981—82-ի ողջ շրջանում Դուրյանն իրականացրեց իր համերգային պայմանագրերը Գերմանիայի մի շարք նվագախմբերի հետ, հիշատակելի հանդիպումներ ունենալով Քենցինի, Մանհայմի, Դեարմշտադի, Ֆրանկֆուրտի, Բենսհայմի և այլ քաղաքների երաժշտասերների հետ, ամենքին պարզելով Բեթհովենի, Մենդելսոնի, Մալերի, Զայկովսկու, Շուտակովիչի, Ռեգերի, Շտամերի, Շուտակովիչի իր մեկնությունները:

Մանհայմի թատրոնի համայնքի հորելյանական համերգին Զայկովսկու «Զութակի կոնցերտը» վիրտուոզ կատարմամբ հնչեցրեց հգոր Օյստրախը: Թերթերն այդ մասին գրեցին: «Երկու մեծ արտիստների՝ վարպետ Օհան Դ. Նարկի և վիրտուոզ ի. Օյստրախի համատեղ նվաճումը»:

Զայկովսկու և Ռիմսկի Կորսակովի ստեղծագործությունները շուտով հնչելու էին Հռոմում, իսկ մեկ տարի անց Պալերմոյի, Միլանի, Կալիարիի հանդիսատեսները պիտի վայելիին Բրամսի, Սկրյաբինի ու Մալերի «Նուրբը, գեղանկարչորեն գունեղ ու հուզական» մեկնարանությունները, որոնց մասին հարուստ նյութ կա ժամանակի մամուլում:

1983-ին Ավինյոնի երաժշտական փառատոնի պատվավոր հյուրն էր: Այս գեղեցիկ քաղաքի մշակութային, երաժշտական կյանքին նա իր էջն ուներ ավելացնելու:

Հենդելի երգեհոնային կոնցերտների նրա վարպետ ու ոգեշնչ մեկնարանության յուրօրինակ ոճը, քեմական բացա-

որի կեցվածքը, զուսպ նվագավարական կերպը սիրելի եղան երաժշտասերին, այնպես որ շուտով Դուրյանը պետք է դառնար Ավինյոնի օպերային թատրոնի գլխավոր դիրիժոր, իսկ մինչ այդ դեռ փայլելու էր Մարսելում, Նիցայում, Լիոնում և այլ վայրերում ղեկավարած ու ղեկավարելիք համերգներում, օպերային ներկայացումներում, իհարկե, ավելի հաճախ՝ օպերաների համերգային կատարումների իր մատուցումներում: «Նիցայի օպերային թատրոնում Օհան Դ. Նարկը հանգես եկավ իբրև բացառիկ նվագավար, իբրև անհատականություն: Նա արքայարար տիրում ու ենթակայեցնում է նվագախմբին...», — գրում է «Նիս Մաթին» թերթը, «...Դիրիժորը վերակերտում է Բրուկների երաժշտությունը, ինչպես կվերակերտեր մի եկեղեցի... Մարսելի ֆիւարմոնիկ նվագախմբի հետ նրա ելույթը մեզ համար իսկական հայտնություն եղավ», — կարդում ենք մեկ այլ թերթում: Իսկ այն, ինչ կատարվեց քաղաքի Մայր Տաճարի սրահում, վեր է նկարութիւնում: Երկու հազար հանդիսատես փոթորկալից ծափահարություններով իրենց երախտագիտությունն էին հայտնում Ֆորեի «Ռեբվիեմի» և Գունոյի «Մեսսայի» դուրյանական մատուցման համար: «Դա երաժշտական մի իրադարձություն էր, որով միաձույլ էին հուզականն ու վեհը...», — գրեցին թերթերը:

Մարսելի օպերային թատրոնում կայացած հրաշալի համերգից հետո նվագախմբի երաժշտական առաջարկով կազմվեց մի համույթ և քանի որ նրանք խորապես տպավորված էին մասսարոյի արտիստական ու մարդկային կերպով, վճռեցին երաժշտական նորաստեղծ նվագախումբը կոչել Օհան Դուրյանի անվամբ:

1987-ի դեկտեմբերին, երբ Դուրյանը նշանակվեց Ավինյոնի օպերային թատրոնի գլխավոր դիրիժոր, թերթերը, մասնավորապես «Վոքյուզ Մաթինը» նրան անվանեց «Ավինյոնի նոր Պապը» (քաղաքը առաջներում եղել է Պապերի նստավայրը — Ռ. Մ.):

Դուրյանն այդ մեծ պատվին պատասխանելու էր արժանավայր պատվախնդրությամբ, անշահախնդրորեն ծառայելով ֆրանսիական մշակության, նա ամենաբարձր մակարդակով դասական երաժշտություն հրամցրեց արվեստա-

ներ հասարակայնությանը: Աւ զարմանալի չէ, որ հանդիսատեսը շատ բարձր էր գնահատում Հայ երաժշտի վաստակը, խոստովանելով, որ դա «գերազույն նվիրում է երաժշտարկնությունը՝ ընդհանրապես», կամ՝ «մենք մեծապես շահեցինք, որովհետեւ դիրիժորական հարթակում Օհան Դ. Նարկն էր»: — Իհարկե, արվեստ արժեկորպն է նկատում իսկությունը, տաելով. «Վազների Վալքրիներ» օպերան մենք երբեք այսպես չէինք լսել: Օհան Դ. Նարկն այն ղեկավարեց մոգական մի ուժով»:

Հնարավո՞ր է արդյոք հիշել ու հիշատակել բոլոր ելույթները: Ու մի՞թե պարզ չէ, որ Օհան Դուրյանն այն մեծ արվեստագետն էր, որ պարտություններ չէր ունենալու, քանզի իրեն առաջնորդող առավածային կամեցողությունն էր, ուժը, որը նույնիսկ եթե կյանքում փորձություններ էլ էր ուղարկում, ապա միայն իր կամքն ու տակաւությունը ճշտելու և գիմակայման լիցքեր հաղորդելու համար:

Դուրյանը զբանություն երբեք չէր մոռանալու իր հայ լինելը ու բողոքվին էլ պատահական չէ, որ նրա զեկավարությամբ արտերկրում ելույթ են ունեցել բազմաթիվ հայ երաժշտներ ու երգիչներ, ինչպես ասենք՝ Ժան Տեր-Մերկերյան, Սուսաննա Միլտոնյան, Լուիզա Պողապալյան, Ժիրայր Սերգոյան, Արման Արարյան, Ֆարիբեկ Սանոյան, Վահան Միրաբյան և այլք...

Ի դեպ, Ֆարիբեկ Սանոյանը փայլուն ձեռվ հանդես եկավ Ժարապոյի ղեկավարությամբ՝ Նարեկ Դուրյանի բնամուրած «Անուշ» օպերայում: Այս մասին վկայում է ինքը՝ ներկայացման անզուգական նվագավար Օհան Դուրյանը: «Անուշի նման դերակատարումներ թիւ եմ տեսել ու լսել»:

1988—90-ական թվականներին, երեք տարի շարունակ, երկուական ամսով, Օհան Դուրյանը Հարավաֆրիկյան Հանրապետության հրավիրյալ նվագավարն էր, որ շարաթական երկու տարբեր ծրագրերով համերգներ էր տալիս Թեյֆթառություն և Յոհաննեսբուրգում:

Եվ ամեն անգամ, երբ նա բեմ էր մտնում ու կանգնաւմ նվագախմբերի առջև, ինչպես ժամանակին նիշտ նկատել էր ֆրանսիացի երաժշտը, դա այսքան թեթեւ ու աննկատ էր

անում, կարծես դուրս սահած լիներ հեքիաթի կախարդական տուփից։ Արդեն լրիվ ճերմակած, անհնազանդ մաղերով, մանր շարժումներով։ Երբ սկսում էր նվազավարել, խորհրդավոր կերպարանք էր առնում, կարծես հայտնվում էր հմայումի տարերքի մեջ։ Նա իր ներշնչող ու պարտավորեցնող ուժով, առանձին-առանձին՝ երաժշտություն էր քաշում ամեն մի գործիքից, ապա շաղախելով բոլոր հնչյունները, դարձնում միաձույզ, համապարփակ երաժշտություն ու շաղ տաշլիս դահլիճով մեկ։ Նա, իրոք, վերամարմնավորում էր իր ներկայացրած կոմպոզիտորներին։ Մի օր թրամս էր, մի օր թրուկներ, Վագներ, Մոցարտ, Բեթհովեն, Մենդելսոն, Վերդի, Խաչատրյան, Շոստակովիչ և այսպիս անվերջ փոփոխվում էին հերոսները ու իր կերպավորումների մեջ շկար նրանց կերպին անհարազատ ոչ մի պահ կամ գիծ։ Դուրյանը ճշշտորեն էր ընթերցում, վերծանում ու թարգմանում ամեն մի երաժշտություն։ «Նրա ժաւա շարժումները պարունակում են մեծագույն էներգետիկա, լիցքեր, որ նվազավարի մատներից անցնում են նվազախմբին, քաղելով շերմ ու ճշգրիտ կատարում։ Նա դյուքսներով երաժշտություն է կերտում...», — վկայում է «Քեփի Թայմ» թերթը։

Այս համերգներին Դուրյանի հետ հանդիս եկան տառնյակ լավագույն կատարողներ, մեներգիչներ, այդ թվում նաև՝ Ալիս Շահմիրյանը։

Ինչպես ամենուր, այստեղ նույնպես հանդիսատեսն իր ցանկությունն էր հայտնում նորից ու նորից տեսնել Դուրյանին իրենց բեմերում, իրենց նվազախմբերի գլուխ կանոնած, որովհետեւ, ինչպես ասում էին, մասնաւո Օհան Դ. Նարկն իր համերգներով հիմնավորապես հաստատվել էր տեղի երաժշտասերների սրտերում։

Հագեցած էր ծրագիրը նաև Ավինյոնի օպերային թատրոնում։

Ֆրանսիս Պուկանկի «Քարմելիդների երկխոսությունները», Մասնեի «Թաիսը» օպերաների դուրյանական ղեկավարումները առիթ էին տալիս խորհելու, որ նա բացահայտ վարպետություն ուներ նրբազգացորեն ու անխալականորեն պահպանելու նվազախումբ և բեմ ներգաշնակությանց։ Այն-

քան ճշգրտորեն էր դասավորում հեղողականությունը, որ երբեք նվազախումբը չէր խլացնում երգեցողությունը։

Հանդիսատեսների ու մասնագետների խոստովանությամբ, Դուրյանը կարողանում էր Մեծ պահեր պարգևել ամենքին։

Այսպիսի արձագանքներ ունեին օպերային նվազախմբի կատարմամբ Մոցարտի «Ռիեվիեմի», Հայդնի, Բեթհովենի սիմֆոնիաների նրա նվազավարական մատուցումները, որոնց մասին հարուստ նյութեր կան ժամանակի մամուլում։

Թվում է. ի՞նչ կար, որ պիտի խոռվեր արվեստագետի իր փառքը վայելող Օհան Դուրյանի հոգին։

Որդին ամուսնացել էր պատվարժան հայի ընտանիքում մեծացած աղջկա հետ, ապրում էր Փարիզում, կինը՝ իր բալոր հոգսները մեղմող-փարատող, սիրող մի էակ, ամեն ինչ անում էր, որպեսզի ընտանեկան որևէ հարց շխանգարեր իրենց երաժշտական գործունեությանը, համերգային շրջագայություններն աշխարհի տարրեր երկրներում, որքան էլ հոգեցուցիչ, այնուամենայնիվ, իսկական ստեղծագործական հաճույք էին պատճառում և նա տեսնում էր իր բազմամյա վաստակի լիարուն գնահատությունն ամենուր, բայց... Ահա այդ բայցն էր, որ թարուն կրծում էր սիրտը։ Ինչո՞ւ պիտի այդքան հեշտորեն մոռացվեր այն ավանդը, որն ունեցավ իր հայրենի մշակույթի զարգացման գործում, ինչո՞ւ պիտի Հայուստանից արտագաղթած մտավորականների անունն արտաքրելն անդամ արգելվեր, և ժողովուրդը ոչինչ չիմանար իր նմանների հետագա ճակատագրի մասին։

Միթե իրենք Հայրենիք էին դավաճանել... Մրանք տիմուր, շատ տիմուր մտածումներ էին, որոնց վերջը պիտի դրվեր մի օր և այդ ամենից հիշարժան օրը եկավ Հայաստան Հայրենիքի անկախացման հետ։

1991 թվականի հունվարին մասնաւորուն դարձյալ Հարավաֆրիկյան Հանրապետությունում էր։ Փեյփթառունը «Մոցարտյան» էր հայտարարել համերգաշրջանը, որի փառավոր նախերգանքը եղավ Օհան Դ. Նարկի ղեկավարությամբ հանճարեղ Ավստրիացու սիմֆոնիայի մատուցումը։

Հայ նվազավարն այստեղ ուներ իր հանդիսատեսը, իրեն երախտագիտորեն գնահատողը, որը նույնշափ տպավորված

Էր Սեն Սանսի Յ-րդ սիմֆոնիայի դուրյանական՝ զարմացնելու շափ ինքնատիպ մեկնաբանությամբ:

Հիշարժան է նաև այն, որ արդեն մի քանի տարի Դուրյանը նվագավարական հատուկ դասընթացներ էր տալիս տեղի երաժշտանոցում:

Այդ տարին էլ, ինչպես նախորդները, հագեցած էր ծրագրային նախնական պայմանավորվածություններով, տարրեր նվագախմբերի ու օպերային թատրոնների հետ կնքված պայմանագրերով:

Սակայն ճշմարտապես հայտնի է, որ որոշողը՝ որոշում, Աստված տնօրինում է:

Մարսելում նրան ավետիս կար Հայրենիքից: ՀՀ մշակութիւնախարար, անվանի մտավորական ու գրող Պերճ Զեյթունցյանից էր: Պատվախնդիր հայի, քաղաքացու, պաշտոնատարի գիր էր:

«Թանկագին հայրենակից,

Արտահայտելով մեր ժողովրդի ցանկությունները, գիմուն Զեղ Հայաստանի Հանրապետության մշակութիւնախարարության անունից:

Ճակատագրի բերումով ապրելով աշխարհի հեռավոր անկյուններում, մենք երբեք չենք կորցրել Հայրենիք—Սփյուռք կապը, օգնել և ոգնորել ենք միմյանց հանուն մեր ժողովրդի հարատեսության, հայ մշակութիւն պահպանման և զարգացման:

Ժողովրդի կամքով և հաստատակամությամբ ստեղծված Հայաստանի Հանրապետությունը իր առաջին և դժվար քայլերն է անում ինքնուրույնության ճանապարհին, ծվնրան, իր մեծ առաքելության գործընթացում, սատար պետք է կանգնենք նաև մենք՝ հայ արվեստագետներս, Հայրենիքի և Սփյուռքի մշակութային գործիչներս: Մրանով է պայմանավորված Զեր՝ համաշխարհային համբավ ունեցող հայորդումանակցության անհրաժեշտությունը հայրենի մշակութիւն զարգացման գործում:

Պատիվ ունեմ հայտնելու, որ Դուք ընտրված եք Հայաստանի Հանրապետության պետական ֆինանսների գեղարվեստական խորհրդի պատվավոր անդամ:

Հուսով եմ, որ հայ մշակութային կյանքում Զեր տաղանդի ներդրումը մեծապես կնպաստի Հայրենիք—Սփյուռք կապերի ամրապնդմանը և էլ ավելի բովանդակալից կղարձնի մեր ժողովրդի հոգեւոր աշխարհը:

Առողջություն, երշանկություն: Ստեղծագործական նոր վերելքների անկեղծ ցանկություններով և հարգանոք՝

ՀՀ մշակութիւն նախարար Պերճ Զեյթունցյան»:

Պատմական ժամանակներ էին, ազգային արթնացումի, անկախության, հիմնարար վերափոխումների ժամանակներ: Պատմաբանը կասեր՝ դարակազմիկ:

Հայն ի՞ր արյամբ ի՞ր իրավունքն էր հաստատում ի՞ր հողի վրա, և այդ քաղցր բառը՝ «Արցախ», որ օտար լրատուների շուրջներից նորանվամբ էր հնչում իրեւ Ղարաբաղ, օտար ափերում քանի՛ քանիսի՛ սիրտն ու հոգին էր միացնում տագնապի, սպասումի, անորոշության այրումով:

Օհան Դուրյանն էլ անսաելի ապրումներով էր հետեւում արտերկրի արձագանքներին՝ հեռվից հեռու տեսնելով պատերազմի մեջ հայտնված հայրենակիցների ազատական, հերոսական մաքառումը մի կողմից, մյուս կողմից՝ այն բոլոր զրկանքները, որ կամովին կրում էր իր ժողովուրդը՝ հանուն պատմական իղձի կայացման: Յոթանասունին մոտեցող արվեստագետի մտածումները, անցյալի բոլոր դառնությունները թոթափված, կապված էին այդ ժանր ժամանակների հայրենական անցուղարձերի հետ, և նա տիկնոջ հետ այս առթիվ ինչ-ինչ ծրագրեր էր մտմտում, երբ, պահին շատ համապատասխան, առավ անակնկալ հրավերը: Միանգամից հոգեփոխվից ու պայծառացավ. ժողովուրդն իր զավակին չէր մոռացել և արդարացիորեն սպասելիքներ ուներ նրանից: Իրականում, տատամսելու կարիք էլ չկար, որովհետև տունդարձի շմարտղ մի հույս, մի մտածում միշտ էլ փայփայել էր, երբեմն արտահայտվելով այդ մասին շատ մտերիմ մարդկանց մոտ, երբեմն լուելլայն: Դա իր հոգու անթեղն էր, որի երեսից պետք էր զգուշորեն ետ առնել շերմությունը թաքցնող, պահպանող մոխիրը:

Ժամանակ էր պետք ու այդ ժամանակը եկավ...

## ՎԵՐԱԴԱՐՁ

Դու իմ վերջին հանգըլան,  
Հող իմ հայրենի...  
(Ռ. Մ.)

Մի օր հեռաձայնեցին Նյու Յորքից: Երեանի կոնսերվատորիայի փոխտնօրեն Արմեն Սմբատյանն էր, պատվոր հատուկ հրավերով, համաձայն որի 1991-ի ամռանը Օհան Դուրյանը եկավ Երևան, մասնակցելու մայր երաժշտանոցի և Նյու Յորքի Զուլիարդի ակադեմիայի փոխհամագործակցությանը նվիրված հանդիսություններին:

Թե ինչպես ընդունեցին մասսարոյին, դժվար է նկարագրել: Կարուր երկուստեք էր, հույզը՝ հայկական: Այլ կերպ հնարավոր էլ չէր պատկերացնել՝ տասնյոթ երկար ու ծիգ տարիների հանիրավի բաժանում և ահա նորից հանդիպում:

Հետևելով ամերիկացի մեր անվանի հայրենակցուհի Լյուսի Իշխանյանի ազգանվեր օրինակին, որը հիմնադրամ էր ստեղծել Երևանի կոնսերվատորիայի լավագույն ուսանող-դաշնակահարների համար, ինքն էլ նույն արեց լավագույն ուսանող-նվագավարների համար:

Հենց այդ օրերին էլ որոշեց պայմանագիր կնքել նախարարության հետ ու վերջնականապես վերադառնալ Հայրենիք:

Արտասահմանում դեռ գործեր ուներ, նախապես հաստատված համերգներ:

Նորից գալու էր աշնանը և արդեն որպես Օպերային թատրոնի գլխավոր դիրիժոր, այդուհետ իր արվեստի զերմությունն էր պարգևելու բոլոր նրանց, ովքեր այնքան երկար էին սպասել սիրելի մասսարոյին:

Սեպտեմբերի 28-ին հոգևոր մեծ համերգ էր օպերայի և բալետի թատրոնում, շաբաթ երեկո էր՝ Մյուսունօրհնության արարողության նախօրեն:

Սիմֆոնիկ նվագախմբի հետ հանդես էին գալիս Հայաստանի պետական ակադեմիական երգչախոսմբը և մեներգիչներ Հասմիկ Պապյանը, Գայանե Ներսիսյանը, Հովհաննես Փաստացյանը և Վալերի Հարությունյանը:

Նվագավարական հարթակում Օհան Դուրյանը ոգեղեն

զրույցի էր բհնվել վերդիի հետ, որն ասես աղջթիք էր կանչ չել երաժիշտներին ու երգիչներին:

Լեփ-լեցուն դաշլիճի կամարների ներքո, որպես անսպառ էներգիայի աղբյուր, որպես ճառագումի խոտացված մի մարմին, Դուրյանը վերակերտում, վերանկարում էր մեծ դասականի անմահ գործը՝ ի հաճույք նվագախմբի, երգիչների ու հոգմունքից շունչ պահած հանդիսականի:

Նման համերգների ու նման նվագավարման մասին է ասված՝ արքայական:

Եկավ նորից, տեսավ ու... Հաղթեց: Հաղթեց իր արվեստի անգերազանցելի բովանդակությամբ, կշռութով, որ կեսդարյա փորձի իմաստնացած կուտակում էր, հաղթեց իր պարտքը գիտակցող զավակի սիրով:

Շուտով նա ստանձնելու էր նաև իր երաժշտական առաջնեկի, ինչպես ինքն է ասում, իր զավակի՝ Հայաստանի ուղիոյի և հեռուստատեսության սիմֆոնիկ նվագախմբի ղեկավարումը:

Կարճ ժամանակ անց, հիմնականում երիտասարդ երաժշտներից բաղկացած այս կոլեկտիվը ձեռք բերեց միջազգային բեմ ենելու մակարդակ և, եթե նախկինում հանդես էր եկել միայն խորհրդային համերգասրահներում, հիմա արդեն իր հաջողության պտուղները պիտի վայելեր Ֆրանսիայի մի շարք քաղաքներում կայանալիք իր համերգներից: Ու վայելեց: Տեղի մամուլը ամենայն դրվագներով արձագանքեց հայ երաժիշտների ելույթներին, շեշտելով, որ հաջողության ամենամեծ գրավականը նվագախմբի գեղարվեստական ղեկավար, մեծանուն Օհան Դուրյանն էր:

Դա 1995-ի սեպտեմբերին էր, իսկ մինչ այդ մեր բեմերում բազմից վայելեց մեծ երաժշտի նվագախումբը, կատարյալ վայելումի բազում պահեր պատճառելով դասական մեծ երաժշտության իսկական սիրահարներին:

1992-ին «Օհան Դուրյան—70» հոբելյանական նշանաբանով մի քանի խոշոր ելույթներ կայացան՝ ի պատիվ մեծ վարպետի և նրա ղեկավարությամբ: Անմոռանալի համերգներ էին, երաժշտական բարձրարվեստ կատարումներ, որոնց իրականացումով կարծես ի կատար էր աժվում մասսարոյի՝

«Իմ մեծագույն ցանկությունը հայրենի երաժշտական կյանքը նոր խոսքով լրացնելն է» բաղձանքը:

Նա միայն նոր խոսքով չէ, որ լրացնում էր մեր երաժշտական իրողությունը, նա բոլորովին նոր շունչ ու ոգի էր ներդնում Հայրենիքի հոգեոր վերընճյուղման գործընթացում և իր նվիրական մասնակցությամբ՝ մտածողության ու գործելակերպի արդիական ոճ հաղորդում մշակութային հասարակական ընկալումներին:

Հորելլանական համերգների շրջանակներում որքա՞ն հագեցած ու մեծընտիր ծրագրով էր հանդես գալիս նրբաճաշակության մարմնացում Օհան Դուրյանը՝ հայ և համաշխարհային դասականների սիմֆոնիկ ստեղծագործություններ, օպերաների համերգային կատարումներ: Նրա ղեկավարությամբ, առանձնակի սիրով ու մասնագիտական խորին պատասխանատվությամբ էին հանդես գալիս տարրեր նվագախմբեր, երաժշտ-մենակատարներ, մեր անվանի երգիշ-երգչուհիները, Հ. Զեքիչյանի, է. Սատուրյանի երգչախմբերը: Սա մեր երաժշտական կոլեկտիվների գեղեցիկ, ներդաշնակ համագործակցության վկայությունն էր, ու նաև նկատելի էր այդ դժվարին ժամանակներում այնքան անհրաժեշտ բարձր արվեստի միավորող-համախմբող ուժը մեզանում:

Դուրյանը համերգային հրավերով աշնանը Կրակովում մասնակցեց երաժշտական միջազգային փառատոնին: Տեղի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ ներկայացրեց Վերդիի «Ռեվիվեմը», Հայդնի, Բրուկների սիմֆոնիկ գործերը և այնքան տպավորիչ ու գեղեցիկ, որ երաժշտաները հայ նվագավարի ինքնատիպ մեկնարանությունները բնորոշեցին իրեն արվեստի բարձր արտահայտություններ, «կամուրջ՝ երկնքի ու երկրի միջև»:

Ոգեղեն ինքնադրսելորման նման մի շքնաղ կամուրջ պիտի կամարեր մասսարոն «Արամ Խաչատրյան-90» հորելլանական համերգաշարին, որ մայրաքաղաքի կյանքում արձանագրվեց որպես մշակութային մեծ իրադարձություն:

Օհան Դուրյանն իր խոնարհումի տուրքը աշխարհահռչակ հայ կոմպոզիտորին մատուցեց 1993-ի մայիսի 29-ին՝ Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում, ուղիղությունության մասնակիւմ հետուատատեսության նվագախմբի հետ: Այդ օրը նա ղեկա-

վարեց Բրամսի «Դո մինոր» և «Ոն մաժոր» սիմֆոնիաները: «Արամ Խաչատրյանի հետ հարաբերություններս միշտ շերմ են եղել, նա ինձ հովանավորել ու սիրել է իր զավակի պես: Դեռ այն տարիներին, երբ իմ առջև արգելվներ սկսեցին դնել, նա հայրաբար ինձ համոզում էր ճակատայնորեն շընդդիմանալ կարգերին և դա անում էր հանուն ինձ: Նա մեր ազգի Մեծ որդին է, և ես բախտ եմ ունեցել արտասահմանում նույնպես ղեկավարել իր գործերը: Վերջին անգամ՝ ԱՄՆ-ից, Եվրոպայից հետո, Արամ Խաչատրյան եմ ներկայացրել Հարավաֆրիկյան Հանրապետությունում:

Նրա հորելլանական հանդիսությունները սկսեցի Բրամսով, որպեսզի երկու հանճարեղ մարդիկ՝ 160-ամյա Բրամսն ու 90-ամյա Խաչատրյանը, այս գեղեցիկ օրվան հանդիպեն իրար ու լինեն իրար կողքին, — համերգից անմիջապես հետո այսպես ասաց նվագավարը:

Այս ծրագրով նա ներկայացրեց Բրամսի 3-րդ, 4-րդ սիմֆոնիաները, Ա. Տիգրանյանի «Անուշ» և Գ. Դոնիձեատիի «Պողիկտոս» օպերաների համերգային կատարումները:

1993-ին հայ երաժշտական իրողությունը նշանավորվեց երկու հրաշալի ներկայացումներով, Տիգրան Լևոնյանի բեմադրությամբ՝ Գաետանո Դոնիձեատիի «Պողիկտոս» օպերայով և Լորիս Ճգնավորյանի «Օթելո» բալետով: Նվագավարում էր Օհան Դուրյանը: Բալետային բեմադրիչը Վիլեն Գալըստյանն էր:

Սա, իրավ որ, մշակութային մեծ իրադարձություն էր՝ տաղանդավոր արվեստագետների համատեղ, հրաշալի նվաճում:

Իհարկե, ցանկալի էր, որ նման փայլուն համագործակցություններն, ի շահ մեր ազգային մշակույթի զարգացման ու բարգավաճման, շարունակություն ունենալիքն, բայց ցավալիորեն այդ շրջանում էր, որ ներքին խժութությունների պատճառով սկսված տհաճ մթնոլորտից հիասթավիված, Օհան Դուրյանը ստիպված էր թողնել Ազգային օպերան: Սա մի հարց էր, որ պետք է վճռվեր ոչ թե հանրապետության մշակույթի նախարարության, այլ կառավարության և իշխանության բարձրագույն մարմինների միջոցով: Թաղություն շու-

նեցան, շլուծեցին, ինչի պատճառով հայ հանդիսաւոեսը պիտի զրկվեր Օհան Դուրյանի օպերային նվագավարումներց հայ օպերային թատրոնում:

Աշնանը, ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ «Ավստրիական երաժշտության օրերին» նվիրված երեք խոշոր համերգների ղեկավարումից հետո, շուրջ մեկուկես տարի նա չէր երևալու մեր քեմերում:

Խնդիրն այն էր, որ մեզանում արվեստի աշխարհը չէր կարող ձերբագատ լինել հնուց ժառանգածին:

Ամեն դեպքում տհամ մթնոլորտի պատասխանատուն մարդիկ էին, անձեր, որոնք այնքան էլ չէին հեռացել հին բարբերից ու հովանավորյալ լինելու մտայնությունից:

Օհան Դուրյանը ոչ միայն հեռու էր այդ հոգեբանությունից, այլև միանգամայն խորթ այն բոլոր բացասական դրսեվորումներին, որոնցով, ի վերջո, խաթարվում է մշակութային զարգացման բնականոն ընթացքը:

Այն հույսով, որ ասպարեզում վերջապես ինքնամաքում կլինի և արժեքները կգնահատվեն արժանվույն, առայժմ նա պիտի ղեկավարեր իր հիմնադրած նվագախումբը, շատերին ապացուցելով, որ պարտադիր չէ ձեռքի տակ ունենալ երաժիշտներով ու գործիքներով հագեցած երկհարյուրանոց նվագախումբ՝ հայ ու համաշխարհային երաժշտական գոհարները լավագույնս մեկնաբանելու և մատուցելու համար։ Կարեռը գործի փայլուն իմացությունն է և անկաշառ նվիրումը մեծ արվեստին։

Թե ով ինչպես էր վերևներից տեսնում ու գնահատում այս ամենը, պիտի հուզեր մի փոքր ներքների կամակատարներին, իսկ ինքը Օհան Դուրյանն էր և գիտեր, որ իր ժողովուրդը ոչ ավել, ոչ պակաս՝ պաշտում է իր շնորհյալ զավակին։

Այնպես որ, դեռ պղտոր ջրեր կային զուլավելու, իսկ աղամանդը, որտեղ էլ լիներ, երբեք չէր կորցնելու փայլը։

Բնական էր, որ նրա հետագա անելիքների մասին երեմն տագնապով, երբեմն զայրութի ու բողոքի ձայնով, սկսեցին խոսել հիմնականում լրագրողները և մի քանի երաժշտագետներ (մասնավորապես՝ Յ. Բրուտյանը—Ռ. Մ.): Զարմանալի չէր նաև ազդեցիկ մտավորականության պահվածքը... Ճշմարգական է մտածում Դուրյանը։

տության դատը կարող էր հարաբերություններ խզել... ժամանակն անցնում էր: Եվ ժամանակն էլ ճշտելու էր ամեն ինչ։

Մինչ այդ մաստրոն իրականացրեց համերգային իր ելույթները Գերմանիայում, Փարիզում, ապա Վարշավայում, Կրակովում, Կիևում...

1996-ի ապրիլի 21-ին, Կիևի Ուկրաինական տան մեծ սրահում, հանրապետության Ազգային սիմֆոնիկ նվագախմբի կատարումով Դուրյանը ներկայացրեց Բերլիոզի, Դերյուսիի, Ռավելի սիմֆոնիկ ստեղծագործությունները, որոնց նվագավարական խորիմաստ մեկնությամբ վերստին հավաստեց, թե որքան բազմերանգ ու լուսամիջնդ է երաժշտական ընկալումների իր ներկապնակը։

1974-ից ի վեր երկար ընդմիջումից հետո ուկրաինացի հանդիսատեսը նորից ծափահարում էր հայ նվագավարին, որի վերջին համերգը նախկին Խորհրդային Միությունում կայացել էր այստեղ։

Կիևից վերադառնալուն պես, հորելյանական համերգով, որ նվիրված էր ուղիոյի և հեռուստատեսության նվագախմբի 30-ամյակին, նա նորից բեմ ելավ Ամերիկյան համալսարանի լեփ-լեցուն դաշլիճում։

Որշափ քննուց, խոր ու մեղեդային ներկայացրեց «Երևանյան էտյուդների» («Էնզելի») սպենդիարյանական ոգու ազգային, երաժշտական համապարփակությունը: Իսկ Դվորժակի 8-րդ սիմֆոնիան, շնորհիվ նվագավարի զուսպ, հիպենսացնող ու կառուցիկ մեկնաբանության, հնչեց երաժշտական կերպավորման բյուրեղային մաքրությամբ։ «...Սպենդիարյանը շատ մեծ կոմպոզիտոր է, որի ողջ ստեղծածը համաշխարհային հնչեղության գործեր են։ Նրա «Ալմաստը» բնավ չի զիջում Վագների օպերաներին։ Նրա երկերը նրանցակության, ոգելենության մարմնացում են», — այսպես է մտածում Դուրյանը։

Հոգու երաժշտագրյան տան  
(Երևան—1996 թ. Բերեզովենյան համերգաշար)

Ճշմարիտ արվեստագետը մեծ արվեստի պարտապանն է իր ողջ կյանքում, որքան տալիս է, այնքան ավելանում է

տուրքը: Եվ խորհրդանշորեն գեղեցիկ է այն, որ որքան տալիս, այնքան հարստանում է: Նա միշտ ձգտում է ամենա-ամենային և դա է նրա ստեղծագործության մղիջ ուժը: Ար-վեստում կանգ չպիտի լինի, դա հավասարազոր է մահվան:

Ահա այս գիտակցումով է ապրում ու շնչում հոչշակավոր նվագավար Օհան Դուրյանը, որի ոգեղեն պարտքերից մեկի շքեղ մատուցման վկան եղավ հայ արվեստասեր հասարա-կայնությունը՝ 1996-ին, երեսնի՝ Ամերիկյան համալսարանի դահլիճում «Բեթհովենյան համերգաշարի» կայացման բո-լոր օրերին:

Դուրյանը Բեթհովենի անմահ սիմֆոնիաների բացառիկ մեկնաբանողն է եղել ստեղծագործական իր ողջ գործունեու-թյան ընթացքում և հայ, և համաշխարհային բեմերում:

Ընդհանրապես, Մեծ գերմանացու սիմֆոնիաների գոր-ծիքավորումների նկատմամբ եղել են անթույլատրելի կամա-յական մոտեցումներ՝ հատկապես 3, 5, 7, 9-րդ սիմֆոնիա-ների հանդեպ: Որքան էլ զարմանալի, դա արել են ո՛չ ավել, ո՛չ պակաս՝ աշխարհահոչակ նվագավարներ, ինչպիսին ասենք Ֆելիքս Վայնհայդներն է կամ Հերբերտ ֆոն Կարա-յանը:

Ինչ է կատարվել: Հակառակ այն բանին, որ Բեթհովենի սիմֆոնիաները հրաշալի են հնչում այն գործիքավորումներով, ինչպես ինքն է գրել, նրանցում կատարվել են փոփոխու-թյուններ, կրկնապատկվել է որոշ գործիքների թիվը այն թյուր արդարացմամբ, թե հանճարեղ կոմպոզիտորը, ունե-նալով լսողության արատ, բնական պատճառով հնչողակա-նության հարցում կարող էր և թերանալ: Խնդրի կարևորու-թյունը թերևս պիտի մտահոգեր երաժշտական աշխարհի «դատավորներին»: Բայց... Ու ստացվում է այնպես, որ տա-րիներ անց մի նոր դիրիժոր, մտածելով ավելի հնչեղ ներ-կայացնել այդ սիմֆոնիաները, կարող է նոր փոփոխություն-ներ մտցնել արդեն փոփոխված գործիքավորումների մեջ: Եվ կգա մի օր, որ Բեթհովենը «չի ների» այս վերաբերմունքը:

Նման ձևով են վերաբերվել նաև Հայդնի որոշ գործերի նկատմամբ:

Ունենալով ոչ միայն հանճարի գործերի, այլև հեղինա-կային բոլոր սկզբնաղբյուրների անազարտ մեկնաբանու-

թյունների բացառիկ պատասխանատվություն, Օհան Դուր-յանը, որ ամենուր էր վարվել այդպես, ոյնչեց հայ ունկընդ-րին պարզեց Բեթհովենի բոլոր սիմֆոնիաները՝ իրենց ան-կրկնելիորեն ճիշտ ու գեղեցիկ գործիքավորմամբ, երաժշտ-ական հնչողականությամբ, միաժամանակ՝ կատարել դրանց ձայնագրությունները Հայաստանի ռադիոհեռուստատեսու-թյան սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ:

Հիրավի, երաժշտական հրաշալի մի նվիրում ներկա հան-դիստեսին ու սերունդներին: Բեթհովենյան համերգաշարն հոկապես վերածվեց հոգեոր տոնակատարման, որտեղ կա-րևորված էին նաև մեր մշակույթի երախտավոր, երաժշտա-գիտության պրոֆեսոր Ցիցիլյա Բրուտյանի նախահամերգա-յին առաջնելույթները բոլոր ժամանակների խոշորագույն երևույթներից մեկի՝ կլուգիկ վան Բեթհովենի տիեզերա-շունչ երաժշտության մասին:

Մեծ դասականի ստեղծագործական ներաշխարհի նրբին գաղտնիքներին խորապես հասու՝ Դուրյան-նվագավարը վերհանեց նրա երաժշտական ավանդույթը, ուր հարազատո-րեն պահպանված էին հեղինակի խոհափիլիսոփայական, մե-զեզային հայեցումները, ոճը, ժամանակին համահունչ ինք-նատիպ մտածողությունը:

Ամեն ինչ ներդաշնակ էր՝ և ռադիոհեռուստատեսության սիմֆոնիկ նվագախմբը, որ կատարողական վարպետության օրինակ էր, և վեհ երաժշտության սիրահար ու գնահատող հանդիսատեսը և, իհարկե, համակ ներշնչանքի մարմնացում, ամենահմա նվագավար Օհան Դուրյանը:

Աներկրա է հավաստումը, որ իր արածը իսկական սըմ-բանք էր, մինչև ուզն ու ծուծը մեծ խորհրդով թաթախված արվեստագետի սիրանք:

Բեթհովենյան բոլոր սիմֆոնիաների համերգաշարից հետո Օհան Դուրյանը ձեռնարկեց ֆրանսիական երաժշտության 19-րդ դարի երկու խոշոր գագաթների՝ կլող Դերյուսիի և Հեկտոր Բերլիոզի սիմֆոնիկ ստեղծագործություններով սկըս-վող նոր ելույթները՝ Հայաստանում Ֆրանսիայի գեսապանու-թյան հովանու ներքո: Հայ երաժշտասերը խորին շնորհակա-լրանքով պիտի ընդուներ Դերյուսի «Յավլնուած ետկեսօրյա Հանգուտի պրելուդի», Բերլիոզի «Յանտարիկ սիմֆոնիայի»

և Դուրյանի «Կոմիտասիանա» սյուխտի դրամատիկորեն հագեցած վեհ ու հանդիսավոր մատուցումը:

Նվագավարը ոչ թե ղեկավարում, այլ ճարտարապետական համաշխափությամբ երաժշտական տաճար էր կերտում:

Կարճ ժամանակ անց, համերգային հրավերով, Օհան Գուրյանը նորից կեհաստանում էր: Բրամսի «Գերմանական» ոեքվիեմն էր ներկայացնում կրակովում, Վարչավայում, Կատովիչեռում, Պոզնանում... ծանոթ բեմեր, թարմ հիշողություններ: Այստեղ 1994-ի մայիս-հունիսյան ելույթների մասին դեռ չեն մոռացել, երբ հայ նվագավարը նորից այցելեց իրենց:

Կեհաստանի հետ Գուրյանը ստեղծագործական երեսնամյա կապեր ունի, երկիր, որտեղ խոշորագույն յոթ ֆիլհարմոնիկ և մեկ ռադիոնվագախումբ էր ղեկավարել դեռ երեք տասնամյակ առաջ և որտեղ իրեն անվանել էին Արևելյան Եվրոպայի Տոսկանինի: Թեև փոխվել էր հանդիսատեսը, բայց փոխված չէր վերաբերմունքը դասական բարձրառն, ընտիր երաժշտության հանդեպ:

1997 թվականն էր: Տարին հորելյանական էր Օհան Գուրյանի համար, և նա իր 74-րդ գարնանը գեղեցիկ, շատ գեղեցիկ նվեր արեց հայ երաժշտասերներին «Արամ Խաչատրյան» համերգասրահում: Առաջին անգամ հնչեցնելով գերմանացի հանրաճանաչ կոմպոզիտոր Ֆելիքս Մենդելսոնի՝ Հազվագեղ կատարվող 3-րդ և 4-րդ սիմֆոնիաները:

Քնարական երաժշտության ոգեշունչ կատարմամբ ռադիոնվագախումբը վկայեց մի նոր մակարդակ: Զանցած կես ամիս, նույն համերգասրահում նվագախումբը՝ մասնարոյի ղեկավարությամբ ներկայացրեց հատվածներ Վագների «Էլեկտրան», «Տրիստան և Իզոլդա» օպերաներից (մենակատար՝ Լիանա Վարդանյան) և Անտոն Բրուկների 4-րդ սիմֆոնիան:

Եվ ոչ մի շափազանցություն չկա թերթերի այն արձագանքներում, թե ներկաները համերգն ունկնդրեցին «շունչները պահած»:

Օհան Գուրյանի 75-րդ աշունը այս նույն դահլիճում, իր արվեստի բազում սիրահարների, մտերիմների, Հայաստանում արտասահմանյան երկրների դեսպանների, մշակույթի անվանի գործիչների, բազմաթիվ այլ հյուրերի խանդավառ ներկայությամբ էր նշվում: Մեծարումը, պաշտոնական մա-

սով, նման չէր այն հորելյաններին, որոնց ժամանակ կառավարական օթյակներից «մեղմանուշ» ժպտում են երկրի այրերը: Գուցե դա էր ճիշտը, թե չէ հանկարծ մի երաժշտական երկրագործությունը հարցնել, թե ինչու մասնաւոր տարի ապրելով Հայրենիքում, շարունակում է մնալ Ֆրանսիայի քաղաքացի: Չէր լինի ասել, թե իր ցանկությամբ է:

Ահա այդպես, մանկական ժպիտը դեմքին, փոքրամարմին, ծերունազարդ վարպետը, դահլիճում նստած, ողջույնի շերմ խոսքեր էր լսում՝ ակնհայտորեն ուրախ, որ իրեն անկեղծորեն գնահատող ու սիրող այս հանդիսատեսի համար է բեմ ելնում և շարունակելու է այդուհետ էլ իր արվեստը պարզել նրան: Մնացածն այնքան էլ կարենոր չէ: Իսկ ինչ վերաբերում է կյանքի 75 տարուն, ապա դա արվեստագետի, ստեղծագործ մարդու համար ընդամենը երրորդ երիտասարդությունը է, քանի հոգում չի թուլացել ապրումի կրակը:

Օհան Գուրյան-աստղի անվամբ երկնքում մի նոր աստղ կողմեց, եղավ ոսկե մեդալ, սակայն ամենից հուզիլը դահլիճի ծափահարություններն էին, որոնց վերջը չէր երևում:

1998-ի սկզբներին, լուս Անշելեսի «Լարք» երաժշտական միության հրավերով, մասնարուն այստեղ ընդամենը երկու փորձով ղեկավարեց մի համերգ, որն ինչպես գրում է երաժշտագետ Անդինե Քեշիշյան-Մուրադյանը «Ոչ թե համերգ, այլ ցնծության փառատոն էր... քսան տարի անց մեր զաղութը դարձյալ առիթ ունեցավ վայելելու աշխարհահռչակ պանվական երաժիշտ-խմբավար Օհան Գուրյանին...»:

Երեանում հաճելի անակնկալ էր սպասում մասնարոյին: Հունվարի 19-ին Հայաստանի ազգային ուղղոյի տնօրենը լրագրողների հետ իր ասուլիսում հայտարարեց, որ այսուհետ ուղղոյի սիմֆոնիկ նվագախումբը կոչվելու է Օհան Գուրյանի անվամբ:

Ու մի շատ կարենոր հարց էր լուծվել. նվագախումբը պատկանելու էր Ազգային ուղղոյի և Հայաստանի մշակույթի նախարարությանը, ասել է՝ պետական հոգածության տակ անցնելով, այլևս պիտի բավարարվեին երաժշտական այդ հիանալի կողեկտիվի աշխատանքային ժանր պայմաններին վերաբերող պահանջները: Եվ ինչու շասել, որ Օհան Գուրյանը պահանջները:

յանի բոլոր դժգոհությունները բխում էին ոչ միայն նրանից, որ ինքը չէր ղեկավարում օպերային սիմֆոնիկը, այլ այն անարդար վիճակից, որում շնչին աշխատավարծով մի կերպ գոյությունն էր պահպանում Ազգային ռադիոյի նվագախումբը՝ ստեղծագործական գործունեության համար շունենալով տարրական պայմաններ, գործիքներ, երրեմն նաև՝ երաժշտներ: Այս առումով, կատարվել էր դրական քայլ: Իսկ մասնաւորուն, իր նվագախմբի հետ, մեծ ասելիք ուներ հայ երաժշտասերին, մեզանում երբեմ շներկայացված բազմաթիվ օպերաների համերգային կատարումներով դեռ պիտի հանդես գար, ինչը, հիրավի, լինելու էր հրաշալի մի ներդրում մեր մշակույթում:

Դրա վառ վկայությունը եղավ ապրիլի 26-ին Հայաստանի ամերիկյան համալսարանի դահլիճում Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված համերգը, որին մասնակից հատուկ հրավերով մասնակցում էր՝ այժմ Վիեննայի օպերային թատրոնի մեներգչուհի Հասմիկ Պապյանը:

Սրագիրը հագեցած էր՝ հատվածներ «Նորմա», «Նաբուկո», «Անուշ» օպերաներից, և Դուրյանի «Կոմիտասական» երկու սյուիտները:

Համերգին մասնակցում էին նաև «Արամ Տեր-Հովհաննիսյան» երգչախումբը և ռադիոնվագախմբի մեներգիչներ Իրինա Զաքիյանը, Մկրտիչ Մկրտչյանն ու Սուրեն Զուրաբյանը:

Անկրկնելի, շքեղ մի մատուցում, որում ներդաշնակորեն միահյուսված էր հայկականն ու համաշխարհայինը՝ որպես համամարդկայնության ոգեղենիկ արտահայտություն:

Երկրայինից ասես վերացած, աներեակալելի մի հմայշությամբ ու ոգեկոչումով, Օհան Դուրյան-մեծ արտիստը հյուսում էր երաժշտական անձեռակերտ, անկրկնելի, եթերային իր գորգը: Հակա դահլիճը՝ մեկ շունչ դարձած, ըմբողխում էր կենսահաստատ արվեստի ապրեցնող ու վերապրեցնող հավիտենական գաղտնիքը:

Եվ հետո... հետո արդեն ժամանակն էր որոշելու: Մեր կյանքում անընդհատ փոփոխվող իրադարձությունների հոլովույթում դարձյալ լինելու էր արժեքների նորովի գնահատում: Բարեբախտաբար, գալու էին ազգային մշակույթի պատասխանատվություն գիտակցող, ազգային նկարագիր

ունեցող վճռական գործիչներ, ովքեր, վեր լինելով անձնական համակրանք-հակակրանքներից, վերջ էին տալու «Օհան Դուրյանը կմնա», թե՞ կգնա...» մտայնությանը:

Օհան Դուրյանը կմնա, Օհան Դուրյանը չէր էլ գնալու թանի՛քանի անգամ է ասել. «Ես եկել եմ Հայրենիք իմ ժողովրդին ծառայելու և իմ հողում... հանգչելու»:

Իսկ թե ինչ է ասել վրդովված, վիրավորված պահերին, հիմա արդեն էական չէ: Մեծ արվեստագետ լինելուց առաջ նա մի անհանգիստ, փիրուն, մանկան պես խոցելի, մի քիչ անհամբեր, մի քիչ քմահաճ, մի քիչ խոռվկան, բայց զուլաւ մարդ է, աշխարհ տեսած ու իր տեսած-ապրածով իմաստնացած:

1999-ի ամառն էր: Մաեստրոն գուրգուրանքով խնամում էր իր ու տիկին Ալիսի ձեռքերով կյանք առած պարտեզի թուփու ծաղիկները, իշնում դիմացի այգին՝ շուրջ տալու նորատունկ ծառերին, որ, օր-օրի խորացնելով արմատները մայր հողում, փարթամանում էին ու հասակ առնում:

Զարմանալի, անբացատրելի սեր ունի հողի հանդեպ ու թվում է, թե իր հոգու զգացողությամբ լսում է նրանում խտացված բնության ձայնը, երգը, մեղեդին:

1999-ի ամառն էր, և մաեստրոն փորձում էր մի քիչ հանգստանալ ընտանեկան անդորրի վայելումով, հնագանդորրեն կատարել տնային իր սիրասուն կենդանիների քմահաճույքները, հյուրեր ընդունել, սակայն այս ամենը մազաշափ շպիտի խանգարեին նոր ու գժվարին պարտիտուրների յուրացմանը: Սա իր մշտակա, իր ամենասիրելի գործն է, անկախ այն բանից, տվյալ պահին համերգի է պատրաստվում, թե՞ ոչ:

Սակայն լիարժեք հանգստի համար այնքան էլ երկար ժամանակ չէր մնում... սեպտեմբերի 1-ին նա նորից պիտի մտներ Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային թատրոն՝ իրեն երաժշտական ղեկավար և գլխավոր նվագավար: Ցմահ: Եվ այդ իրողությամբ, հանդիսատեսը կրկին վերստանալու էր Օհան Դուրյան մեծավաստակ ու մեծանուն նվագավարի երաժշտական նվիրումներն այդուհետ իրեն վայել հարկի տակ ընդունելու, վայելելու ուրախությունը:

## ՕՐԸ՝ ՄԻ ՏԱՐԻ... ԵՎ ՏԱՐԻՆ՝ ՄԻ ՕՐ

Հրաշք լիներ, կրկնվեր  
Այն հրաշքը հրական...

Հ. ՍԱՀՅԱՆ

1995-ի գարուն-ամառը հայ և համաշխարհային բեմերում փառքի դափնիներ տեսած նվազավարի կյանքում փոքրիկ, բայց հետաքրքրական ու հիշարժան մի էջ էին բացելու Աշխարհի որ ծագում էլ որ եղել էր, ինչ փառահեղ դահլիճներում էլ համերգներ էր ունեցել, միևնույն է՝ ամենից սրտամութը իր համար Հայաստանի տարրեր շրջաններում լինելը, մայրաքաղաքից հեռու ապրող, բայց արվեստի արժեքը խորապես զգացող ու անսխալականորեն գնահատող հանդիսատեսին ներկայանալն էր: Անշափ հուզիլ էր համարում նման ամեն մի հանդիպումը պարզ, անհավակնոտ, նրբահոգի երաժշտասերի հետ:

Մաստրոն ծրագրել էր շատ հետաքրքիր մի անակնկալ՝ համերգային շրջագայություն Արցախում, Վանաձորում և Գյումրիում:

Մինչ այդ, Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կայացել էր նրա հեղինակային ստեղծագործությունների համերգը երիտասարդ, շնորհաշատ երգիշերգուհիների մասնակցությամբ: Իր իսկ նվազակցությամբ: Մայրաքաղաքի երաժշտասեր հասարակայնությունը, թերևս, առիթ չէր ունեցել այդպես ամբողջականորեն ծանոթանալու հոչակավոր նվազավարի կոմպոզիտորական վարպետությանը և ահա՝ ականատեսն ու ունկնդիրն էր զարմանալիորեն խոր և մեղեղայնորեն հագեցած, ինքնատիպ մի հուզաշխարհի բացահայտման, որում բացառիկ արտահայտչականությամբ և գունեղ լուծումներով էին արտահայտված հեղինակի ապրումներն ու երաժշտական պատկերավոր, խոհական մտածողությունը:

Հայ և ելուապական պոեզիայից ընտրված քնարաշունչ բանաստեղծություններով գրված ոռմանսները, երգերը հրաշալի ընդունելության արժանացան: Դա, իսկապես որ, հաշելի անակնկալ էր:

Հանդիսատեսը որոշ շափով ծանոթ էր Դուրյանի սիմֆոնիկ սյուիտներին, բայց ո՛չ երգերին, այնպես որ, սիրելի մաստրոն նոր լույսով, ստեղծագործական նոր հնարավորությամբ էր ներկայացել նրանց:

Այդ համերգից հետո էր, որ կայացան հանդիպումները Արցախի, Վանաձորի, Գյումրիի երաժշտասեր հասարակայցարանին, Պատմական համերգության հետ: Նման ընտրությունը պատահական չէր: մաստերություն ի խորոց զգում էր, որ մշակութային որեւէ միջոցառում կամ ձեռնարկում հաց հանապազորի պես են անհրաժեշտ հոգնոր ու տնտեսական ծանր ժամանակներում հայտնված, հոգնական ու անբնական ցնցումներին դիմակայող մեր ժողովրդի հատկապես այդ հատվածներին:

Համոզվել էր պետք, որ կյանքի անվերջ փորձությունների, պատմական վայրիվերումների մշտակա հորձանուտում մաքառող հայը միշտ էլ առանձնացել է իր արվեստապաշտությամբ, երբեք ու երբեք շուրջնելով գեղեցիկի աստվածատուք պահանջը, առավել ևս՝ գնահատության շափանիշները:

Որքան մեծ էր ուրախությունը, երբ թե՛ Արցախում, թե՛ Վանաձորում և Գյումրիում հուսագրող, կենսահաստատ լիցքեր տեսավ ընդամենը մի քանի տարի առաջ ահեղ երկրաշարժի ու պատերազմի ավերներ ապրած մարդկանց աշքերում, և այդ տոկուն պահվածքում գեղեցիկ, շատ գեղեցիկ մի բան կար, որ այնքան համահունչ էր հայի ավանդորեն անկուտրում կերպին:

Հետո պիտի խոստովաներ, որ այս հանդիպումներն իրենց խորհրդով ու նշանակությամբ, պակաս կարևոր չեին, քան բազմահազարանոց ու ամենաշքեղ դահլիճներում ունեցած իր շատ ու շատ համերգները: Ոգևորությունն անթաքույց էր երկուտակ: Երաժշտասեր հասարակայնությունն իր անկեղծ, կարոտալի վերաբերմունքն էր արտահայտում մեծ արվեստագետին, որը հանգամանքների թերումով երկար էր բացակայել երկրից ու իրենցից, իսկ մաստրոն իրկողման հավաստիացնում էր, որ այդպիսի ունկնդիրն

իրավամբ, արժանի է ամենայն հարգանքի, մտքի ու հոգու ամենայն տուրքի:

Գյումրիից Երևան վերադարձի ճանապարհը փորձում ենք կարճել զվարճալի պատմություններով, անեկոտներով, խոսք ու զրույցով:

Թեև հոգնած, բայց հրաշալի տրամադրության մեջ է ու նաև գոհ, որ երգիչներ իրինա Զաքիյանի, Մկրտիչ Մկրտչյանի և Սուրեն Զուրաբյանի անբռնազրու, սրտառուլ, բարձրարդիստ կատարումները գեղեցիկ ու լիահունչ ձևով ներկայացրեցին իր Հեղինակային ստեղծագործությունները և արժանիորեն գնահատվեցին:

Մկրտիչը, որ համով-հոտով զրույցների անսպառ պաշարունի և գեղարվեստորեն ներկայացնելու արտակարգ ունակություններ, դարձել է ուրախության կիզակետ:

Առաջին անգամ եմ լսում Օհան Դուրյանի սրտաբուխ, անընդմեջ ու քահ-քահ ծիծաղը: Ինքն էլ է ներքաշվել մեր անհոգ, աշխույժ խոսք ու զրույցի մեջ: Վերհիշում է զվարճալի դեպքեր՝ իր և մեզ ծանոթ նշանավոր դեմքերի, արվեստագետների կյանքից: Հումորն այնքան շատ է և այնքան կենդանի ու պատկերավոր է պատմում, որ թվում է, թե գեղարվեստական հորինվածքներ ենք լսում: Մանկան անկեղծ ու շարածճի ժպիտ է խաղում դեմքին: Զրույցով տարված, ուշացումով միայն նկատում է, որ մեր մեքենան մայրուղուց շեղվել, նոր ճամփով է առաջանում:

— Իսկ սա Ռուզանի անակնկալն է Զեզ: Այսպես ավելի շուտ կհասնենք Երևան, — արագորեն հայտնում է համերգների կազմակերպիչ Դավիթը և որպես գիտակ ուղեկցորդ, մահստրոյին հաղորդում Շիրակի հարթավայրի պատմամշակութային հուշարձանների մասին հակիրճ տեղեկություններ, շմոռանալով նույնիսկ Հռոռմի հնամենի կամրջի պատմությունը:

Մկրտիչն իր հերթին բացում է տեղական զվարճապատմուների պարկը՝ հմտորեն ներկայացնելով Կարնո գունեղ, ինքնատիպ բարբառի հմայքը: Մեր համընդհանուր ծիծաղն ու ծափերը հանդարտվում, մարում են, երբ մեքենան մըտնում է Հառիճ գյուղն ու նեղիկ փողոցով մոտենում վանքին:

Ճամփան բերել է սրբավայր՝ մեկն այն լույսի տաճար-ներից, որտեղից հավատի ու իմացության աստվածային խորհուրդը հորդել, սփռվել էր հայի հոգուն, դարերի հոլովույթում իմաստավորելով, սատարելով նրա կենաց մաքառումը:

Հարազատ ժողովրդի կառուցողական վարպետության, հոգու և մտքի հումկու պողոթկումների, թռիչքների իրեղեն վկայություններով զարմանալու, հիանալու և հպարտանալու առիթներ շատ էր ունեցել, տեսել էր համարյա բոլոր վանդերը, եկեղեցիներն ու հուշարձան կոթողները, բայց վաղ միջնադարյան այս շինաղ համալիրն առաջին անգամ առիթ ունեցավ այցելել:

Հառիճի վանքը՝ ճարտարապետական հարուստ ու խոսուն կերպով, իր ներշնչող ու ագղեցիկ դիրքով, քարակերտ մի խոյացում՝ շրջակա լեռնու համայնապատկերի վրա: Ամառային պայծառ ու թափանցիկ օրվա մեջ հավատի, սիրո ու հավերժի խորհուրդն էր ծավալվում:

Գյուավոր եկեղեցու աղոթարարհը կարծես սպասում էր այս պահին, երբ աղբյուրի պես զուզալ ու ախորժալուր ձայնով՝ երգչուհու հոգուց պոկված «Սուրբ-սուրբը» թեածելու, կախվելու էր իր կամարների տակ, խախտելով այստեղ սովորաբար տիրող լուսությունը:

Դարերի հուշն էր գամված հոգու և հույսի բարաքանդակ այս տաճարում, ուր մեղմիկ ցոլանքներով փայլվելում էին մեր վառած մոմերը՝ իրենց լույսի ու շերմության հետ երկինք հղելով սրդողած բաղդանքներ:

Ամեն ինչ գեղեցիկ էր, խորհրդավոր ու խոսուն և այս իրողությամբ՝ ամենահոգիչը մեծ երաժշտի լուր ու ինքնառույզ առանձնացումն էր.

...Այստեղ է ճիշտը, իմաստը փոյի,  
եվ վեր է միտքը մարմին կոչվածից,  
Առնշումները երկիր ու երկնի,  
Հավատ են ծորում սիրո եղջուրից...

(Ռ. Ա.)

Ներշնչված էր խորապես, երկար լուսաթյունից հետո շրջվեց ու ասաց.

— Փա՛ռք այս հրաշքն ստեղծողին: Ճիշտ է ասված, որ ամեն ճանապարհ պետք է տանի տաճար, այլապես ո՞ւմ է հարկավոր այն, — ապա արդեն դրսում շարունակեց, — հազարամյա պատմության վկա է, գուցե և ավելի:

— Գումարեք ևս երեք դար, — ավելացնում է երիտասարդ մի տղա, որի հետ մինչև եկեղեցի մտնելն արդեն զրույցի էր բռնվել մասսարոն, հավանաբար վանքի հսկիչն էր:

Իւարկե, Դավիթը կատակել էր՝ ասելով, թե այս ճամփով մենք ավելի շուտ պիտի հասնեինք մայրաքաղաք: Մենք դեռ երկար պիտի վայելեինք Հառիճը՝ մոտիկ ու հեռու բռլոր դիտակետերից:

Օրվա փոփոխ գույների մեջ փոփոխ էին նաև վանքի վարդապուխ հանգերձի երանգներն ու երկնքի կապույտ-կապույտ ֆոնին ուրվագծվող պատկերախաղերը:

— Որպես շնչավոր մի էակ՝ այդպես տեսա Հառիճը, — նկատելի հուզումով խոստովանում է մասսարոն, — դա է իսկական արվեստի ուժն ու առաքելությունը. Հավատով և սիրով շնչավորել անշունչը:

Ետկեսօրվա լեռնաշունչ քամին շնկշնկալով իշնում է Արագածի բարձրերից, փարզում լանջերն ի վար փոված ծաղկահովիտներին:

Տարվա այդ ժամանակ բնությունը համակ բուրմունք է ու գույների հանդես:

Մեզանից քիչ հեռու, մարգագետնում մեկ լսվում, մեկ մարում են բանջար հավաքող կանանց ձայները, Կարծես մեկը երգում է:

Երկնքի լազուրում տեղ-տեղ ամպեր են հայտնվում, սկզբում՝ թեթևասահ, ճերմակ գանգուրներ, ապա՝ խառնվելով իրար, մթնում են, մոռայլվում:

Ճամփեղի քարերին նստած, մենք վայելում ենք լեռնային մաքուր-մաքուր շունչն ու անկրկնելի գեղանկարը:

Օհան Դուրյանի օրն է սա, իր եզակի ազատ ժամանակը: Երանավետ ժպիտ կա դեմքին, ձեռքին՝ դաշտային ծաղիկների մի փունջ: Հոտոտուամ է նորից ու նոր, ապա հայացքի մեջ առնելով վեհանիստ լեռը, ասում:

26

— Հիշեցի մեծ վարպետին ու հիմա փորձում եմ նրա աշքերին նայել այս ամենին, հարդկե, համակյանի պես փըլիքուն, նրբազգաց հոգին, որ ծնունդն է այս բնաշխարհի, պիտի լցվեր, զրնգար Արագածով ու Մանթաշով: Այս բնությամբ է տրփում նրա բանաստեղծական քնարաշունչ, մեղեդիական աշխարհը:

Նույն զգացումն ունեի, երբ լոռիում էինք: Աշքերիս առջև հայոց մեծ բանաստեղծն էր՝ իր անկրկնելի, իր կոթողային «Անուշով» և իր բոլոր-բոլոր ներշնչանքներով:

Մասսարոն այնքան գունեղ է արտահայտվում, որ թվում է այս պահին ինքն է բանաստեղծուամ: Այս հարցին, թե երբևէ փորձել է գրել, պատասխանում է.

— Ամեն հայ բանաստեղծ է իր շափով: Զէ, շեմ փորձել: Բայց եթե գործս երաժշտությունը վերածենք բառերի, ուրեմն՝ այս, եթե թարգմանենք գույներով ու երանգներով, կնշանակե նաև՝ նկարել եմ... ինչ ասեմ, ես արվեստներն ընկալում եմ իրար միահյուսված, իրար մեջ ներթափանցված և իրարով արտահայտվող: Նրանք առանձին-առանձին են, երբ սովորական աշքերով ես նայում ու սովորական ունկերով լսում, իսկ երբ բացում ես հոգուդ տեսողությունն ու լսողությունը՝ մեկի մեջ գտնում ես բոլորը, բոլորի մեջ՝ այդ մեկը:

— Ինչ էիք խորհում, երբ Հառիճում, մեզանից առանձնացած, երկա՛ր-երկար դիտում էիք համալիրը:

Փոքր-ինչ հապաղում է, ապա խոսում զանգաղ ու մտածուու:

— Հավատի ու դպրության կենտրոն է եղել՝ իր ծաղկուն, ազգօգուտ պատմությամբ: Կուզենայի, որ այդ կյանքով ապրեր, վերածնվեր նորից: Իսկ եկեղեցու ներսում ունեցած մի շերմ բաղանանք՝ լիներ այնպես, որ մի օր այստեղ ես կարողանայի ղեկավարել Կոմիտասի «Պատարագը», Գունոյի «Մեսսան», Վերդիի «Ռեքվիեմը»:

Ճանապարհին հանգստանալու գաղափարը մեր առանձնազրույցի համար շատ հարմար առիթ էր ստեղծել: Մասսարոն ինքն էր ընձեռել այդ հնարավորությունը՝ աննկատ ներքաշվելով այսրովանդակ զրույցի մեջ:

Հետաքրիր է իմանալ, իր ստեղծագործականում ինչ դեռ  
ունեն արտաքին ազդակները, ներշնչանքը...

— Արտաքին ազդակները՝ տարբեր, — ասում. է նա, —  
ներշնչանքն, անցուշտ՝ առաջնային: Այլ կերպ հնարավոր էլ  
չէ, քանզի ամենայն գեղեցիկի արարումը սկսվում է այդ  
անհմանալի, անորսալի զգացումով, որի աղբյուրը մարդն է,  
բնությունը, տիեզերքը: Իսկ այս ամենին իշխողը սերն է,  
առանց որի կյանքում ուխնչ չի ծնվում գեղեցկորեն:

Միրո խինդ ու սիրո տառապանք. այս հասկացություն-  
ներն են օրորել մարդկության օրորոցը: Այսպես՝ իրեւ սկիզբ  
ու շարունակություն, մի ամրողական շղթայի մեջ, և անվերջ  
նորոգումով... Որպես նուրբ հոգու տեր արվեստագետ, ինքն  
էլ է խոստովանում, որ միանգամայն ենթակա է առողջ,  
ստեղծարար ներշնչանքի մոգական ազդեցությանը: Այդպես  
եղել է միշտ և դա է բնականը:

Լուսում է, քնքշանքով տնտղում ծաղկեփունչը: Մկրտիչը  
հասցեկ է արդեն սուրճ պատրաստել:

— Թունդ ըմպելիքն էլ՝ շխմողներից, — կատակով ասում  
է նա, տաք ու բուրումնավետ սուրճը մատուցելով մեզ: Ապա  
ճամփորդական գավաթների մեջ հայտնվում է ոսկեղեղին  
կոնյակը: Կատարյալ մի հաճույք՝ բնության գրկում:

Մաեստրոն շարունակում է զրուցը.

— Ապրեք, ճամփան շեղելու գաղափարը ճիշտ էր: Դուք  
ինձ պարզե արեցիք... գիտե՞ք, ժամանակին քիչ հնարավո-  
րություն եմ ունեցել բավարարելու հոգուս պահանջները, թեև  
միշտ էլ ապրել եմ արվեստի, մշակույթի կենտրոններում,  
եղել աշխարհի բազմաթիվ երկրներում: Իմ աշխատանքը որ-  
քան ճանաշում, որքան ստեղծագործական վայելք է տվել  
ինձ, նույնքան էլ, գուցե և ավելին, խլել է ինձանից: Հիմա,  
կարծես ժամանակ ունեմ բացը լրացնելու, ափսո՞ս տարիքս  
այն չէ...

Այսուհենդեմ... ինչի համար է հատկապես ափսոսում,  
երբ արվեստում իր յուրակերպ տեղն ու կշեռն ունի, թեև այդ  
մեծ համարումին հասել է հաճախական ինքնամերժմամբ:

Հարավոր չէ շատ մասնավորեցնել և որոշակիորեն ասել,  
թե հատկապես ինչի համար: Երսի, դա կարևոր էլ չէ: Պար-  
ուապես կա մի անշրջելի ճշմարտություն. գերխնդիր ունեցող

արվեստագետի կյանքը սովորականից դուրս է, և սա առա-  
ջնը ինքը՝ արվեստագետը պիտի գիտակցի:

— Իմ խնդիրն էր նվագավարության ասպարեզում հասնել  
պատկերացումներիս շափորշին, այսինքն՝ ըստ իս, իսկա-  
կան նվագավարը պետք է ի զորու լինի բացառիկ հնարավո-  
րությամբ մթնոլորտը շիկացնելու և ենթակայեցնելու երա-  
ժրշտության կախարդական ներգործությանը: Միևնույն ժա-  
մանակ նա պետք է լինի անտեսանելի:

— Մի՞թե դա հնարավոր է, երբ նվագավարը անընդհատ  
հանդիսատեսի տեսադաշտում չ...

— Ինդիրն էլ հենց այդ է, որ թեև բեմում է, թեև նվա-  
գախմբի ու դահլիճի առջև, բայց նա պետք է աներեւութական  
լինի իրեւ մագնիսական մի կետ: Նա ոչ թե որպես մարդ,  
որպես անձ պիտի դառնա հանդիսատեսի հայացքի բեկուման  
կենարունը և նվագախմբին ճշգրիտ ցուցումներ տվող, նրանց  
կատարողական հնարավորությունները, թեկուզ լավագույնս,  
միավորողը, այլ խորհրդավորության պես անորսալի, կա-  
խարդորեն երաժշտություն ձեւագորող էություն: Ես միշտ  
փափագել եմ այն օրը, կասեի՝ այն երշանիկ օրը, երբ բե-  
մում իսպառ անտեսանելի կուանամ՝ իրեւ բացարձակ ձգո-  
ղության ու բացարձակ ճառագումի կետ: Դրան հասնելու  
համար շպետք է ինայել ոչինչ...

Ճշմարտությունը, իրողությունը փաստելով միայն, հի-  
շեցնում եմ, որ հիմա՝ էլ ինքը ոչ տարիքն է խնայում, ոչ  
ուժերը, ոչ առողջությունը: Անգիր է անում ղեկավարելիք  
բոլոր գործերն անխտիր, զերասովորում արդեն իմացածը և  
շատ ու շատ այլ նրբություններ մասնագիտական, որոնք բա-  
ցառիկ նվիրման արդյունք են: Կնշանակե, մեծապահանջու-  
թյան իր անզիջում վարմունքի մշտակա «զոհն» չ...

— Գիտեմ և դա եմ համարում ճիշտը: Ես իմացածս նյու-  
թի վրա էլ եմ աշխատում նորից-նոր: Եթե նույնիսկ բազմա-  
թիվ անգամներ ղեկավարա՛ծ լինեմ այն: Ամեն անգամ ինչ-  
որ բան եմ գտնում տվյալ գործի մեջ, մի նոր երանգ,  
հեղինակային մի նոր տրամադրություն: Երաժշտությունը  
վերացարկված արվեստ է և այն անգիր անելը, ղեկավարելը  
ու երաժշտասերին գոհացնելն այնքան էլ հեշտ չէ: Նյութի  
իմացությունն ու մոտեցումը պետք է լինի ճշգրիտ, արտա-

ցոլիւմը՝ չափերի մեջ զգայական: Գալով վարժունքիս, ասեմ, իհարկե շատերին անհասկանալի կթվա, բայց ես այդ արվեստագետներից եմ:

Մի պահ շեղվում է զրուցից, նայում երկնքին: Եղանակը փոխվում է, Արագածի վրա կուտակ-կուտակ ամպեր են հավաքվել: Ասում է, որ շատ է սիրում կարճատև տեղատարափ, համեմատում է բուռն ապրումների լիցքաթափության հետ:

Զի անտեսել իրեն ուղղված հարցը:

— Սովորած պարտիտուրների քանակը, — ուզում է հավաստիանալ, որ մոտավոր պատասխանն էլ է բավարար, — Հարյուր հազարավոր էշեր, ո՞վ կարող է հաշվել, բազում հեղինակներ... դասական, ժամանակակից՝ ո՞ր մեկը հիշեմ: Անթիվ գործեր: Մի հետաքրքիր բան ասեմ, գիտե՞ք ինչ պահանջ ունեն գերմանացիները նվազավարից: Իրենց օրինակնեմ բերում, որովհետև անգիր նվազավարելու ավանդույթն սկզբանավորվել է Գերմանիայում: Ասում են՝ «նվազավարը պարտիտուրը պետք է ունենա իր զնիւ մեջ և ոչ թե գլուխ՝ պարտիտուրի մեջ...»: Հրաշալի է ասված: Իրոք որ, անգիր ղեկավարելիս՝ գիտենալով հեղինակային մտահղացման բոլոր նրբերանգներն ու տրամարանական-զգայական ամբողջությունը, նվազավարն ազատորեն և ստեղծագործաբար է ձեւավորում երաժշտությունը և ոչ թե գերի դառնում նրան:

...Թե ինչպես է հասցըել այդքանը, անգամ պատկերացնելն է դժվար: Եվ դեռ կարողացել է եռանդ ու ժամանակ գտնել որպես հեղինակ ստեղծագործելու: Զարմանալի՛, նախանձելի՛ դրսևորույթ:

— Ինչ արել ու անում եմ, հավատի մղումով է եղել՝ ի սեր իմ ունկնդիր: Ես համերգավարել եմ տարրեր հոգեվիճակներում, անգամ երր ծանր հիվանդ եմ եղել՝ 39—40° շերմությամբ: Ինչ կա որ, շատերին անսովոր կարող է թվալ, բայց կան առանձին նվիրումներ, երր մարդ գիտակցորեն իր կյանքն է ենթակայեցնում գործին, և ոչ թե՝ հակառակը: Պարզապես ցավալի է, որ այդ կյանքը մարդուն տրվում է ընդամենը մի անգամ և... կարճ ժամանակով:

— Իսկ եթե հրաշքով այն տրվեր երկու կամ ավելի անգամ...

Մասստրոն ժպտում է խորիմաստ:

— Երանի՞ թե: Բայց հրաշքներն էլ են լինում հրաշքով:: անհրցները թողնենք պոետներին: Իրականում, մեզ համար նախատեսվածին մենք կամ ընդառաջ ենք գնում, կամ՝ ոչ: Ամենքս՝ իր ճամփով: Երաժշտությունն իմ աջխափհն է, իմ տարերքը, նվազավարությունը՝ կոչումս: Երկուսին էլ նվիրումս անմնացորդ է: Ու մի խորհութիւնն էս, որին հետեւել ու հետեւում եմ: Դա խորհուրդն է դաշնության՝ Աստծո ստեղծած աշխարհի, անմեկնելիորեն շքնաղ բնության և մարդու, որ ամենաթանկ մասն է այդ արարչության: Նա՛ է բանականը, ուստի և պարտավոր՝ իմաստավորելու ապրելու իր ժամանակը:

Հեռու-հեռվից ամպրոպի ձայն է գալիս: Քամին ծփացնում է լանջերին փոված կանաչ-կանաչ շղարշը: Մեր դիմաց ալիքվող արտի մեջ խրտում կա: Բնից թռչում է վախեցած մի հավթ, թևում հեռու: Ընդհատ-ընդհատ արտույտն է ձայնում:

Մասստրոն, ականջն այդ կանչին, ասում է.

— Ձայնի մեջ տագնապ կա, գիտեք, չէ՞, որքան անսիալ են կանխազգում թռչունները: Ես դա լավ գիտեմ, որովհետեւ երկար տարիներ և երկանում, և Ֆրանսիայում պահել եմ թռչուններ՝ մեկը պատահականորեն ինձ մոտ հայտնված, մյուսը՝ հենց այնպես, առանց ընտրության, զնված, — հանկարծ թախիծ է հայտնվում դեմքին, ձայնի մեջ՝ նույնպես, — երկար պատմություն է... միայն կասեմ, որ այդ շնչավորներին այնքան էի սիրում, այնքան խորն էի ընկալում ինձ հասկանալի ու հարազատ դարձած փրենց թռչնային, ես կասեի՝ մարդկայնացված մտերմությունը, որ օրեր շարունակ սպացել եմ, երբ մեկն ինձանից հեռու, մյուսը՝ ափերիս մեջ, հանգել են մոմի պես: Ի դեպ, ես նրանց ազատության մեջ եմ պահել: Վանդակ եմ դրել, երբ համերգային շրջագայություններիս ժամանակ հետո քաղաքից քաղաք, երկրից երկրի եմ տարել:

Քամին հիմա ավելի պաղ է փշում: Սարերում ինչ-որ տեղ կարկուտ է տեղացել: Շուրջն այլևս ոչ չի երկում, հավանաբար մոտալուս անձեւը զգալով, կանաչի հավաքող կանայք դարձել էին գյուղ:

Ուղեղոներով լիքը մի մեքենա սրբնթաց անցնում է մեր կողքով, մի քիչ հեռանում է ու կանգնում: Նայում ենք ուշադիր: ոչ մի ծանոթ դեմք: Մոտենում են, զերմորեն ողջունում: Հաճելիորեն զարմացած են. սիրելի արվեստագետն այսպես պարզ ու անկաշկանդ, սուրբի գավաթը ձեռքին, երիտասարդներով շրջապատված, նստած է խոտերի մեջ, իմանալով, որ համերգից ենք վերտափառում, խորոց ափսոսում են իրենց անտեղյակության համար, այլապես, ինչպես իրենք են ասում, հանուն մեծահողակ Օհան Դուրյանի, ոտքով էլ Արթիկից կհասնեին Գյումրի: Ասում են անկեղծորեն: Մաեստրոն ինքն էլ գիտի, թե ամենուր ինչպես է ժողովուրդը սիրում ու գնահատում իրեն:

Հրաժեշտի պահին, բարեմաղթանքների հետ շի մոռանում նաև հորդորել.

— Դուք շատ հարուստ եք՝ այդքան մոտիկ ունենալով Հառիճի պես մի տաճար: Պահեք ու պահպանեք այն,— ապա դառնալով մեզ ասում,— այսօրվա մեր այցը ուխտագնացություն էր, լավ էիք ծրագրել, և հրաշալի էր, բոլորս էլ կարծես թեթևացած ենք ու հաղորդված մարդ-բնություն-տիեզերք հավերժական դաշնությամբ...

Ահա և առաջին վարանոտ, վախվորած կաթիլները: Աւ մինչ մենք հավաքվում, մեքենա ենք նստում, երկինքն արագորեն ժամկիցում է անթափանց ամպերով:

— ...Սկ մութ ամպեր,—կամացուկ ձգում է Սուլեյնը, բայց մինչև վերջ շի հասցնում: Ընդհատում է երգն, ասելով.

— Զէ, ավելի լավ է՝ շխախտենք մեր պայմանը. ճանապարհին շենք երգում, ճանապարհին պատմում ենք:

Ապարան շհասած, անձրեն արնպես սաստկացավ, որ թվում էր, թե մեր մեքենան շրվեծի տակ է հայտնվել:

— Մաեստրո ջան, սա էլ Զեր սիրած տեղատարափը, բայց դժվար թե կարճատել լինի...

Թեթև հպումով մաքրում է ապակու գոլորշին, նայում դուրս:

— Հողը շատ է ծարավ, թող հագենա, — մի պահ լռում է, ապա շարունակում, — երանի՛ թե բոլոր ծարավները կարուղանան հագենալ այսպես...

Բայց ինչո՞ւ այդքան տխուր երանգ հայտնվեց նրա ձայնի մեջ...

...Երեանում անձրեւ չկար, կար դրա սպասումը և մի անասելի տռթ, որ կախված էր քաղաքի գլխին: Երբ բաժանվեցինք, մեր հրաշալի ճամփորդությանն անհամապատասխան՝ թախծոտ տրամադրությամբ էի համակված:

Դա եղավ հանկարծ, հասակացա՝ ինչու... հետո, երբ մենակ էի, գրասեղանի առջև, հստակվեց ամեն ինչ, ինձ փոխանցվել ու հանգիստ չէր տալիս մեծ մարդու, մեծ երաժշտի հոգում տիրող անորոշը: Համերգային շրջագայությունը մի քանի օրով շեղել էր նրան անախորժ ապրումներից ու մտածումներից: Զգացողությունները սրվում են երեանում: Խսկությունը սա է. Ժամանակավոր, թե անժամանակ, դժվար է ասել, նորից մի ճեղքվածք, բարոյական մի խաթարում է գոյացել մշակութային մեր այսօրվա իրողության մեջ, ազգային մտածողությանն ու կերպին խորթ՝ կեղծ արժեքների «հաղթարշավ»: Երբ է ավարտվելու այդ պարտադրված, մակերևութային աղտոտ ալիքումը, որը խանգարում է խորքային մաքրությունների արժեքները: Դժվար է կորուստներից խուսափելը: Մեր ծաղկուն ուժերը դրսերում են փայլեցնում իրենց տաղանդն ու նվաճումները: Ետ կգա՞ն երբեմս... Ժամանակը ցույց կտա, իսկ առայժմ՝ «ինչ-որ տեղ, ինչ-որ բան սխալ է»... համաշխարհային գրականության Մեծ Հայն է ասել:

Օհան Դուրյանն էլ իր վերջին դարձով եկավ ազգին ու մշակութին ժառայելու, եկավ զարդարելու երաժշտական մթնոլորտը, մեր արվեստը, բարձրացնելու օպերային թատրոնի մակարդակը, սակայն, հանգամանքներից վիրավորված ու հիասթափված, նա ստիպված է դասական իր մեծընտիր ծրագիրը, կամ, ինչպես ինքն է բազմիցս հիշատակել՝ իր պաշտելի «Անուշը» նվագավարել ո՛չ թե հայոց ազգային պատկան բեմում, այլ իր հոգու և հիշողության մեջ:

Մինչդեռ, որքան պարգևելիք ունի հարազատ ժողովրդին: Այս ծարավի մասին էր խոսքը...

Ուշ է: Մութին ու անձրեւ վաղուց, համերաշխ միությամբ, թակում են դուրս ու պատուհան: Ծնչելը կարծես թեթևացավ:

Պետք է վանել նաև տխուր մտածումները, դրանց տեղը տա-  
լիվ նախորդ և այսօրվա անմոռաց տպավորություններին:

Հոգնության և ոչ մի նշանը: Յանկություն կա աշխատելու  
Միացնում եմ ձայներիզը... մտերիմ, հարազատ ու անմիջա-  
կան խոհեր...

## Ի՞ն ՄԱՍԻՆ Ի՞ն ԽՈՍՔԵՐՈՎ

(ՄԵՐ ԶՐՈՒՑՑՆ Է ՄԵՆԱԿՈՍՈՒԹՅԱՆ ԶԵՎՈՎ)

...Եվ արվեստում, և արվեստից դուրս միշտ իրատեսորեն  
եմ նայել իմ բոլոր նվիրումներին, առանց շափազանցում-  
ների ու առանց գերազնահատումների: Արել եմ այն, ինչը  
եղել է ազնիվ և ինչը սիրել եմ խորապես:

Կյանքում հեշտ ուղիներ շեմ փնտրել ո՛չ նրա համար, որ  
շեմ կամեցիլ, այլ պարզապես՝ ես չէի ծնվել հեշտ ապրելու  
համար:

Այս աշխարհում, որտեղ շահն է իշխում շատերի խղճին,  
ես շսովորեցի ապրել շահախնդրորեն, նույնիսկ փորձ էլ շա-  
րեցի, որովհետև դա չէր իմ կոչումը:

Ապրեցի ու վայելեցի մեծ արվեստի կախարդանքը՝ նրա  
պատշաճությամբ ու շափանիշներով դատելով մարդկային  
հարաբերությունների ու մարդկային երշանկության մասին:

...

...Մտերիմ ու հոգեմոտ եղա ներկա և բացակա բոլոր մե-  
ծերին, ինձ գտա իրենց աշխարհում և իրենց կողքին, բայց  
ոչ երբեք տիտղոսավորների ու «մեծավորների», ովքեր հա-  
ճախ և ցավոք՝ իրենց անարդար դերակատարումներն են  
ունենում մեր ու մեզպեսների կյանքում:

Իմ բոլոր լավ ու վատ օրերի, իմ երշանիկ կամ տիսուր  
պահերի մեջ շանացի լինել անխոտոր ու անթեր՝ մերժելով  
ամեն մի հարմարվողականություն:

Երբեք շակնկալեցի դափնիներ և շունեցա կեղծ կուռքեր:

Ժողովուրդս է պաշտամունքս: Ասել եմ ու կասեմ՝ առանց  
գեղումների:

Իսկ նվազավարի կոշումս Աստծո այն լավագույն պարզեն  
էր, որն ինձ հնարավորություն տվեց պատվախնդիր լինել  
ազգիս համար՝ ամենուր ժառայելով նրան, ժառայելու հա-  
մամարդկայինին:

Ապրեցի մեծ արվեստով ու մեծ երաժշտությամբ՝ չունե-  
նալով երբեք փառասիրության ցավ ու մարմաշ: Դա այնքան  
հեռու է եղել ինձանից, որքան իմ անունը կրող երկնային  
աստղը:



...Ես երշանիկ մարդ եմ իմ կրած բոլոր մեծ ու փոքր  
դառնություններով հանդերձ: Երաժշտության մեջ է կյանքիս  
իմաստը, և երշանիկ եմ, որ հնարավորություն ունեցա այդ  
մեծագույն զգացումը ամենուր և բազմիցս պարզելու վաս-  
տակիս իսկական գնահատողին՝ հանդիսատեսին:

Վերհիշել անցածն ու այդ ծալքերից առանձնացնել ամե-  
նահիշարժանը, ասել, թե որն է եղել լավագույններից լավա-  
գույնը համերգային կամ օպերային իմ ղեկավարումներից,  
շեմ կարող: Դժվարանուամ եմ հազարավոր ելույթներիցս մե-  
կին գերապատվություն տալ: Կասեմ միայն, որ հաճելին եղել  
է շատ, շատ:

Աշխատել եմ լավագույն նվազախմբերի հետ, ղեկավարել  
առաջատար օպերաներում, նվազավարել բազմաթիվ անմո-  
ռաց կատարումներ, հանդիպել փառահեղ երաժշտների՝ մե-  
նակատարների, երգիչների, ովքեր ինձ հետ միասին եղել են  
հայ և միջազգային բեմերում ստեղծագործական իմ հաջո-  
ղությունների գործուն մասնակիցը, կերտողն ու կրողը նաև:

Եվ, թող զարմանալի շթվա, որ հիշողություններս՝ կապ-  
ված այդ ամենի գնահատության հետ, հավաքական են:

Այդ ամբողջական շղթայում, իհարկե, ամենաշերմ ու  
նվիրական զգացումները ես ապրել ու ապրում եմ Հայրե-  
նիքում և ժողովրդիս հետ փոխադարձ սիրո կապվածությունն  
է ինձ տալիս ստեղծագործական ու կենսական լիցքեր...

Երաժշտական աշխարհում իմ տեսական գործունեության ընթացքում՝ շփվելով բազում կողեկտիվների հետ, աշխատելով տարրեր երկրների ու տարրեր ազգերի երաժշտ-կատարողների հետ, ամենից մեծ բավականություն, ստեղծագործական փոխասկացվածության առումով, ստացել եմ Գերմանիայում, Հատկապես Լայպցիգում՝ «Գևանդհաուզը» Փիլհարմոնիկ նվագախմբի հետ աշխատելուց, որի հետ յուրաքանչյուր համերգ եղել է իսկական ցնծություն։ Զէի կամենա ամեն ինչ վերագրել նվագավարի իմ իմացությանը։ Ես աշխատում էի պրոֆեսիոնալ երաժշտների հետ...

...Մարդն իր ողջ կյանքում սովորում է։ Սովորում է, երբեք շղադարելով զարմանալ։ Աշխարհում որքան բան կա, որ շգիտենք ու չենք էլ հասցնի իմանալ։

Երջանիկ է նա, ով կարողանում է կյանքից, մարդուց, բնությունից քաղած դասերը փոխանցել ուրիշներին։

Հաճախ կոնկրետ անուններ ենք փնտրում, թե ովքեր են եղել մեր ուսուցիչները՝ երեսի արտահայտելու համար մեր երախտիքը...

Դիրիժորի իմ ճամփին ուղենիշ են եղել Սինգրը, Պֆեֆերը, Դեգորմիերը, Մարտինոնը։ Չափանիշ են եղել Ֆուլտովնովերը, Տուկանինին, Փոն Կարայանը։ Բայց իմ ամենամեծ ուսուցիչը նորին մեծություն երաժշտությունն է... այն բոլոր կոմպոզիտորները միասին, որոնց կոթողային գործերը փորձել եմ մեկնաբանել իրենց մտահղացման հանգույն և իմ հոգուց բխեցնելով։

...Ընդհանրապես, շեմ կարողանում, գուցե ճիշտ է ասել շեմ սիրում շատ խոսել, արտահայտվել, պատմել, Դա այդպիս է։ Հաղորդակցվող ու խոսքաշեն եմ, երբ նվագախմբի առջև եմ, երաժշտների հետ, աշխատանքի, փորձերի ժամանակ։

Ավելի հաճախ խոսում եմ... լուսությամբ, շարժումների ու դիմախաղի միջոցով՝ նվագավարելիս, երբ ազատորեն բացում եմ հոգուս գոց դռները։

Կյանքում երբեք այդպիս չեմ կարող արտահայտվել։ Չեմ էլ պնդում, թե ինքնամփոփ, անհաղորդ կամ լուսակյացի մեկն եմ, բայց շատերի պես անկաշշանդ, արագ ու հապճեպ ինքնարացահայտվող էլ չեմ։ Իհարկե, երբեմն՝ կախված բարձր տրամադրությունից, դառնում եմ զրուցասեր, գուցե թե շատախոսում նաև։ Սակայն, երբեք խաղի կամ պայմանականությունների մեջ չեմ լինում։

...Շրջապատում ես այնպիսին եմ, ինչպիսին կամ։ Դիվանագիտություն ասվածն ինձանից հեռու է յոթ սարով։ Ինչ որ ասում եմ կամ անում, հոգու թելադրանքով է, ներքին մղումով, անկեղծ ու անմիշական։ Երբեք չեմ սիրել կեցվածք։

Սուտն ու կեղծիքն ատում եմ՝ իրեն հասարակական շարիք ու շարիք ծնող։ Ցավում եմ, որ դրանով ենք շրջապատված և դրանից տուժողը միայն ազնիվ ժողովուրդն է։

Հաճույք եմ ստանում անկեղծ մարդկանցից, անշահինդիք հարաբերություններից, անսուտ ու ազնիվ արքեստից։

Ընդհանրապես, մեծ արժանիք եմ համարում խոստովանելու ունակությունը։ Դա ուժի նշան է։ Մարդ պետք է կարողանալ ընդունել իր սխալն ու թերությունները։

Սիրում եմ իմացականությունն ու խոհականությունը, սակայն գերադասում եմ հաճախ շփվել հուզական, անմիշական մարդկանց։ Ճշմարտության իրենց փնտրությունը մեջ նրանք կեցվածք չեն ընդունում։

...Մարդու մեծագույն հարստությունը համարում եմ հավատը՝ առողջ, բանական, ապրեցնող։

Ինչպիս կարելի է հավատալ այն հզոր, գերագույն, ամենաստեղծ ուժին, որ առկա է մեզանից անկախ, մեզանից դուրս և անօրինում է մեր կյանքն ու ճակատագիրը։

Ինչպես է մարդ կոչում այդ ուժը՝ Աստված, տիեզերական ոգի, թե մեկ այլ անվամբ, կարեոր չէ: Պետք չէ կոնկրետացնել... Պետք է հավատալ՝ հավատով:



...իմ աշխույժն ու տրտմությունը շափից դուրս մոտ են իրար: Երբ շատ հոգնած եմ լինում կամ, ինչ որ պատճառով վրդովված, խուսափում եմ մարդկանցից, երբ տրամադրության անկումներ եմ ունենում, միակ ֆրկություն շփումն է մեր այգու ծառ ու ծաղկի ու իմ սիրասուն կենդանիների հետ: Հաճախ ինձ թվում է, թե նրանք ունակ են մարդուց էլ լավ հասկանալ... մարդուն:



...Կյանքի ու մահվան մասին շեմ սիրում միաժամանակ խոսել, խորհել: Տիսուր է, տիսուր է ու բնական...

## ՈՎ ՃԱՆԱԶԵՑ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

...Գիրկընդիառն են կյանքի լույսն ու մութը...

Ամեն հեքիաթ իր սկիզբն ունի և վերջը, սակայն անվերջ, անհատնում է հեքիաթը հոգու: Լույս ու մութի ներթափանց դաշնությունն է սնում տերունական այդ հորինվածքը, այդ միասնությունը, որ բխում է անհրաժեշտ հակադրության հավերժական խորհրդից:

Ի հաստատումն այդ խորհրդի:

Ամառային երկար ու տաք օրվա մեջ լույսն իր երկնային մահման էր մտնում՝ անեղբական, անընդգրկելի, հոգեպարար մի համանվագով:

Իրականում ամեն ինչ առավել քան հեքիաթային էր, և երկնածոր մեղեղին՝ ախորժալուր ու զրնգուն:

Հրաժեշտի տարաշխարհիկ դողանջներ շաղելով շորսդին, դանդաղ ու հանդիսավոր վայրէջքով արել սահեց ցած, գամվեց հորիզոնին, և Սուրբ լեռան ուսերից մինչև գեղատես Քառագագաթը փոված երկնափեշը դարձավ կախարդական գունափոխումների մեջ ծածանվող շղարշ:

Ուրիշ մի մայրամուտ էր՝ նման իրիկնային աղոթքի, որով օրհներգլող արեգակը անծուն կապույտում լուծվող հսկա հրագունդ չէր, այլ հայոց սեգ լեռնապարին ափրատոշոր հանգչող երկնային թառան:

Եթե նկարիչ լինե՞ր... Սակայն արեամուտի դյութանքը գեղարվեստորեն ոսկեռելու կարիք չուներ: Անդրանցիկ ու մշտահմա հարընթացության պատկերը, իրբեկ կատարելության անվախճան պտույտ, ամբողջանում էր արեագալի ու մայրամուտի գրկանքով և տիեզերական այդ անմեկին ծեսն էր ենթակայեցնողը մնացյալի:

Եթե բանաստեղծ լիներ... բայց բառերն էին սուլ... պարզապես աստվածային պահերի վայելքն էր ծնում մտքեր

գեղեցիկի հավերժ գերակայության մասին և այդ բոլոր պահերն իրենն էին:

Այս և նման բոլոր ակնթարթներին չէ՝ արդյոք, որ մարդի իրազների ու տեսների ուխտավորն է դառնում՝ փորձելով հոգեթոփչով միաժամկետ անիմանալիի տարածները, սուզզել այն հավերժահոս կենսակունքը, ուր թաթախվում, երանգավորվում է պատկերապատեղ վրձինը, հաղորդություն առնում բառը, դաշնության ոլորտ ենում իմացության, հայտնագործումի խոյանքը, մեղեդիանում են միտքն ու հոգին:

Իսկ նա այսպահ լուս է, գուցե համեմատելիներ է որում անզրուգական տեսարանին, գուցե ավելի շքեղ վայելք է ապրել աշխարհի մեկ այլ ծագում, մեկ ուրիշ մայրամուտով: Սակայն, պահ առաջ ընդհատված մեր զրույցն այլ բան է վկայում, Երաժշտության մեծ մոգը հիմա անխոս ըմբռշնում է հորիզոնին շքեղաշուրջ ծավալվող երկնանկարը.

...Բառեր պետք չեն ազորողին,  
Նրա հոգին է խոսում...

(Բ. Մ.)

Ու մի իմաստուն, իմաստուն ժափտ ծերունական դեմքին:

Իր բնույթին համաձայն, պերճախոս չէ, սակայն երբեմնակի քնարական ինքնամատուց խոստովանություններով կարող է ուղղակի զարմացնել: Այդպիսի պահերը, սովորաբար, նվիրական գաղտնիքներ են վերհանում:

Ահա, հանդարտ մի կողմ դնելով սուրճի բաժակն ու ձեռքի անփույթ, արտիստիկ շարժմամբ ուղղելով ցրիվ մազերը, նա անսպասելի զգացմունքայնությամբ հավաստում է, որ բնապաշտ է ի սկզբանե:

Եվ ընդհանրապես, ի՞նչն է ծնում մեծ ու իսկական արվեստ... իհարկե, բնույթան ներշնչանքն ու ճշմարտության ճանաշումը: Ահա ինչու, իրեն հոգեմոտ է իմաստունի այն հանճարեղ միտքը, թե «Ով առավոտյան կարողացավ ճանաշել ճշմարտությունը, երեկոյան կարող է հանգիստ խղճով մեռնել»:

Սա մարդկային կենսափիլսոփայության ու գոյիմաստի խտացումն է, և այս խորհրդի բխումով չէ՝ արդյոք, որ համար ինքնահաստատումով երկրային կյանք ապրող մարդը հազար-հազար տարի նայում է երկինք՝ որոնելով այնտեղ

իր ոգեղեն սավառնումի ուղեծիրը: Եվ անեզրական ու տեսլական թափառումների մեջ նա իր երազանքները մեկիկ-մեկի տեղավորում է ընտրյալ աստղի վրա՝ ահազնացող մի հավատով, թե մի գեղեցիկ օր, որպես հավերժի ճամփորդ, ինքն իրապես կհայտնվի այնտեղ ու հոգու ողջ անձկությամբ կփարվի այլևս իմացյալ գարձած անիմանալիին:

Սա է իսկությունը, և հրաշքի, թե իրականության, անցողիկի, թե լինելության այս հոլովույթին ներդաշնակ՝ ամեն հանդիպման հրճվանքից մարդ զանում է վանել տարանշատման անասելի թափիծը և ամեն մի բաժանումին՝ համակվում հանդիպման թաքուցյալ խինդով:

Այսպես եղել է ի սկզբանե և լինելու է միշտ, քանզի, Աստծո կամոք, գիրկնդիմառն են կյանքի լույսն ու մութը...

Եվ այսպես՝ աշխարհի ժխտրից զատ, խաղաղ իրիկնամուտի մեջ, օրվա հեքը թեթևասհ պարուրում է քաղաքին իշխող նորքի բարձունքը ու նրա հետ՝ փոքրիկ այս առանձնատունը:

Մաղկազարդ սանդղաշերտերով դեպի վեր, մինչև տուն ձգվող գողտրիկ այգու նորատունկ թուփի ու ծառերի տակ երկարում, ձեափոխվում են ստվերները... մութը համառ թափումով տարածքներ է նվաճում:

Այգու ամենավերին հատվածում, վարդաթփերով հարդարուն ու թաղարներով շրջապատված անկյունը մեր ամենօրյա գրուցատեղին է ու նաև՝ հարմար դիտակետ, որտեղից կարող ես հայացքիդ մեջ առնել պաշտելի ոստանիդ համայնապատկերը: Ահա նորից, մտածում ու հույզ հոգուց պոկվում, ծովզում են օրվա այն խորհրդավոր պահին, երբ մոտալուտ մութի դեմ հուշիկ ու հանդարտ բացվում են երկրային ու երկնային դռները:

Այս հովվերգությամբ՝ մթնշաղը վերածվում է թախծոտ երգի, բուրավետ սուրճը պարպվում է համույքով, իսկ սեղանին հանգչող ճերմակ թուղթը մնում է անբիծ ու անգիր:

Մեծանուն արվեստագետի հետ մեր հաճախական հանդիպումները, սրտաբաց անկեղծ առնշումները անծանոթ ու անեակնկալ շերտեր են բացում, ապրված, արժեորված ժալքեր, որոնք նոր լույսով են ներկայացնում նրա իմաստալից կյանքը:

Աստանդական օտարափ դեգերումների մասին պատկերվոր հուշերը սոսկական պատմություններ չեն, այլ ստեղծագործական վերընթացով նշանավորված կենսապատումի առլեցուն դրվագներ, որոնց միահյուսումով հառնում է մարմնավոր, շնչեղ ու պսակյալ խկությունը։ Հարկ չկա զարդարիկ թանձրացումների, քանզի արվեստում լիիմաստ ինքնայրումի վկայություն՝ ինքնին գերիսիտ է, եվ այդու, գերադասելին բնական պարզությունն է ու ճշմարտությունը, որով մաքրագործվում է ամենայն հղացում։ Այսկերպ՝ իմկողմանն մտահղացվող դիմանկարն էլ ուրվագծվում է իր հոգու, իր էության դաշնությունից բխող նրբագծերով ու գուներանգներով։

Հուզական հավելումներ նկարագրին պետք չեն. առանց այդ էլ կերպարը խոսուն է։

Մաեստրոն բացառում է բռնագրու կեցվածք, դրսեորույթի արհեստականություն։ Նա արտիստիկ է բնականորեն, անսեթևեթ, երրեմն բարդ ու անթափանց, երրեմն՝ զարմանալիորեն դյուրահաղորդ։

Շատ անգամ, երբ փորձել եմ հանկարծական շեղումների մղել նրան՝ կտրուկ փոխելով զրուցի թեման և ուշաղորությունը հրավիրելով անցուդաբերի, որոնք իր կյանքում կարող էին և կարևորություն շունենալ, համակվել ու հիացել եմ նրա գործուն իրազեկությամբ և ամեն ինչի հանդեպ մարդկային խոր, բովանդակ վերաբերունքի մշտակա առկայությամբ։

Անպայմանորեն՝ շիտակ, անզարդ ու անմիջնորդ, եվ անկախ նրանից, թե ինչի մասին ենք խոսել ու խոսում՝ տիեզերականի, թե երկրայինի, հավերժի, թե անցողիկի, հոգու, փնության, նյութի, մարդու կամ արվեստի՝ իր գնահատության շափանիշներն աներկա բխել են աստվածահաճումարդկայնությունից։

Վերջալույսի թավշե շողերը վետվետում են նրա դեմքին։ Մտասույզ, կկոցած աշքերով, հանդարտաբարո ու վեհ՝ այդպիս նա ծանոթ, շատ ժանոթ, գուցե թե անտիկ քանդակ է հիշեցնում, ճերմակահեր գլուխը թեթեակի հակած, մի տեսակ անէացած։ Այս վիճակները, սովորաբար, մաեստրոյի

քննութիւն այնքան էլ հարիր չեն։ Իրականում նա անշափ շաբժուն է ու անհանգիստ։

Օգտվելով հարմար պահից, արագ ու անաղմուկ փոխում եմ ինձ համար ավել մասունք դարձող ձայներիզը։

Ջրուցում է, երրեմն քնքորեն շոյելով կողքին ապահովաբար մեկնված Դոլի շանը, Քիշ հեռվում Պուպե շնիկն է խաղում, իսկ ծղոտահյուս, հարմարավետ զամբյուղի մեջ նիրհողը Սիսի կատուն է։ Գեղանկարային հանդարտություն բուրող այս կենդանի կտավի շնչավորները մաեստրոյի ու նրա տիկնոջ սիրասուններն են, ընտանիքի լիիրավ անդամները։

Քամին շարժում է թփերը։ Վախից շմոր մի թիթեռ ճիգով պոկվում է ծաղկաթերթից ու ակամա սլացքով տրվում իրիկնային սյուրքի քմահաճությանը։

Նվագավարի հետ իր արվեստի շուրջ մեր զրուցը շեղվել է ու, որքան էլ փորձում եմ մտովի դասդասել, ի մի բերբել որոշ անհրաժեշտ հարցումներ, կարծես շի ստացվում։ Եվ լավ է, որ այդպիս է։ Նման առիթներ շատ չեն լինում։

Արվեստագետի այսպահաճին տրամադրությունը ասես մի փոքրիկ դուռ է բացել իր ներաշխարհը նորովի ընկալելու, իրեն նոր գույներով տեսնելու ու ճանալելու համար։

Ընդհանրապես, Օհան Դուրյան նվագավար-երկույթը, իրավամբ, մեծ է ու իր գործն այնքան ընդգրկուն, որ դժվար է երաժշտական համապարփակ մտակառուցի, իր յուրատիպ կերպի, մասնագիտական հզոր ինքնարտահայտման ու ինքնարտապետման գերակա շերտերի տակից արևերես հանել նրա մյուս՝ ոչ պակաս հետաքրքրական որակները, առօրյա հարաբերությունների ու շփումների մեջ ճշտիվ ըմբռնել ու գնահատել զուտ մարդկային հուզերը, ապրումները։

Նման էությունները խոստովանող են բացարձակ վստահության մթնոլորտում։ Պետք է փոխադարձորեն պարզ ու անկեղծ լինել։ Ու ես զանում եմ ներքուստ հարազատ մնալ աներեւոյթ պայմանին։

Եվ հընթացս՝ ծիսականորեն պարպվող սուրճը, որ անկասկած համելի ընկերակցության խորհուրդ ունի, զրուցի

է ներքաշում նաև հայոց նուարդի նմանակ գեղեցկուհի Ալիսին:

Հաճախ կամենալով ճշգրտել իրենց կյանքին ու ստեղծագործությանն առնչվող որևէ դեպք կամ փաստ, մասսարոն դիմում է նրան:

Իր ամուսնու արվեստի երկյուղած գնահատողը լինելով, նա նաև այդ բարդ ու ինքնատիպ էության հոգու անսխալ թարգմանն է:

Ահա կրկին տիկին Ալիսի դեմքը ժպիտ է ճառագում, իր վճիռ էնթյան արտահայտությունն է, որ սիրելի եղավ մեր ծանոթության առաջին պահից:

Իհարկե, կարեոր բան ունի ասելու, գաղտնիքի պես մի բան, ինչի մասին մասսարոն հպանցիկորեն է խոսել, իսկ Ֆրաննիայում ծնված ու մեծացած հայուհին անթաքույց սիրով, անսքող հպարտությամբ լրացնում է ամուսնուն:

Խնդիրը հարազատ հող ու ջրի հետ անեղծ ու անդավ կապվածությանն է վերաբերում:

Վաղնշական նախնությամբ՝ անձնականի ու վերանձնականի եղելությունը արդիական է հավերժորեն: Գերապատվելին անձից վեր լինելն է, և իրավ մեծերը, որպես իմաստուն հետեւրդներ, ապրում, ինքնայրվում են այս գիտակցումով: Ուստի նրանց արարշությունը, նրանց ստեղծածն, իրականում, նյութապես իրենցը չէ: Անհատի համաձանաշման ու փառքի դափնիների իսկական հասցեատերը նրան ծնած ժողովուրդն է: Եվ այս ճշմարտության թելադրումով է, որ օտար եղերթներում ձեռքբերած վաստակի փառապսակն ու գնահատության վայելքն անզոր եղան լրացնելու արվեստագետին, ու նա ի լուր ամենքի խոստովանեց, որ Հայրենիք է դարձել իր ժողովրդին ժառայելու և, ի վերջո, իր հողում հանգչելու որդիական փափառվ:

Իմաստնացած տարիքը ու նաև՝ կարոտարազնությունը հուշեցին հանգրվանել քաղաքի գեղատես բարձունքում: Նայիր ու հիացիր՝ նրեանն ափիդ մեց է, չէ, ավելի ճիշտ՝ սբրտիդ ու աշքերիդ:

Սա կատարյալ վայելումն է իրականացված երազանքի՝ ձախից Մասիսի երկնասույզ, վեհապանծ հառնումն է՝ ուսերին թևած խրոխտ լեռնապարով, որը, դեպի աջ տարածվելով,

ձուլվում է զմբուխտ լանջերից մինչև ճյունամած գագաթները տեսանելի, շենչող Արագածի բնանկարին, իսկ աջում՝ Արալեռն է, առասպելական արքայի քարաքանդակ պատկերն իր բաշին առած:

Հայացքիդ առջև շքնաղ մի հեռաստան, երկինք միտվող մի լեռնաշխարհ, որը և կարոտ է, և գիտակցում, և հողում անթեղված խորհուրդ:

Ափսոս, որ այդհայց հորիգոնը հետ չի քաշվում՝ տեսանելի դարձնելու հայրենյաց շարունակությունը... հազա՞ր ափսոս:

Ասված ու շասված խոսքերի արանքում դատարկ տարածություն չկա: Ճիշտ և ճիշտ ինչպես արիեգերաստեղծ մեղեդին: Ամենայն ինչ իմաստով է լեցուն և շնչեղ է՝ իրրե հավերժորեն հիշատակելի ու վերապրեցնող հավատ:

Մասսարոն լուր է, և այդ լուրիայն մեջ կարծես ավելի թափանցիկ ու ըմբռնելի են դառնում իր հոգում խնամքով թաքցրած ապրումները, իր անտես գաղտնաբաններում հորդացող նվիրական բռնկումները, այն, ինչը փայփայում է սրդողած և ինչի մասին չի սիրում բարձրածայն արտահայտվել:

Գուշակության խնդիր չկա և ոչ էլ՝ հոգեխույզ սեհուումների: Հաճախ լոին խոստովանությունն ավելի խոսուն է ու տարողունակ:

Նահապետ լեռանը գամված նրա հայացքն անսխալ զգացում է արտահայտում, ու ես փորձում եմ վերծանել այն...

Աներկրա է ճշմարտությունը, որ Հայոց հավատի ուղին Արարատով է վերձիգ... Եվ մեր որոնումների բոլոր ճանապարհները խաշվում են այս օրհնյալ, այս երկնամերձ վեհության փեշերին:

Հարազատ, պաշտելի բնօրրան... Մնացյալն ինքնին պարզ է. այստեղ ուրիշ մի խորհրդով է սկզբնավորվում հոգու ազատթոփքը, ուրիշ մի երկինք է հովանի արվեստաստեղծ ոգու սավառնումին և հայրենի հողն է սնում հզոր արարումների արմատը:

Ահա այս ճշմարտությամբ են իմաստավոր Օհան Դուրյան-արվեստագետի, մարդու, խոշոր անհատականության ապրած ու ապրելիք բոլոր պահերը:

# ՓԱՍՏԱԿՐԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿԱՆԵՐ ՕՀԱՆ ԴՈՒՐՅԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԱԾ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԵՐԳԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻՑ

Օհան Դուրյանի առաջին համերգը կայացիգի «Գևանդ-  
Հառուց» նվագախմբի հետ:

Մրագրում՝ Շոստակովիշ, Ռավել, Բորոդին:

## Ի ՔԻՎՍ ՀԻԱՑԱԿԱՆ ԲԱԶՈՒՄ ԿԱՐՄԻՔՆԵՐԻ

...Փոքրամարմին, նուրբ արտաքինով նվագավարը, որ  
շայաստանից է եկել ու զեկավարում է առանց փայտիկի և  
առանց պարտիտուրի, լավ գիտե, թե որն է իր ուզածը:  
Չուապ է, առանց ցուցադրական, խոշոր շարժումների; Ղե-  
կավարում է կատարյալ ճշգրտությամբ՝ երաժշտական հնչու-  
ղությունը հասցնելով գագաթնակետի...

«Սենիֆիս Թագերլատ», 1962 թ.

...Տպավորիչ, առինքնող անձնավորություն է: Շարժում-  
ները՝ շափակոր ու սահուն: Երաժշտությունը շեշտադրում է  
բացառիկ նրբությամբ: Զախ ձեռքը կերտում է, աջը՝ խստիկ  
ու հետեղականորեն ղեկավարում: Արտաքուստ թվում է,  
թե ազատություն է ընծեռել նվագախմբին, բայց դա միայն  
այդպես է թվում, իրականում, ողջ կատարման ընթացքում,  
նա վստահորեն իր հակող ձեռքերի տակ էր պահել նվագա-  
խումբը: Հնչյուններն ինքնաբուխ էին հոսում, բայց նա ձեա-  
վորում էր երաժշտությունը...

«Սենիֆիս Ցայտանգ», 1962 թ.

Մենք շատ ուրախացանք, որ կրկին հանդիպելու ենք Օհան  
Դուրյանին: 1962-ին նա արտակարգ տպավորություն թո-  
ղեց, Այս տարի մեր սպասելիքներն առավել պասակեցին Մո-  
ցարտի սիմֆոնիայի վարպետ կատարումներով: Այս հնչեց  
թեթև, անսովոր ու անշափ երաժշտական:

116

իհարկե, հետաքրքիր էր նաև հավաստիանալ, թե ինչպես  
է Դուրյանը մատուցելով Բրուկների սիմֆոնիան: Մավալուն  
ու դժվար մի գործ:

Առաջին իսկ տակտերից ամեն ինչ պարզ էր, չնայած նա  
ավելի արագ տեմպերով սկսեց, քան այն, ինչին վարժվել  
էինք «Գևանդհառուցի» նախկին գեղարվեստական ղեկավար  
Ֆրանց Կոռնվիչնիի կատարումներից: Մատուցման ողջ ըն-  
թացքում զգում էինք վեհ, բացարձակ գերիշխող մի հանգը-  
տություն:

Թիշ ենք լսել Բրուկների այսքան գերհագեցած հնչողա-  
կանություն: Զբավարարվելով սիմֆոնիայի մեղեղային ամ-  
բողջականության պահպանմամբ, Դուրյանը որոնում ու գրտ-  
նում է նոր լիցքեր՝ ուժգնացնելու այն: Ուշադիր հետևելով  
նյութի կառուցիկությանը, նվագավարը տալիս է մեղեղային  
շարժունակ ու խորքային զարգացում:

Այս երեկո մենք զգացինք նվագախմբի ու նրան տիրող  
նվագավարի կատարյալ առնչության, փոխհասկացության  
օրինակ:

Օհան Դուրյանը լավ գիտե, թե ինչ կարող է ստանալ  
«Գևանդհառուցի» նման նվագախմբից և թե ինչ կարող է  
ավելացնել դրան իր նման նվագավարը...

Այս համերգն ազդարարեց Բրուկների 140-ամյա հորել-  
յանի տոնակատարման սկիզբը...

«Ումին», 1963 թ.

...Օհան Դուրյանը «Գևանդհառուցի» գեղարվեստական  
ղեկավարի թափուր տեղի համար հրավիրված ամենաառաջ-  
նակարգ նվագավարներից է:

Ու թեև նվագախումբը Բրուկների սիմֆոնիաների կա-  
տարման մեծ ավանդույթներ ունի, միևնույն է, հանդիսատե-  
սի սպասելիքները մեծ են: Մյուս կողմից, եթե նվագավարում  
է այնպիսի մի վարպետ, ինչպիսին Օհան Դուրյանն է, մտա-  
վախություն չի կարող լինել:

Մայրեծայր տիրապետելով պարտիտուրը և բոլոր ման-  
դրամաներով իմանալով այն անգիր, նա կարողացավ մեծ  
գործը լցնել շերմությամբ, որպես մի աշտարակ կերտելով  
ու կառուցելով երաժշտական այդ կոթողը:

Բրուկներյան ոգու, ապրումների ու վայելքի համար հանդիսատեսը շնորհակալ եղավ՝ թեմ հղելով իր որոտընդուստափողույնները:

«Միտրել նոյեմբեր նախորդիքեն», 1963 թ.

Թերլիոզի «Ֆանտաստիկ սիմֆոնիան» առհասարակ մեծանում մատուցվել է այնպես, որ սկզբնամասում, գործիքավորման հետևանքով, անտարերություն է հարուցել, ինչը չես ասի վերջին երկու մասերի վերաբերյալ: Սակայն Օհան Դուրյանն՝ իր բացառիկ մատուցմամբ, անսպասելիորեն կենդանացրեց, շնչավորեց այս գործը: Դուրյանը, ի խորոց ըմբռնելով Թերլիոզի դեմոնային արտիստականությունը, վերածնեց հեղինակային ստեղծածն այնպես, որ նվագախումբը մեզ մատուցեց այն անխաթար ճշգրտությամբ: Սա արդյոք իրավունք չի տալիս ասելու, որ Օհան Դուրյանը մեր ժամանակների ամենամեծ նվագավարների շարքում է:

...Այս համերգում Դուրյանը նորոգեց այն տպավորությունը, որ արդեն ունեինք: Նա մեզ գամեց իր կենդանի, պարտադրող երաժշտականությամբ, իր առլեցուն ներքինով: Հեղավարելով անգիր, նա գերում, հիպնոսում է երաժիշտներին: Նվագախումբը հնագանդորեն հետևում էր իր նվագավարին, շնորհիվ որի Թերլիոզը հնչեց այրող մեկնությամբ...

«Միտրել նոյեմբեր նախորդիքեն», 1963 թ.

### ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ-ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ-ԳԵՐԻՇԽՈՒՄ

...Նորից սրտագին հանդիպում Օհան Դուրյանի հետ:

Լայպցիգի երաժշտասեր հասարակայնությունը վերստին ողջունեց նվագավարին... Նվագավարը դարձյալ գերեց:

Երիտասարդական ավյունով նա դրսեռքեց փորձառու վարպետին հատուկ տիրակալման հասուն կարողություն:

Նա գիտե վերակերտել երաժշտությունը ստեղծագործարար, դասդասել, համադրել ու ներդաշնակել մասերն իրար, շեշտադրել, տալ աստիճանական զարգացում, տալ գործիքային հնչողական լիակատար ներդաշնակություն՝ առաջնային, հնչեղ, լրացնող, թույլ:

Նա ձեռավորում է բոլոր գրվագներն անխոտիր, շանտեսելով որևէ հնչյուն: Արդյունքում՝ անընդմեջ հնչողականություն, կենդանի տրոփիյուն, կենդանի երաժշտություն:

Բացակայում է կատարողական սառը ճշգրտությունը:

Հուզական ներքին բուռն հագեցածությամբ հանգերձ, Օհան Դուրյանն ունի ներքին հավասարակշռեցնող հանգըտություն, որով և ստեղծում է երաժշտության անմիջական ընկալման ու ապրումի իսկական մինուրուս: Սրա փայլուն ապացուցը թեթուվենի 3-րդ սիմֆոնիայի երկրորդ մասի մեկնությունն էր:

Ինչ խոսք, նույնը կարելի է ասել նաև Վագների «Մայստերգինգեր» ուվերտյուրի մասին: Բայց հատկանշականը թեթուվենի 3-րդ սիմֆոնիան է, որ մինչ այդ բազում անգամներ կատարվելով մեր լսողությանն արդեն սովոր հնչողությամբ (նկատի ունի Հ. Փոն Կարայանի գործիքավորումները և ինքնակամ փոփոխությունները թեթուվենի սիմֆոնիաներում — Ռ. Մ.), Օհան Դուրյանի ներկայացմամբ հնչեց բոլորվին թարմ, հեղինակային մտահղացմանը հարազատ, ծիշտ այնպես, ինչպես հանճարեղ երաժիշտն է ստեղծել՝ համարելով այն իր լավագույն սիմֆոնիան:

Դուրյանն՝ աննախատիպ, անսովոր որոշ մոտեցումներով, զարմացրեց ու համոզեց ունկնդրին:

«Ունիս», 1964 թ., Լայպցիգ

### ՆՈՒՅՆ ՀԱՄԵՐԳԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝

...Թեթուվենյան համերգաշարի իսկական բարձրակետը եղավ 3-րդ սիմֆոնիայի դուրյանական բացառիկ մեկնարանությունը, որը շատ է տարբերվում արդեն մեզ ծանոթ այլ մեկնարանություններից:

Նման մատուցումն, անշուշտ, պայմանավորված է ստեղծագործության մեջ նվագավարի խորքային, հետևողական թափանցման կարողությամբ: Սա մի կողմից Սյուս կողմից՝ մենք տեսանք գերող, կախարդող նվագավարական կիրք ու խառնվածք, ինքնադրսենորման անսահմանափակ հնարավություն...

«Լայպցիգի Ֆալկենբայլենգ», 1964 թ.

1964 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, Օհան Դուրյանի նվազավարությամբ Հանրահայտ «Գևանդհառուզը» շորս համերգունեցավ Լայպցիգում:

Մրագիրը հագեցած էր՝ թեթհովեն, Վագներ, Հայդն, Դվորժակ, Շուտակովիչ, Բրամս:

Դորս արտակարգ համերգ Օհան Դուրյանի առինքնող մեկնարանությամբ... սա երաժշտական քննադատների միահամուռ կարծիքն էր: Իսկ բեղինյան «Նոյես Դոյչլանդը», անդրադառնալով այդ համերգներին և, մասնավորապես, նվազավարի բացառիկ վարպետությանը՝ «Նա հիշեցնուած է Արթուր Նիկիշին» խոշոր վերտառության ներքո գրեց:

«...Հանդիսատեսներն այս համերգներում տեսան երկու նվազավարների ո՛չ միայն արտաքին, այլ նաև՝ ներքին նմանություն, որն արտահայտվում է նրանց արտասովոր ձգողականությամբ ու հմայող էությամբ»...

«Խոյես Դոյչլանդ», 1964 թ.

...Դուրյանը կարող է տրվել ինքնամոռացության՝ չկորցնելով ինքնատիրապետումը: Կարող է նվազախմբին առաջարկել նրբերանգային կատարողական պահանջներ՝ չկորցնելով, շխախտելով հնչողականության կուլտուրան: Նույնիսկ ամենաուժեղ ֆորտեն նրա մոտ չի հնչում կոպիտ կամ գեղագիտորեն ո՛չ հաճելի:

Ծնված լինելով իբրև իսկական բրուկներյան նվազավար, նա ունի ծավալուն շունչ: Կոմպոզիտորի 9-րդ սիմֆոնիայի նրա մեկնարանություն՝ առաջին նոտայից մինչև վերջինը, լեցուն էր ներքին լիցքով ու լարվածությամբ:

«Թեր Մորգեն», 1964 թ.

...Բրուկներյան նվազավար դառնալ հնարավոր չէ: Պետք է այդպիսին ծնվել: Դուրյանը ստեղծագործությանը մոտենում է աներևակայիշի նվիրումով: Նրա ձեռքերը շաղախում ու ձեավորում են երաժշտական նյութը:

Բրուկները երբեք չի հնչել այսքան լեցուն ու հստակ...

«Խոցինալ Ցայտունգ», 1965 թ.

...Օհան Դուրյանի ղեկավարումով Պրոկոֆևի 9-րդ սիմֆոնիան ընդունվեց փայլուն հաջողությամբ: Իսկ «Բոլեբրոյի մեկնարանությամբ՝ Դուրյանը հուզմունքից ու լարվածությունից քրտնելը թողեց նվազախմբին և ունկնդրին, թողնելով նաև, որ Ռավելի գործիքավորման արվեստը մնա անխաթար և նրա գիծը հնչի բնականորեն, ինքնարուիս, սահուն զարգացմամբ:

«Ունիտն», 1965 թ.

...Հայ նվազավարը թեղինի այս վերջին փառատոնին հմայեց երաժշտասերներին: Բրուկների 9-րդ սիմֆոնիայի հնչողական կառուցիկ վերամարմնավորումն ու մեկնարանումն այնքան գերող էր, որ մեզ առանձնապես ոչ շատ ծանրթ նվազավարի անունը մի գիշերվա ընթացքում հայտնվեց բոլորի շուրջերին: Նրան լսողներից շատերն անգամ ցավ գտացին, որ հոգեպարար այդ զգացումն ապրեցին միայն մեկ համերգով:

Նրա ղեկավարությամբ և թեղինի ռադիոհեռուստատեսության սիմֆոնիկ նվազախմբի կատարմամբ հնչեցին Բեթհովենի 1-ին և Շուտակովիչի 5-րդ սիմֆոնիաները: Բոլորը հիացած էին այս բացառիկ արվեստագետով՝ իբրև արդի և դասական երաժշտության հրաշալի մեկնարանողի: Նրա երաժշտական անսովոր կիրքը, ներքին հավաքվածությունը, նրբերանգների զգացողությունն ու ծավալուն շունչը, նրա անսխալական բնագդն ու հանկարծական պոռթկումների հրաշալի տիրապետումն արդեն Բեթհովենի սիմֆոնիայի կատարմանը տվեցին շարժունակ, վերընթաց թափ: Նրա ներքին կրակն ու արտիստական կերպը ի սպառ արտահայտվեց Շուտակովիչի 5-րդ սիմֆոնիայում:

Այս գործը հնչեց մի շնչով: Մենք հասու եղանք քնքուշ ու նուրբ բոլոր մանրամասներին և ոչ թե առանձին կտորների: Գա մեծ գործ է, և այդ ծավալի մեջ շկար անշունչ որևէ կետ:

«Թեր Մորգեն», 1966 թ.

...Օհան Դուրյանը ղեկավարում է առանց նվազավարական փայտիկի, որի փոխարեն, սակայն, ավելի ներթափանցումով

և ավելի ուժգին խոսում են նրա ձեռքերը: Նա մեծ երկույք է՝ իր մտքով, ուժով ու ճառագուն արվեստով...

«Թեղիներ Ցայտանգ», 1966 թ.

...Նուրբ հուզականությամբ դրսերպից շնչեղ կատարումով սկսվեց «Գեանդհապուզի» համերգը Օհան Դուրյանի ղեկավարությամբ: Մրագրում՝ Բեթհովենի «Էգմոնտ» ուվերադուրը:

Հետաքրքիր է, անշուշտ, երբ շատ հաճախ նվազված գլուխործոցները մատուցվում են ոչ սովորական, ավանդական դարձած մոտեցմամբ: Բոլորովին նոր նրբերանգներ... համերգի գագաթնակետը Ռեգեր-Հիլեր վարդիացիաների ճարտարապետական կառուցումն էր՝ հնչողական խտացումներով, շարժունակ դրվագավորումներով, ինչը հաճախ չէ, որ լսել ենք մենք:

Լիահունչ էր ավարտական մեծ ֆուգան, անթերի ու խոսուն:

Այս բացառիկ հաջողությունից հետո մնում է հայտնել բազմաթիվ ունկնդիր-հանդիսատեսների փափազը՝ լայպցիգում նորից ու նոր հանդիպել Օհան Դուրյանին, հաջորդ հերդաշրջանում:

«Լայպցիգեր Ֆոլկ Ցայտանգ», 1966 թ.

...Դուրյանը Ռեգեր-Հիլերի վարդիացիաներում ձայների շաղախումն իրագործեց նրբին ճյուղավորումներով, կարողանալով լավագույնս բացահայտել Ռեգերի գործի ոռման տիզմը:

Ամենայն մանրամասնությամբ տիրապետելով պարտիտուրը, նա դրսերց նվազավարի իր վարպետությունը:

Զարժանալի չէ, որ խանդավառ ծափողույնները չեն ավարտվում...

«Միաբելդոյչ Խոյես Խախոբիսեն», 1966 թ.

1966 թվականի աշնանը Օհան Դուրյանը ստանձնեց լայպցիգի օպերային թատրոնի երաժշտական ղեկավարի պաշտոնը:

...Օհան Դուրյանի բեմելը լայպցիգի օպերային թատրոն նշանավորվեց «Արդարի» ղեկավարումով, որով նա դարձ-

լալ նույն ուժգին տպավորությունը գործեց, ինչին մենք սովոր էինք իր սիմֆոնիկ համերգներից: Նախերգանքի առաջին խոկ տակտերում արդեն առկա էր քնարական արտասովոր ու խոր հագեցածությունը, որը շարունակվեց մինչև վերջ՝ դրամատիկ զարգացումով: Դուրյանի փայլուն ղեկավարմամբ նվագախումբը հանդիսականին ինքնամոռաց զգացումներ պարգևեց...

«Ունիոն», 1966 թ.

...Ով հրաշալի այս նվագավարի արվեստը վայելել էր համերգային դահլիճներում, կասկած չուներ, որ նա օպերային նույնական կհաղորդի ճշգրիտ ու հարուստ իմպուլսներ:

Անշափ տպավորիչ էր, թե նա ինչպես միաձուլեց բեմն ու նվագախումբը: Մանավանդ՝ նիկի տեսարանում և վերջին երկու պատկերներում նա հասավ արտասովոր լարվածության և հնչողական շեշտավորման...

«Լայպցիգեր Ֆոլկ Ցայտանգ», 1966 թ.

...Զարմանալիորեն տպավորիչ է այն, թե նվագավարը որպիսի վստահությամբ է տիրապետում Վագների օպերային պարտիտուրը՝ իր երաժշտական ու դրամատիկ ամրողությամբ և ինչպես է այն շնչավորում՝ արտահայտչական իր բոլոր մանրամասներով: Իհարկե, նա շեշտեց «Լոհենգրինի» սիմֆոնիկ հատվածները՝ դրանք կարևորելով արդեն իսկ նախերգանքի տիրույթում: Երաժշտական յուրաքանչյուր արտահայտություն գույն ու իմաստ ստացավ: Ոչ մի ցուցադրականություն՝ քնարական, բանաստեղծական մեկնության մեջ: Դուրյանը այնքան վարպետորեն է յուրացըրել վագներյան ոճի ինքնատիպությունը, որ կարծես իրենը լինի...

«Սիեգիխ Թագերլատ», 1966 թ.

...Դուրյանը հանդիսատեսների սրտերը գերեց միանգամից:

Նվագախմբի արտակարգ ուսուցը է նա: Իր փորձերն արգեն իսկ վկայեցին, թե մեր ֆիլհարմոնիկն ինչպես ներկայացավ բոլորովին նորովի: Այն պարզապես հնչե՞ց նորովի: Թվականի ամենալավ է ըմբռնել ու ընդունել անվերապահորեն:

Տեմպերի համար շկան քարացած նորմեր. նյարդային մի տեմպ կարող է նույնքան ձանձրալի ու խանգարող լինել, ինչպես՝ դանդաղը:

Շատ կարևոր է, որ նվազավարի տված տեմպն ու ռիթմը լինեն երաժշտականորեն հագեցած և հնչեղ:

Նվազախմբի համար բացառիկ կարևոր մի օր էր՝ լավագույն դրսելովիլու:

Հնդունելությունն արտակարգ էր...

«Սեփական Թագերլատ», 1966 թ.

...Եթե ապագայում աշխարհի մասշտաբով պիտի խոսվի նվազավարների մասին, ապա Օհան Դուրյանի անունը հնարավոր չէ անտեսել:

Միաված շենք լինի՝ ասելով, որ նրա ղեկավարած ծրագրում թրամսի 4-րդ սիմֆոնիայի մեկնաբանումը դարձավ նվիրաբերում 19-րդ դարի գերմանացի մեծ վարպետին և Շոստակովչի 5-րդ սիմֆոնիայի մատուցումը՝ հեղինակի հանդեպ հարգանքի իսկական տուրք:

Օհան Դուրյանը ձեւավորման վարպետ է:

Թեև մեզ համար անսովոր սկսվեց թրամսի 4-րդ սիմֆոնիան, սակայն շուտով պարզվեց, որ յուրաքանչյուր դրվագ անխղելիորեն կապված էր ամբողջական կառուցյին ոչ թե խճանկարային կտրտվածությամբ, այլ շերտ առ շերտ, լարված ու լեցուն հյուսվածքով: Եղան կոթողային զարգացումներ, որոնց ներքին բովանդակ ուժը շիռլացավ բոլորովին և որոնցով ընդգծվեց կատարվող գործերի հակադրությունն ու հարստությունը: Ունկնդիրը խորապես ազդված էր, ցնցված...

Օհան Դուրյանը ղեկավարեց անգիր և առանց փայտիկի, երգչախմբային նվազավարի նման: Քնուուշ ու կատարյալ էին նրա ստացած նրբերանգները: Նա ղեկավարեց մեծ ներշնչանքով... Նրա ստեղծագործական արտասովոր կամքը նվազախմբին պարտադրեց հետևել իրեն անվարան և անվերապահորեն: Ցանկանք նման երջանիկ այլ հանդիպումներ...

«Զայտե Գրես», 1966 թ.

...Լինելով սիմֆոնիկ նվազախմբի նվազավար, Օհան Դուրյանը հմտորեն օպերա մացրեց կատարման նվազախմբմարյային-սիմֆոնիկ ոճ, ինչը մինչ այդ անծանոթ էր մեզանուությամբ, սահուն, ճշգրիտ շեշտադրումներով, առանձին մասերում՝ հնչեղ, փոթորկուն ընդգծվածությամբ:

Դուրյանի վարպետ ղեկավարմամբ հիասքանչ Վերդիի «Դոն Կառլոսը» ներկայացավ դրամատիկ արտահայտչականությամբ ու մեղեղային ողջ փայլով: Կատարողական ձեռքբրման գագաթ էր երրորդ վերջնարարային տեսարանը, որտեղ նվազավարն այնպես զարգացրեց երաժշտական վերապրումի լարվածությունը, որ մեր շունչը հուզմունքից կտրվեց...

«Էայպցիֆր Ֆոլկ Յայտունգ»—«Ռունիոն», 1967 թ.

...Առհասարակ, յուրաքանչյուր կոմպոզիտորի մոտ գգացվում է նախորդների շունչը՝ Բեթհովենի մեջ մի քիչ Մոցարտիա, թրամսի մեջ՝ մի քիչ Շուման... Բրուկներն, այս առումով, բացառություն է, ինչպես և Գերյուսին:

Բրուկների առավելությունն է սա, ինչի շնորհիվ և առկա է «Բրուկներյան ոճ» հասկացությունը: Այն շփոթել չի լինի, եթե ղեկավարման վահանակի մոտ երաժշտական-հնչողական ինքնատիպ երեսակայությամբ մի այնպիսի նվազավար է, ինչպիսին Օհան Դուրյանն է:

Այս կոմպոզիտորի գործերում Դուրյանն ի հայտ է բերում հեղինակային մտքի ու զգացողության առավելագույն բացահայտում, ինչը չի հաջողվում ուրիշներին:

Շատ բաներ կան, որ հնչում են նորովի և Դուրյանը գիտեաղտնիքը: Նա չի որոնում, նա տիրապետությանը հուզմունք պատճառելու շափ:

Վերջերս Բեռլինի «Կոմիջե» օպերայի հետ Դուրյանը ներկայացրեց Բրուկների 8-րդ սիմֆոնիան, որտեղ յուրաքանչյուր տակտում զգացվում էր հեղինակի ոգեշնչվածությունը, բայց ոչ պաթետիկ մեկնությամբ:

Հայ արտիստը մեծակտավ գործերի շունչ ունի: Սակայն այդ իր շնորհը մեզ չի ճնշում, որովհետեւ նվազավարի երաժշտական մեծածավալության զգացողությունը չի անտեսում որևէ ստեղծագործության նրբերանգային մանրամասներ:

Նա հարազատ է մնում հեղինակային գործիքավորման մտահղացումին, որտեղ լարային և ծանր պղնձափողային գործիքներից զատ, կարևորված են նաև փայտափողային գործիքները:

Հիմա արդեն հասկանում ենք, որ երեք ֆորտեի կողքին ֆորտիսիմո կա և մեկ ֆորտե։ Եվ սա Դուրյանի նվագավարակոցմամբ հնչում է միանգամայն ախորժալուր և ոչ թե հատու, կոպիտ։

Իր ներքին կրակու կրքով հանդերձ, ինչը ակնհայտորեն տեսանելի է, Դուրյանն ունի զուսպ պահվածք։ Կարելի է ասել, որ այս նվագավարը ինքնամոռացության պահերին էլ չի կորցնում զգոնությունը։

«Կոմիշե» օպերային նվագախումբը, սիրով ենթարկվելով Դուրյանին, այս երեկո գերազանցեց ինքն իրեն։ Իսկ բեռլինցիները փոթորկալից ծափերով ընդունեցին նրանց, հատկապես՝ նվագավար հյուրին։

«Թեև Մորգեն», 1967 թ.

Բրուկներյան հմայիչ նվագավար, հայազգի Օհան Դուրյանն՝ այս պահին մեր հանրապետությունում հաջողություն վայելող, ամենացանկալի նվագավարներից է։ Լինելով ծանր հիվանդ, նա չհրաժարվեց ղեկավարել օպերայի սիմֆոնիկ համերգը։

Արդեն երկրորդ անգամ Բեռլինում նա Բրուկներ է ներկայացնում և այնպես գերող, ինչպես Կոնվիչնից հետո վաղուց շենք լսել։

Ներկայանալի, շափից դուրս զուսպ, նրբազգաց և ներքին մեծ լիցքեր ունեցող այդ նվագավարի՝ հիացական ծայնարկումներով ուղեկցվող և «բռավոների» ու բուռն ծափահարությունների արժանացած ղեկավարմամբ, նվագախումբը առավելագույնս դրսնորեց իրեն։

...Կցանկանալինք, որ բրուկներյան այս անկրկնելի մատուցմանը ներկա լինեին մեր նվագավարները...

«Մյուզիկ անդ Գեսսելշադր», 1967 թ.

...Նախանձելիորեն միաձուց էին բեմն ու երաժշտությունը... Օհան Դուրյանը փայլուն վարպետությամբ ղեկավարեց

«Գեանդհառուզ» նվագախումբը, երգչախումբն ու մենակատարներին։

Քնարական, քնքուշ տրամադրությունների, էկզոտիկ հընշղականության, դրամատիկ և հիմնային զարգացումների այսքան ներդաշնակ ամբողջացում, ինչպես Բորտինի «Իշխան հգորի» այս մեկնաբանությունն էր, թերևս դժվար է հիշել...

«Լայպցիգի Յայտունք», 1967 թ.

...Դարձյալ համերգի կիզակետում՝ իրեւ մի գագաթ, Դուրյանի հմայիչ կերպարն էր։ Նրա ղեկավարմամբ, կայպցիկի ուղղուսկմֆոնիկի՝ Բրուկների 4-րդ սիմֆոնիայի կատարումը, ուղղակիորեն մրցունակ էր Ֆրանց Կոնվիչնի մեկնաբանումներին։

Դուրյանը տիրականորեն իշխող և առինքնող է։ Նա ունի բոլոր հմտությունները այդ երկարաշունչ գործը օրգանապես հյուսելու, շարժունակ և հնչողական բոլոր նվրությունները մատուցելու համար։

«Յալիս Յայտունք», 1968 թ.

...Վերջապես «Շտատսկապելլեն» հանդիպեց Օհան Դուրյանին։ Նվագախմբի հետ նրա առաջնահմերգը կայացավ ծափողզույնների բուռն տարափի ներքո։ Դա եղավ միանգամից։

Դուրյանը երաժշտությունը ձեավորում է իր խոսուն ձեռքերով, կառուցում հնչողությունը խնենթացնող նրբությամբ, համաշափ շնչառության հանգույն, կենդանություն տալով բոլոր մանրամասներին։

Նա պարզապես շնչում է նվագախմբի հետ, հատկապես լարային գործիքների, որոնք, բառացիորեն, երգում էին։ Եվ այդ ամենը՝ մանրիկ, զուսպ շեշտադրումներով, որոնք կարեվորվում էին ձախ ձեռքի՝ ուժգին ձեւով ստեղծող շարժումներով։

Դուրյանը գերում է ոչ որպես օճահմա։ Նա պարզապես կախարդական ձգողականության ու արտասովոր հիշողության տեր նվագավար է։ Իրեն յուրահատուկ ուժով ու կարո-

ղությամբ նա անշափելի լիցքեր է հաղորդում՝ նվագախըմբին հասցնելով կատարյալ արդյունքի:

Նրա մոգական ձեռքերի ներքո Շոստակովիչի 6-րդ սիմֆոնիան հնչեց արտակարգ մաքուր ու ճշգրիտ:

Դժվար թե առաջիկայում մենք առիթ կունենանք վկա լինել նման մի կատարման:

«Ունիոն», 1968 թ.

Թեթևասահ, որպես անտառային մի ոգի, մոտենում, խոնարհումներ է անում, կանգնում նվագախմբի առջև՝ առանց պարտիտուրի, առանց նվագավարական փայտիկի...

Եվ երբ սկսում է ղեկավարել, թե՛ հանդիսատես, թե՛ կատարող երաժիշտ տեսնում ու զգում են, որ նրա ներսում կախարդն է, մոգը, որ նա տարված ու արրեցած է երաժշտությամբ: Մոգական ճառագումն իրենից բխում, անցնում է երաժշտներին, ապա՝ փոխանցվում դահլիճին:

Այս զգացումը մենք արդեն ապրել ենք Դրեզենի Փիլհարմոնիկի հետ նրա համերգներում, այժմ նույն ենք ապրում «Շտատսկապելլեի» ելույթում:

Շոստակովիչի 6-րդ սիմֆոնիան լսել ենք բազում անգամներ, բայց սա եղակի մի կատարում է, ստեղծագործական սիրանք, իմաստալից մեկնաբանություն:

Նույնը կարելի է ասել Բերլինով «Ֆանտաստիկ սիմֆոնիայի» բացարիկ մեղեդային մատուցման վերաբերյալ:

Բուռն ու տեսական ծափողզույնները հանդիսատեսի ու նվագախմբի շերմ երախտիքի տուրքն էին նվագավարին:

«Սեխիլիս նոյենտ նախորիքնեն», 1968 թ.

...«Անուշի» այս ներկայացման մեջ օպերային երաժշտությունը, պատշաճին համաձայն, դրամատուրգիական կարելի ծափանակն է, իսկ նվագավար Օհան Դուրյանին, իրավամբ, պետք է անվանել գլխավոր հերոս...

Դուրյանի մեկնաբանությամբ «օպերա-երգ»՝ «Անուշը» դադարեց լինել գլխավորապես երգ և ընկալվեց նախ որպես սեփական հաստակ երաժշտական դրամատուրգիայով օպերա, որը նվագավարը տիրաբար ուրվագծեց ու ընդգծեց նախ երգանքից մինչև եղրափակիչ խմբերգ: Բ. Սակիլարիի սրբագրած պարտիտորում միանգամից բացահայտվեցին բազ-

մաշերտություն, մեղեդային բազմահնչւնություն, ձայնակցումներ, առանձին տեմբրերի պատկերավոր արտահայտչականություն մասնավորապես 3-րդ տեսարանում՝ Անուշի «Ասում են ուսին...» երգի ձայնակցությունում:

Սոսկա, «Խովհանոս մուզիկա», 1970 թ.

...Փարիզի ելիսեյան դաշտերի թատրոնում երեկ երեկոյան կայացավ ֆրանսիական ռադիոյի և հեռուստատեսության ազգային նվագախմբի համերգը՝ խորհրդային նվագավար, ՀՍՍՀ ժողովրդական արտիստ Օհան Դուրյանի ղեկավարությամբ:

...Բնավ սովորական շեր նվագավարի ելույթը: Տասներեքամյա ընդմիջումից հետո Օհան Դուրյանը հանդես էր գալիս Ֆրանսիայում, այն երկրում, ուր նա անց էր կացրել իր կյանքի շատ տարիներ՝ մինչև Հայրենիք վերադառնալը:

— Մինչև 1957 թվականը ես բազմիցս ելույթներ եմ ունեցել Ֆրանսիայում: Այստեղ եմ ստացել կրթությունս, սկսել ստեղծագործական գործունեությունս: Ֆրանսիայում են ապրում բարեկամներից շատերը: Ժամանակին իմ երաժշտական խորհրդատուն է եղել Փրանսիական ռադիոհեռուստատեսության ազգային նվագախմբի ներկային գլխավոր նվագավար Ժան Մարտինոնը: Այդքան մեծ ընդմիջումից հետո կրկին ելույթ ունենալով այստեղ, ես միանգամայն նոր զգացումներ եմ ապրում: Ու նաև՝ հպարտանում, որ ներկայացնում եմ Հայրենիքս...

...Կատարվեցին Վագների, Սևն Սանսի, Լիստի, Ռեգերի ստեղծագործությունները... Այն, որ փարիզյան այդ համերգի ծրագրում Օհան Դուրյանն ընդգրկել էր 19-րդ դարի գերմանացի կոմպոզիտոր Մաքս Ռեգերի վարիացիաներն ու ֆուգն, մեծագույն բավականություն պատճառեց երաժշտասերներին և եղաժշտական շրջանակներում գնահատվեց շատ բարձր: Այդ բարդ ստեղծագործությունը հազվագեց է կատարվում Ֆրանսիայում:

Համերգն ընդունվեց բացարիկ շերմությամբ և հանգիստականներից շատերն ուղղակի բեմ ելան՝ ողջունելու Օհան Դուրյանին:

ՏԱՅԱ-Հաղորդագրայինից, 15. 1. 1971 թ.

...Փարիզի ազգային նվագախմբին գլուխն անցած՝ Տուրեանը գտանք՝ իր առաջարեղով տառապած և կարծես անկե հոգնատանց արտաքինով, բայց միշտ կորովի և այս անգամ շատ ավելի զուսպ իր ղեկավարության մեջ, ուր իր ներկայությունը գերակշիռ էր նվագածուներուն վրա՝ քան իր շարժումները...

...Տուրեանի աշխատանքը և մեկնարանության իր բժանդիր ու շահեկան պրատումները այս գործին մեջ գնահատիչինք առավելապես (Մեզեր՝ վարիացիաներ և ֆուգա՛ Ռ. Մ.): Բազմաթիվ մասերե բաղկացած այս լայնածավալ հորինումը իր արժանի կատարումը գտած էր դիմագրավելու այն ապերախտ աշխատանքը, որ կպահանջեր գործին ամբողջությունը, ուր վերջավորության հոյակապ ֆիւկը եկավ պսակել ղեկավարին զանքը:

Երեանի Ֆիւկարմոնիկ սրահին և «Եանզ էլիկեի» թատրոնի բեմին միշտ միության գիծ մը հաստատված էր հայ ղեկավարի մը ներկայությամբ:

«Յանաչ», 1971 թ.

- (1975 թվականին Օհան Դուրյանը (արդեն Օհան Գ. Նարկ) ապրում էր Ավստրիայի Բադեն քաղաքում: Առաջին համերգը՝ ղեկավարեց Վիեննայում՝ Վիեննայի ռադիոհեռուստատեսության նվագախմբի հետ՝ Ռ. Մ.):

...Նարկը նվագավարական փայտիկի կարիք չունի, որովհետեւ սոսկ քարձը տեխնիկայով շափ ու տակտ տավոզ նվագավար չէ: Մի բայց, որ, ցավոք, մեր օրերում Արևելյան գնայուվ պակասուն է:

- Իր ղեկավարածը՝ նա պիտեր անգիր, այսքան լավ, որ պարտիտուրը՝ ունենալով և՛ հիշողության մեջ, և՛ սրտում, ձեռքերտվ ասես օդում որսում, ձևավորում էր երաժշտությունը՝ նվագավարում էր աշերը՝ խուի, կարծես երազելիս լիներ...

- Էնտա՛ ենք որ նոյն ոչ միայն արևելյան Տուսկանին է, այլ՝ իր այս նոր գործունեությամբ դարձնալու է արևմտյան Տուսկանին...

«Ա. Յ.», Վիեննա, 1976 թ.

...Հայ նվագավարի՝ ղեկավարությամբ Ավստրիայի ու դիմունուստատեսության նվագախումբը հանգես եկավ լավագույն որակով:

Կամենացինք վերստին հանդիպել այս հրաշալի նվագավարի հետ...

«Վիենն Յայունգ», 1976 թ.

...Հիսունչորսամյա Թ. Դ. Նարկն այլևս երիտասարդ սերընդին չի պատկանում, բայց այնքան մեծ է ու կենսունակ նրա կատարողական ավյունը: Մենք նրան պիտի երկար կյանք ցանկանանք ու սիրով պիտի ականատես լինենք իր բարձր արվեստի հաջողություններին:

Նա իր ձեռքերով երաժշտություն է շաղախում ու ձեավուրում մեծագույն վայելք պարզելով հանդիսատեսին:

1962—69 թթ. ղեկավարելով Լայպցիգի «Գեանդհաուզ» նվագախումբը, նա արժանացել է երաժշտական բննագատության ամենաբարձր, առավելագույն գնահատությանը:

...Կամ ժամանակ առաջ նվագավարում էր Վիեննայում, որտեղ թե՛ երաժշտասեր հասարակայնությունը և թե՛ նվագախմբի երաժիշտները առանձնահատուկ խանդավառությամբ ու սիրով էին խոսում իր մասին:

Մարի, «Ա. Յ.», 1976 թ.

## ՃԱՌԱԳՈՂ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Օհան Դուրյան-Նարկը ղեկավարում է խաղաշրջանի Յ-րդ համերգը «Ֆիւկարմոնիկա Հունգարիկայի» հետ:

...Պետք է խոստովանել, որ այս համերգի լուսաշղողը՝ ինը նվագավարն էր:

Ավյունով, ուժով, շարժունակությամբ լեցուն, արտակարդ հմայիլ ու առինքնողի Մի մարդ, որ Ֆիւկական ուժափության հասնող վերապրումներով երշանիկ՝ կարողանում է զգացմունքները լիարժեքորեն ու ապառիչ փոխանցել նվագախմբին:

Նա ունակ է երաժշտական անսահման արտահայտականության: Նա նկարում է երաժշտությունը, երաժշտու-

րին գերում-տանում իր ետևից, Թվում է, թե նվագավարելիս ինքն իրեն է տոնականորեն կերպավորում:

Վստահաբար կարելի է ասել, որ Մարլը նման հմայիլ, առինքնող նվագավարի հետ հաճախ չի հանդիպել:

Սա մեծ նվագավարի երեկո էր...

Կեմպազիտոր Զոլթան Կողայիի «Մարոշեկյան պարեր» մատուցվեց հանձարեղորեն: Մենք զգացինք նվագավարի և նվագախմբի փոխադարձ հոգեմոտություն: Համերգը թաթախուն էր գույների, որիթմերի շքեղ արտահայտչականությամբ:

Երեկոյի վերջին հնչեց Դվորժակի 8-րդ սիմֆոնիան: Եղակի մեկնաբանություն՝ խոր ու լարված, արժանի մեծ կոմպոզիտորի ուրախ ու թախծոտ հյուսվածքով կերտած երաժշտությանը: Անվերջ ծափողուններով ու շմարող «բռավոներով» ուղեկցվող հանդիսատեսի հիացական շնորհակալանքին նվագավարը պատասխանեց իր իրական մեծությանը վայել խորին խոնարհումով...

«Մարլե Ցայտանց», 1976 թ.

...Մրանից հետո Թադ-Ալբլինգ եկող նվագախմբերի գործը հեշտ չի լինելու: Ունկնդիրները պիտի ասեն. «Լավ է, լավ են նվագում, բայց Թեթևովնի 9-րդ սիմֆոնիան Դուրյանի զեկավարությամբ ուրիշ էր...»

Զարմանալի մարդ է այս 0հան Դուրյան-Նարկը: Նա կարողացավ ձեռքի մի շարժումով այստեղ արդեն տեղի ունեցող տոնական համերգներից այս մեկը դարձնել ամենահաջողվածը:

Զարմանալի մարդ է՝ զարմանալի կենսագրությամբ: Մի արտիստ է, ում քննադատները համեմատել են Տոսկանինիի, Բեորնստայնի, Փլայդերի հետ: Մի արտիստ, որի ելույթներն Արևմուտքում արգելել էին սովորականը:

Հայդնի սիմֆոնիայի դուրյանական մեկնությունը վեհաշուր էր, ինչպես Հերթերտ ֆոն Կարայանինը: Մքանչելի զուսպ ու կոլորիտային:

...Երաժիշտներն ու երգիչներն ուղղակի հիացած էին իրենց նվագավարով:

Համերգն ընդունվեց փոթորկալից ծափերով...

«Մանդալ-Բանե», 1977 թ.

Հսելով Վիեննայի օպերային նվագախմբին, Դուրյանը հայտարարեց. «Այս նվագախմբի հետ ես կարող եմ երաժշտություն ապրել»:

Եվ իրոք ապրեց:

Նա ղեկավարեց Մոցարտի «Փախուստը» Վիեննայի օպերայում... քնքուշ, ներքին լեցուն կրով։ Նույնիսկ դադարները լեցուն ու խոսւն էին երաժշտությամբ:

Դուրյանը խոհեմ ընկերակցող է, որը երթեք շի խլացնում երգիչներին նվագախմբի հնչողականությամբ, բայց և չի ենթարկվում նրանց: Նա չի պարտադրում, այլ համոզում է...

...Հանդիսատեսները նվագավարին բազմիցս կանչեցին բեմ... Դուրյանի ղեկավարությամբ Մոցարտը հնչեց հոսուն աղբյուրի պես...

«Ա. Յ.», 1977 թ.

...Մինչ այս հումիսյան փառատոնը, «Ֆիլհարմոնիկա Հունգարիկան» տարրեկ նվագավարների ղեկավարությամբ բազմիցս ելույթներ էր ունեցել ինտերլաքենում (Եվեցարիա), սակայն այս անգամ նրա համերգը առանձնահատուկ կարեվորվեց՝ շնորհիվ նվագավարական բարձրաստիճան մեկնաբանման:

Այս անգամ «Ֆիլհարմոնիկա Հունգարիկան» գերազանցեց իր նախկին բոլոր ելույթները:

...Նվագախմբի հնչողական գեղեցկությունը, լարայինների, ինչպես և փողայինների ճգբրությունը, ամեն-ամենը, ինչ լսեցինք, թույլ են տալիս նրան համեմատելու լավագույն նվագախմբերի հետ: Ակնհայտ է նվագավարի դերը, որը մոգի պես ձգում, առինքնում է իր երաժիշտներին՝ նրանցից քաղելով արտահայտչականորեն գունեղ, հագեցած մի նվագ:

Նրանուրը, շափակոր շերմությամբ, ինչպես Հայդնի երաժշտությունն է թելաղրում, նվագավարի հոգում հորդում ու ալիքվում է մեղեղին: Նա երաժշտությունը զարգացնում, առաջ է մղում զարկերակի տրոփյունի պես պարզ ու համաշափի:

Նրա մեկնաբանությամբ մեզ քաջաժանոթ երաժշտությունը հնչեց նորովի...

«Ին Բանե», 1977 թ.

...Օհան Դուրյանը մի մոզ է՝ նվագավարական հարթակում... Նա իր ձեռքի մեջ այնպես էր հավաքել նվագախումբը, ինչպես ոլ որ չէր կարողացել անել դա մինչ այդ: Ստեղծվել էր մի անսովոր, գեղեցիկ տպավորություն, կարծես նվագավարն այդ պահին ինքն էր ստեղծադրում, ինքն էր հորինում երաժշտություն...

Աներևակայելի, մոգածան ուժով նա գործը հասցրեց արտասովոր մի մակարդակի: Առավել, քան գերազանց է:

Ունկնդիրը շունեցավ դատարկ հանգստության ոլ մի պահ, անուշադրության ոլ մի վայրկյան: Նվագավարը կարողացավ ափեափ լցնել նրա հոգին՝ տալով բոլորովին թարմ լիցքեր ու զգացմունքներ...

«Ե. Գ.», 1978 թ.

## ԷՌՏԱԿԱԼԻ ՄՈՏ ՄԱՐԴՆ Է ԵՐԵՎԱՆԻՑ...

...Նախորդ տարիների սիմֆոնիկ համերգներում հաճախ ենք տեսել անվանի, հետաքրքիր նվագավարների: Բայց, առաջին անգամը լինելով՝ վկա ենք դառնում, թե ինչպես համերգն ամբողջությամբ և բացարձակապես կարող է կախված լինել նվագավարի անհատականությունից, և այդ իրողությունը մեզ պարզողը եղավ Օհան Դուրյան-Նարկ անունով մարդը: Հնչունային մի ռեժիսոր է՝ դրամատիկական, ստեղծագործական արտակարգ ունակությամբ:

Նա իր երաժշտական կորզում, ի ցույց է հանում ամենաթաքույց հնարավորությունները: Նրա փայլուն զեկավարությամբ Հյուսիսարևմտյան նվագախումբը թվաց բոլորովին նոր և կատարելագործված:

Իր արտահայտիչ ձեռքերի շարժումներով նա նվագախումբից քաղում է երաժշտական գեղեցիկ, խոսուն, ընդգծված կատարում, հստակ նրբին անցումներ՝ երրեմնակի ուժգին պոռթկումներով, այդ ամենի մեջ բնավ շկորշնելով որևէ դրվագ: Ամեն ինչ մեկնարանվում է տեսանելիորեն շոշափելի:

Այդ հսկա գործը նվագավարն արեց նվիրումով, ինքնամուսաց՝ տռաջացնելով փոթորկալից մի այնպիսի խանդավա-

ռություն, որպիսին հազարեալ ենք տեսնում մեր համերգներում...

Դվորժակի սիմֆոնիան բացառիկ, աներևակայելի հաճույք պատճառեց մեզ...

«Թագերլատ», 1978 թ.

...Առաջին իսկ պահից զգացինք, որ նվագավարական հարթակում կանգնած է ամենաաղաջնակարգ ու ամենաառակյալ մի երաժշտ, որը թե՛ կատարողներին և թե՛ ունկնդրին հմայեց անմիջապես:

Երաժշտությամբ տարված նրա էությունից, նրա պահաժեքից բխում է ներքաշող ուժ:

Նրա ձախ ձեռքը ձեւավորում է հնչողականությունը և երաժշտական ֆրազավորումը:

Նա, բառի բուն իմաստով, շերմացնում է իր երաժշտերին:

«Վեստելիշեն Ֆոլկուրլատ», 1978 թ.

...Իր զուտպ, բայց վստահ շարժումները, նրբերանգների քննուց զգացումը, խորաթափանցությունը հնարավորություն են ընձեռում նրան՝ արտահայտելու այրող քնարականություն և աներևակայելի էներգիա:

Մոնտե Կարլոյի ազգային նվագախումբը՝ նման զեկավարի առկայությամբ, իսկապես փայլեց, արժանանալով երկարատև ծափողույնների...

«Մոնակ Կարլո», 1978 թ.

...Դուրյան-Նարկը բեմահարթակում կարծես Ստոկովսկին է իր գերող վրձնով...

Լև Անջելս, 1978 թ.

Օ. Գ. Նարկը զեկավարեց Դոնիձետիի «Դոն Պասկուալեն» վկենայի ազգային օպերայում...

...Պահանջվում էր շատ մեծ կարողություն նորովիք մատուցելու համար մի գործ, որն արդեն կատարման միօրինակություն ուներ:

Դոնիձետիի մեղեդային կոնտիլիաները խորապես զգալով

և նրանցում ներդնելով դրամատիկ կրակ, նվազավարը բեմն ու նվագախումբը կամրջեց մի սերտ ու ներդաշնակ միությամբ:

Այդ ներկայացումը առանձնացավ մյուսներից...

«Վիեներ Յայտունք», 1978 թ.

...իր պոռթկուն, ներածող ու ճառագող ստեղծագործական կրքով նա, իրոք, ծնյալ նվագավար է: Նա գիտե երաժշտություն կառուցել, ստեղծել գագաթներ, կամարակապել կոթողային մտածողությամբ: Վիեննայի սիմֆոնիկն իր ղեկավարությամբ կարծես առաջին անգամ հնչեց իրրե ոռմանտիկ ավանդներով գործող նվագախումբ և ո՞չ թե մի ռադիոօրկեստր, որը երրեմն էլ նվագում է ոռմանտիկ գործեր...

«Դիե Գրեսս», 26. 1. 1979 թ.

...Արևելյան օձահմա-կախարդողների նման մի կախարդ է Օհան Դ. Նարկը, որը բոլորի ուշադրությունը քաշեց-բնենեց իր վրա: Նա խտացված էներգիայի մի գունդ է, որն օժտված է ոչ միայն նվագավարական վարպետությամբ ու տեխնիկայով, այլև ունի բոլոր հնարքները՝ անգամ մարմնով նշաններ տալու, երաժիշտներից ամենավերջին նրբությունները հմայլությամբ կորզելու համար...

Զայկովսկու 4-րդ սիմֆոնիայով Դուրյան-Նարկը երաժշտներին հասցրեց իրենց կարողության բարձրագույն սահմաններին...

«Ռայնիշե Փոստ», 1979 թ.

...Հաճախ չէ, որ մենք հանդիպում ենք նվագավարների, ովքեր բոլորանվեր բեմինն են ու երաժշտությանը, ինչպես Հայաստանից եկած այս փոքրամարմին, ճերմակահեր Օհան Դ. Նարկն է:

Նա ղեկավարում է առանց փայտիկի ու թվում էր, թե երաժիշտները շպիտի հասկանային իր շարժումները: Բայց եղավ ճիշտ հակառակը: Մենք տեսանք նվագավարի ու երաժիշտների բացառիկ գեղեցիկ մի փոխհասկացություն, որի շնորհիվ էլ ծրագիրը մատուցվեց ամենայն ճաշակով:

138

Մենդելսոնի «Շոտլանդական սիմֆոնիայի» արտակարգ գունեղ ու արտահայտիլ մեկնաբանումը եղավ մեզ նվեր...  
«Վիեներ Յայտունք», 1979 թ.

...Թելգիայի ռադիոհեռուստատեսության ֆիլհարմոնիկ նվագախումբը և Օհան Դ. Նարկը հիանալի մի համերգ տվեցին Բյուսելի Արվեստի պալատում:

Սագումով հայ այս նվագավարը, որ ապրում է Ավստրիայում և արդեն ղեկավարել է եվրոպական նվագախմբերի մեծ մասին, իր ղեկավարելիք ծրագրի հանդեպ ունի խելացի, հըստակ, կառուցողական ու վերլուծական մոտեցում:

Չէին պակասում ոչ ճշգրտություն, ոչ կիրք: Նրա նման թիերես ոչ ոք չհասնի գույների ու երանգների՝ մեզ այդպես շացնող պայծառության, այդքան կենդանի հնչողականության:

Այս ամենը մենք զգացինք Մոցարտի սիմֆոնիայում, որ մատուցվեց նրբաճաշակ, գեղասահուն ֆրազավորմամբ և հնչողական մեծ վարպետությամբ: Նույնքան գեղեցիկ էր նաև Գյուտատավ Մալերի «Երկրի երգը»՝ գրված շինական վեց պոեմների վրա: Կատարողներ՝ ավտորիացի տեսոր Վոլֆանգ Շոյման, մեցցոսոպրանո՝ Բեոլինի օպերային թատրոնի մենակատար Ութե Թրեքելբուրգիարդ:

Այս մեծ ու բարդ գործը կատարվեց Օհան Դուրյանի հրաշալի ղեկավարմամբ:

«Լա Միերե», 1979 թ.

...Օհան Դ. Նարկի հոգին ալեկոծող դիվային ձիրքը նվագավարությունն է:

Որտեղից եկավ այս արվեստագետը, որ կիրակի օրը Մոնակոյի «Կոնգրեսապալատում» ղեկավարեց: Խորայելից, որտեղ նա ծնվել է, Ռուսաստանից, որտեղով անցել է, թե Վիեննայից, որտեղ ղեկավարում է ուղղոյի սիմֆոնիկ նվագախումբը:

Երեխ, այս երեքից և ոչ մեկից.

Ասեմ Զեզ, նա գուրա սահեց կախարդական տուփից:

Նրա դիմագծերն ու կերպը ոչ իրական, հեթափային բան ունեն: Կարճահասակ է, արագ ու նյարդային շարժումներով,

137

Հեկացած հայացքով ու խոիվ, ցիրուցան մազերով; որ սիմֆոնիայի երաժշտական զարգացմանը զուգընթաց փողփողում են գլխի շուրջը:

Եթե 05ան Դ. Նարկի մեջ դիվային ուժ կա, ապա դա վերաբերում է նրա նվագավարմանը: Նվագախումբը ղեկավարել անսածը սպառիլ չէ նրան բնութագրելու համար: Նա ոչ թե ղեկավարում է նվագախումբը, այլ ներգործում ու ներշնչում է երաժշտներին իր մոգությամբ:

Երբեմն բոլորովին անշարժ է, նույնիսկ շափ չի տալիս... Օրինակ՝ Շոստակովիչի 5-րդ սիմֆոնիայի վերջավորությանը, որտեղ երաժշտությունն ուժգնանում է բոլոր ուղղություններով՝ քառասուն լարայիններ, զուգահեռ շարժումներով, զնում են ու գալիս, փողային գործիքների վաշտը հնչում է ուժգին, պայթում են հարգածայինները և... ահա այդ պահին ինքը ոչ մի շարժում չի անում՝ բավարարվելով երաժշտությամբ ապրելու և երաժշտներին իր խոհուն հայացքով գերելու կարճատե անշարժությամբ:

Նա իր հեղինակությունը նվագախմբին շի պարտադրում ինչ-որ մի փայտիկով, արդեն վաղուց թողել է այդ օժանդակ գործիքը, այլ զերում, տանում է երաժշտներին իր անձից, իր հոգուց բխող հորձանքով:

Այս նվագավարը սովորականներից չէ:

Իր այս ելույթը առաջնակարգ է, ինչպես և իր ղեկավարած նվագախումբը: Երեկի հասկացաք, որ Շոստակովիչի 5-րդ սիմֆոնիան կիրակնօրյա համերգի հանդիսատեսների համար կմնա իրեւ անմոռաց...

Անդը Պետք, նիցայի կոնսերվատորիայի անկառ, 23. 10. 79 թ.

Զարմանք, շրջուն ու սոսափ պարունակող լուսաթյուն, անվերջ աճող լարվածություն. այս արտահայտությունները պետք է վերագրել Մանհայմի Պֆալց նահանգի ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարմանը: Արարվեց երաժշտություն՝ գոմեզ, կրակոտ, հստակ ու հնչեղ: Կար և՛ խորք, և՛ շերմություն:

Ինքնարուխ, անկաշկանդ երային անընդհատ նոր թափ ու նար շունչ էր առնում, և այս ամենն ընթանում էր հրավիրյալ նվագավարի ձեռքերի ներքու հայտնաբերությունը:

Նա ղեկավարել է Արևելյան Եվրոպայի մեծագույն նվագախմբերը, իսկ յոթ տարի աշխատել «Գեանդհառուց» նվագախմբի հետ:

Հանձին նրա, մենք հանդիպեցինք նվագախումբ կրթող, արտակարգ նոպր լուղություն, մասնագիտական հարուստ իմացություն, զգայական ուժ ու պատշաճ մակարդակ ունեցող երաժշտի: Նա գիտե, որ շարժունակությունն ու լարվացող պետք է ստացվի ոչ թե տեմպերի արագությամբ, ծությունը պետք է ստացվի ոչ թե տեմպերի արագությամբ, այլ դրանց օրգանական դասավորվածության աճով: Թափանցիկության հասնելու համար շպետք է աղքատացնել հնչողականությունը, այլ պետք է խորացնել երանգների ճշգրիտ դասավորումը և շարժունակ հաշորդականությունը:

Նա համեստ, բայց և բռնկուն ճառագումի երաժշտ է...  
«Մանեայմեր Մորգեն», 1979 թ.

Արա համբավը մեզ հասավ ավելի վաղ, քան իրեն կտեսնեինք: Եվ մենք արդեն գիտեինք, որ նա պաղ իմացությամբ կամ արտաքին ցուցադրական մաքրությամբ՝ ղեկավարող նվագավարներից չէ, այլ երաժշտական գործն իր խորքով ու էությամբ քանդակող ու կերտող:

Այս բացառիկ համարումը նա հաստատեց Խնսրուրգի «Կոնգրեսհառուցում»՝ հուզական խորհմաստ մատուցմանը զուգընթաց, ցուցաբերելով կատարողական փայլուն վարպետություն:

05ան Դ. Նարկի սրտեսիրտ անցնող մեկնարանությունն իրեն պատկան հանգրվան ունեցավ հանդիսատեսների մոտ: Ինքնարուխ կատարման պատճենը հայտնաբերությունը:

«Նոյե Ֆրեոլեր Յայտունգ», 1980 թ.

Վիրտուոզ ու վարպետ նվագավար է 05ան Դ. Նարկը... Բեթհովենի 3-րդ սիմֆոնիայի մեկնարանումը ներքին միասնության, կայունության արտահայտություն էր, որն ուներ շարժունակ զարգացում:

Ծնորմիվ նվագավարի, սիմֆոնիայի երկրորդ մասում երաժշտությունը վերամրմնավորվեց: Ինքնարուխ ու լիիրավ արտահայտչականությամբ:

Ամբողջությամբ գեղեցիկ հնչողականության փաստը մօրինակ...

«Մաճճայմեր Մարգե», 1982 թ.

...Զայկովսկու 4-րդ սիմֆոնիայի մատուցումը ուղղակիութեն՝ հիացնող էր:

Եթե կան հուզաթաթաշխագացմունքային նվագավարներ, ապա նրանցից մեկն անպայման Օհան Դ. Նարկն է, Բացառիկ մի ոգեշնչումով նա թափանցում է ստեղծագործության խորքերը և վերհանում ազնիվ զգացմունքայնություն:

Նվագավարական ու մեկնաբանության ինքնատիպ ոճը համոզում, հավատ է ներշնչում ունկնդրին:

«Մարմշատիր Էլեն», 1982 թ.

...Օ. Դ. Նարկը արտակարգ երաժիշտ է...

«Պաեզ Սերա», Համ, 1982 թ.

...Նրբագույն ու վեհ ղեկավարում...

«Լուինն Սարգս», Խոալիս, 1983 թ.

...Նվագավարական իր վարպետ, ճկուն իմացությամբ ու ճշգրիտ շարժումներով Օ. Դ. Նարկը կարողացավ շեշտադրել ու ընդգծել Հենդելի երգեհոնային կոնցերտների նրբագույն հնչողությունները:

«Վայուակ Մարին», Ավելյան, 1982 թ.

...Նիցայի օպերային թատրոնում Օ. Դ. Նարկը հանդես եկավ իրեն բացառիկ նվագավար, իրեն անհատականությունն էկավ բարեկ բացառիկ նվագավար, իրեն անհատականությունն է:

Նա արքայաբար տիրում ու ենթակայեցնում է նվագախմբին: Սովորական շափ տվողների պես չէ, շարժումները ժլատ են, երբեմն նույնիսկ բոլորովին է անշարժանում՝ միայն հայացքով ղեկավարելով նվագախումբը: Նա պարզապես քանդակում է երաժշտությունը: Եվ, որպես ուրույն մտածողության մի վարպետ, ինչպես և վայել է միայն մեծ նվագավարներին, կարողանում է ստեղծել երաժշտական հուզի ու վեհ մթնոլորտ:

«Նիս Մարին», Նիս, 1986 թ.

...Բրուկների՝ մեկ ժամ քսան րոպե տևողությամբ 5-րդ սիմֆոնիան միշտ էլ երկարաշունչ է թվացել ունկնդրին: Սակայն, Օհան Դ. Նարկի ղեկավարությամբ, մենք շունեցանք այդ տպավորությունը, որովհետև վարպետը ամենայն հարգանքով է թափանցում ստեղծագործության ճարտարապետագույնը և ամենայն հարգանքով է թափանցում ստեղծագործության ճարտարապետագույնը:

Մարտի 14-ի նրա ելույթը՝ Մարսելի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ, մեզ համար իսկական հայտնություն եղավ...

Մարսել, 1986 թ.

...Մարսելի Մայր տաճարում ավելի քան երկու հազար հանդիսատես բուռն ծափահարություններով ողջունեցին Ֆորեի «Ռեքվիեմի» և Գունոյի «Մեսսայի» փառահեղ մատուցումը՝ Օ. Դ. Նարկի ղեկավարությամբ: Դա երաժշտական մի իրադարձություն էր, որում միաձույլ էին հուզականն ու վեհը...

23. 05. 1987 թ.

«Ավինյոնի նոր Պապը», — այսպես գրեց «Վոքլուզ Մարինը», երր 1987-ի գեկտեմբերին Ավինյոնի օպերային թատրոնի գլխավոր դիրիժորը նշանակվեց Օհան Դուբյանը (Օ. Դ. Նարկ):

(Առաջներում Պապերի նստավայրը Ավինյոնն էր):

Ավելյան, 1987 թ.

...Վագների «Վալքրիներ» օպերան ներկայացվեց դրամատիկ այնպիսի հյուսվածքով և երաժշտական այնպիսի հնացանդականությամբ, ինչպես կամենար այն ունկնդրել ինքը՝ թագարիայի կատակիդ 2-րդը: Օ. Դ. Նարկն այն ղեկավարեց թագարիայի կարգել բաղել առավելագույնը...

«Երգավեճար», 1988 թ.

...Մենք երբեկցի այդպիս շէինք լսել վագների «Վալքիր-ները» օպերան...

«Մերդիանալ», 1988 թ.

1988—89—90 ըվահաներին, տարեկան եւկու ամիս, շարարական երկու ծավառերավ, Օնան Դույշան Հարավադրիկյան Հանրապետուրյան մշտական հյուտն է:

...Բրուկների ու Բրամսի այդպիսի՞ մատուցո՞ւմ... Նվազագարական հարթակում Օ. Դ. Նարկը պարզապես վերամարմնավորում է Բրամսին, նմանվում նրան։ Այս համեստ մարդու մեջ որքան եռանդ կա ու որքան մեծ էներգետիկա։ Նրա դիրիժորական ոճը անկրկնելի է՝ հավաք, ճշգրիտ ու պարզ։

«Արգուա Թունայր», 1988 թ.

...Օհան Դ. Նարկ վարպետն իր համերգներով միանշանակորեն հաստատվեց Թեյփթառունի երաժշտասերների որբառում։ Նա լիարժեքորեն վայելում է հանդիսատեսի սերը։

Հաճելի է գիտակցել, որ մեծ նվագավարը մեզ հետ կմնա մինչև համերգաշրջանի ավարտը և նորից կգա՝ հաշորդ տարի։

«Փեյփ Թայմս», 1988 թ.

...Անշուշտ, երաժշտական մի խոշոր իրադարձության վկաները պիտի լինենք, եթե մեզ հաջողվեր Օ. Դ. Նարկին համոզել ղեկավարելու Վագների օպերաներից մեկը։ Մենք այս կարծիքին հանգեցինք՝ վայելով «Մայստերպինգերի» նրա մեկնարանությունը։

Առաջին իսկ տակտերի վեհ հնչողականությամբ նա ունկը լիրներիս տարավ դեպի Վագների կախարդական, այն կողմնային աշխարհ, որը անվերշանալիորեն մեղեղային էր ու վերմարդկային...

«Արգուա», 1988 թ.

...Ավինյոնի օպերաշում «Ֆրանսիս Պուլանկի» «Քարմելիդ-ների երկխոսությունները» օպերան ներկայացվեց հիանալի։ Օ. Դ. Նարկի երաժշտական մեկնարանությունը անզուգական էր։ Նա կարողացավ հանդիսատեսին վեհացնել, տանել դեպի

բարձունքներ։ Նվագավարի փայլուն մատուցումն օգնեց հանդիսատեսին գնահատելու Պուլանկի նվագախմբային։ Խոր գործիքավորված պարտիտուրով արված երաժշտությունը, ոգորչանելով մեղեղային բոլոր գծերն ու գնդեցկությունները։ Նվագավարի իր վարպետությամբ Օ. Դ. Նարկը բարդաշնակորեն միավորեց նվագախումբը, բնմն ու հանդիսատեսին՝ հնարավորություն ընձեռելով թե՛ խոսքի և թե՛ երաժշտության լիարժեք հոսքին։

«Վայուակ Մարին», 1989 թ.

...«Թախուր», թերեւ, նման անթերի հնչողություն և նվան հաշողություն չունենար Ավինյոնի օպերայում, եթե չիներ Օ. Դ. Նարկի նվագավարական խանդավառ, ոգեշուալ ինքնարացահայտումը։ Նա ասես սիրահարված է Մասնեի երաժշտությանը։ Արտակարգ մի ներթափանցումով դիրիժորը կատությանը։ Արտակարգ մի ներթափանցումով դիրիժորը կարողացավ հեղինակի հոգու պոռթկումն ու կրակը հաղորդել թե՛ երգիչներին...

«Օպերա Ինտերնելշնըլ», 1989 թ.

...Օ. Դ. Նարկն իր ողջ էությամբ Մոցարտի «Ռեքվիեմ» ստեղծագործության մեջ էր։ Առանց ցուցադրական կտրուկ շարժումների, առանց արտաքին պահվածքների, զուապ ու հավասարակշռված՝ միայն մատների խոսուն շարժումներով նա զեկավարեց այս հանրահայտ գործը։

Հայդնի և Մոցարտի սիմֆոնիաների մատուցումով նվազագավարը հավաստեց, թե որպիսի իմացությամբ է ինքը թափանցում պարտիտուրների խորքը, ինչպես է շոշափում երաժշտության արմատները ու վերհանում նրա հոգի լցնող, բալասանող բոլոր երանգները։

«Վայուակ Մարին», 1989 թ.

...Մոցարտի սիմֆոնիան ունեցավ հստակ ու վճիռ հընչողություն։

Զափազանց զուապ էին նվագավարի շարժումները, կարելի է ասել՝ ժլատ, բայց և շատ գեղասահ։ Սա հազվադեպ էր այդ զուապ ու արտիստիկ միջոցներով Օ. Դ. մի բան է։ Եվ այդ զուապ ու արտիստիկ միջոցներով Օ. Դ.

Նարկը կարողացավ մեզ պարգևել շատ տպավորիչ մի համերգ:

Կատարումը երաժշտական խոսուն լիցքեր ուներ թե դանդաղ տեմպերում, թե ազնվակերտ մենուետում և թե՝ կենսախինդ, ճառագող վերջնանվագում:

Այս համերգը հարգանքի շքեղ տուրք էր Մոցարտին, նրան նվիրված համերգաշրջանի փառավոր մի նախերգանք...

«Քեյփ Թայմս», 1991 թ.

...Սեն Մանսի Յ-րդ սիմֆոնիան հզոր մի կատարում ունեցավ 0. Դ. Նարկի ղեկավարությամբ:

Նրա ժլատ շարժումները պարունակում են մեծագույն էներգետիկա, լիցքեր, որ նվազավարի մատներից անցնում էն նվազախմբին, քաղելով շերմ ու ճշգրիտ կատարում:

Նա դյուրանենով երաժշտություն է կերտում...

«Քեյփ Թայմս», 1991 թ.


Երևան,  
1997թ.




Քեյփ Թայմս, 1989թ.




Օ. Դավիթի կիմոնամարտինություն  
Հայ Ալլուն Միկիլյան



Համարդու Գրումանաց  
Հայ Բարեկամաց կանոնադրություն




Երևան,  
1997թ.



Երևան,  
1997թ.


Լայպցիգ, 1969թ.



Լայպցիգ, 1964թ.



Լայպցիգ, 1965թ.



Լայպցիգ, 1966թ.



Լենինգրադ,  
1959թ.





Լևինգրադ,  
1959թ.



Լայպցիг, 1964թ.



**OGAN DURJAN**  
*geniaal dirigent*

**Magistral**

*Ogan D'Narc à l'opéra - un chef  
- et un être - d'exception*

4. Sinfoniekonzert im Stadttheater  
Ogan Durjan: Der Magier am Pult

Zum erstenmal in der Bundesrepublik:

**„Toscanini des Ostens“ leitet Samstag Symphonie-Konzert**

„Durjan dirigiert eine Sinfonie und hört sie gleich auf dem Pult wieder. Er ist ein Meister der Affekte, Träume, Alle Menschen kann er verzaubern.“  
„Als Meister kann er überzeugen, aber auch beweisen.“

„Bruckner unter Durjan  
Er erinnert an  
'Arthur Nikisch'  
Souveräner Brucknerdirigent

**Triumphaler Erfolg**

„Ogan Durjan ist, entgegen seinem Ruf, ein Dirigent der einen kleinen Geheimfachdinger ist. Ein Maestro wie von Karajan, großartig und professionell, mit zweitlich diszipliniertem Orchester, und von einer allerdings seltsamsten, sakkulären, Gigantomanie.“

Օհան Դուրյան՝ հանճարեղ նվազավախը  
(Եվրոպական մամուլի էջերից)

**Le démon d'Ogan D'Narc :** Ogan Durjan Ogan Durjan: Der Magier am Puit  
la direction d'orchestre bliebt im Ein Gast, der das Orchester "weckte"

Ogan D'Narc, un directeur comme se ne voit pas depuis longtemps

OGAN D'NARC à un concert au Brésil, son deuxième mondialiste

**Der östliche Toscanini im OFR** Gastdirigent begeisterte Schostakowitschs Zehnte  
Morgenländischer Magier mit Tiefgang als erregendes Abenteuer

Ogan D'Narc éprouve die Niederrheinischen Sinfoniker zu höchsten Leistungen an

Dirigent Ogan D'Narc leitet die Sinfoniker OGAN D'NARC Eine strahlende Persönlichkeit

Großartiges geleistet ET LE NOP

**Ein Dirigent von hohem Ruf Ogan Durjan, Ein Meister des Taktstocks**

Ogan Durjan-Narc und Irene Wilhelmi im Philharmonia-Konzert

**Spannendes Symphoniekonzert unter Ogan D'Narc**

André Norrino führt das Imbiss-Orchester - Messingbläser, Trompeten, Trombones

**Ogan Durjan-Narc ou la seconde affaire Rostropovitch**

Eine neue Hand war spürbar

Ogan D'Narc dirigiert "Don Pasquale" in der Staatsoper

Höhepunkte, keine Kraftakte

Ogan D'Narc und sein philharmonisches Ensemble im Konzerthaus

**Die Gelassenheit Le « Philharmonisch Orkest van de B.R.T. » eines Dirigenten**

Ogan D'Narc beim 5. Sinfoniekonzert e: Ogan d'Narc

**Orchestererzieher mit Temperament**

Ogan D'Narc dirigiert die Niederrheinischen Sinfoniker im fünften Sinfoniekonzert

**Der östliche Toscanini im ORF** Gastdirigent begeisterte Schostakowitschs Zehnte

als erregendes Abenteuer

Ogan D'Narc und das Rundfunk-Orchester

Ogan Durjan-Narc dirigierte das erste Theatergemeinde-Konzert der Philarmonia Hungarica

Ogan Durjan-Narc dirigierte das III. Symphoniekonzert der Philarmonia Hungarica



Phänomene,  
1964 p.



Երգուիի Եղբա Մոզերի հետ:  
Ավիմյուն, 1987թ.

Մարիսլավ Ռուստրովի  
և Օհան Գուրյան  
Մարտել 1984թ



Արամ Խաչարյանի հետ  
Սևանի ափին: 1967թ.



Դաշնակահար  
Ալեքսեյ  
Վայսբերգի հետ  
Փարիզ, 1982թ

Չութակահար  
Հենրի Շերինգի  
հետ: Մյունիսեն,  
1981թ



Լայպցիգ,  
1966թ.



Տիկնո՞ց՝ երգուիի  
Ալիս Շահմիրյանի հետ



Դուրյաններին կյուր են Երուսաղեմի  
պատրիարք, ամենապարիվ Տեք Թորգման  
արքապիսկոպոս Մանուկյանը և Կահիրեի  
առաջնորդ գերաշնորհ Տեք Զավեն արքե-  
պիսկոպոս Ջինջիմյանը: Երևան, 1999թ.



Überwältigender Bruckner mit O. Durjan  
 Richtungweisende Interpretation  
 Sprechende Hände  
 Höhepunkt der Konzertsaison  
 „Aida“ unter Ogan Durjan  
 Beethovens „Neunte“ mit Ogan Durjan  
 Beifallsstürme für Durjan  
 Ogan Durjan wiederum geleiert  
 Wiederum  
 faszinierender Durjan

Exemplarische Große Beethoven-Interpretation  
 Bruckner-Deutung 50 Jahre 9. Sinfonie zum Jahreswechsel im Gewandhaus

Überwältigende Bruckner kraftvoll und klar  
 Schostakowitsch Interpretation Leipziger Gewandhausorchester gastierte unter Ogan Durjan  
 Durjan in Berlin Bruckner-Erlebnis durch Ogan Durjan

**OGAN DURJAN** Klangprächtiges  
 geniaal dirigent Te Deum „Lohengrin“ mit Ogan Durjan  
 Ogan Durjan dirigierte 13. Gewandhauskonzert

stürmisch gefeiert Meisterhafte Bruckner-Interpretation  
 Abermals faszinierender Ogan Durjan

Management: Dr. Rudolf RIAF, Plankengasse 7, 1010 WIEN. Tel. 52 33 54. Kabel Raabagent

«Նա հիշեցնում է Արթուր Նիկիշին...»  
 (Խվրապական մամուլի էջերից)



Լայպցիգ, 1964թ.



Վիլմյուս,  
1959թ.



«Գանդիշանգի» ամանորյա շնորհակալական հեռազիրք՝ համարեղ աշխարհին յանկությամբ: 1963 թ.

GEWANDHAUSORCHESTER

LEIPZIG, am 26. September 1963

Herrn  
Kapellmeister Ogan Durjan.

Sehr verehrter lieber Herr Durjan!

Machdem Sie heute Jhre Gastdirigate in den letzten beiden Gewandhauskonzerten mit hervorragendem Erfolge abgeschlossen haben, möchten wir Jhnen im Namen des Gewandhausorchesters, dessen hohe Wertschätzung in künstlerischer und menschlicher Hinsicht Sie gewonnen haben, für Jhre so ausgezeichnete Arbeit unseren innigen Dank sagen.

Es war dem Gewandhausorchester eine besondere Freude, mit Jhnen zu musizieren.

Wir erlauben uns, Jhnen zur freundlichen Erinnerung an diese Konzerte die Taschenpartituren der 5., 6., 7., 8. und 9. Sinfonie von Anton Bruckner zu überreichen.


Mit aufrichtigen Wünschen für eine weiterhin erfolgreiche Laufbahn und ein Wiedersehen im Gewandhaus

begrüßen wir Sie aufs herzlichste!

Die Betriebsgewerkschaftsleitung  
des Gewandhausorchesters.

K - Heinz Weichert

*F. H. W.*




Սպերդովկա,  
1965թ.





«Օհան Դուրյանի անվան ասլրդ» անվանակոչության միջազգային վկայագիրը




«Ֆրանսիայի արվեստի և գրականության ասպետի» կոչման դիսպոնը





Նարեկ որդու և քունիկի հետ:  
Երևան, 1997թ.



Իմ սիրասուն  
կենդանիներն ու  
թռչունները հաճախ  
ինչ ավելի լավ են  
հասկանում...





Շարժ Վարդան Աճմյանի, 1962թ.



Շարժ Յարայանի, 1964թ.



Շարժ. Բրաբիպավա, 1960թ.



Շարժ. Փարիզ, 1949թ.

օչան ԳՈՒՐՅԱՆԸ ՀԱՅ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՌՀԱՅԻՆ  
ԲԵՄԵՐՈՒՄ ՆՎԱԳՍՎԱՐԱԿԱՆ ԻՐ ԾԱՎԱԼՈՒՆ ԳՈՐ-  
ԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՅՐԵԼ Է՝ ՂԵԿԱՎԱՐԵԼՈՎ  
ՀԱՆՈՒՐ ՃԱՆԱԶՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՀԵՏԵՎՅԱԼ ՆՎԱԳԱ-  
ԽՄԲԵՐԸ.

1. Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբ
2. Հայաստանի օպերային պետական սիմֆոնիկ նվագա-  
խումբ
3. Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության սիմֆո-  
նիկ նվագախումբ
4. Մոսկվայի ֆիլհարմոնիկ նվագախումբ
5. Մոսկվայի պետական 1-ին սիմֆոնիկ նվագախումբ
6. Մոսկվայի պետական 2-րդ սիմֆոնիկ նվագախումբ
7. ՍՍՀՄ զինված ուժերի սիմֆոնիկ նվագախումբ
8. Համամիութենական ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբ
9. Լենինգրադի ֆիլհարմոնիկ 1-ին նվագախումբ
10. Լենինգրադի ֆիլհարմոնիկ 2-րդ նվագախումբ
11. Լիտվայի ֆիլհարմոնիկ նվագախումբ
12. Լատվիայի ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբ
13. Էստոնիայի ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբ
14. Բելոռուսիայի ֆիլհարմոնիկ նվագախումբ
15. Կիլովոդսկի ֆիլհարմոնիկ նվագախումբ
16. Վրաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբ
17. Վրաստանի ռադիոհեռուստատեսության սիմֆոնիկ նվա-  
գախումբ
18. Ադրբեյջանի ֆիլհարմոնիկ նվագախումբ
19. Դոնեցկի ֆիլհարմոնիկ նվագախումբ
20. Ուկրաինայի ազգային սիմֆոնիկ նվագախումբ
21. Կիևի Ուկրաինական ֆիլհարմոնիկ նվագախումբ
22. Սվերդլովսկի ֆիլհարմոնիկ նվագախումբ
23. Տաշքենդի ֆիլհարմոնիկ նվագախումբ
24. Վարշավայի ֆիլհարմոնիկ նվագախումբ
25. Կատովիցեի ֆիլհարմոնիկ նվագախումբ
26. Կատովիցեի ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբ
27. Բղգոշի ֆիլհարմոնիկ նվագախումբ

28. Հոգի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 29. Կրակովի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 30. Վրացլավի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 31. Պողնանի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 32. Սոֆիայի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 33. Բուտապեշտի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 34. Բուտապեշտի «Պոստա» սիմֆոնիկուս զենեկարք նվագախումբ  
 35. Պրահայի սիմֆոնիկ նվագախումբ  
 36. Զեխուլովակիայի ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբ  
 37. Բրատիսլավյայի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 38. Բրատիսլավյայի ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբ  
 39. Բրնոյի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 40. Օստրավյայի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 41. Կարլովի Վարիի սիմֆոնիկ նվագախումբ  
 42. Բելգրադի ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբ  
 43. Լյուբլյանայի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 44. Բրաշովի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 45. Արադի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 46. Ռումինիայի կինոյի սիմֆոնիկ նվագախումբ  
 47. Տիմինչչուարայի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 48. Բեռլինի օպերային սիմֆոնիկ նվագախումբ  
 49. Բեռլինի «Կոմիշե» օպերայի սիմֆոնիկ նվագախումբ  
 50. Բեռլինի ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբ  
 51. Լայպցիգի «Գեանդհաուզե» նվագախումբ  
 52. Լայպցիգի ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբ  
 53. Դրեզդենի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 54. Դրեզդենի «Շտատսկապելե» նվագախումբ  
 55. Հալեի սիմֆոնիկ նվագախումբ  
 56. Քեմնիցի սիմֆոնիկ նվագախումբ  
 57. Քոպրուսի սիմֆոնիկ նվագախումբ  
 58. Երուսաղեմի ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբ  
 59. Փարիզի «Կոլոն» նվագախումբ  
 60. Փարիզի «Բագու» նվագախումբ  
 61. Փարիզի «Լա Մուլո» նվագախումբ  
 62. Ֆրանսիայի ռադիոհեռուստատեսության սիմֆոնիկ նվագախումբ

63. Փարիզի «Նասիոնալ իլ դը Ֆրանս» նվագախումբ  
 64. Ֆրանսիայի «Նյուվել օրկեստր ֆիլհարմոնիկ» նվագախումբ  
 65. Մոնտե Կարլոյի ազգային սիմֆոնիկ նվագախումբ  
 66. Նիցայի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 67. Մարսելի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 68. Բորդոյի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 69. Ավինյոնի օպերային սիմֆոնիկ նվագախումբ  
 70. Լիոնի ազգային կոնսերվատորիայի նվագախումբ  
 71. Վիեննայի «Տոնկյունստալեր» նվագախումբ  
 72. Վիեննայի ազգային սիմֆոնիկ նվագախումբ  
 73. Վիեննայի ռադիոսիմֆոնիկ նվագախումբ  
 74. Վիեննայի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 75. Ինսբրուքի սիմֆոնիկ նվագախումբ  
 76. Մյունխենի Բավարյան ռադիոսիմֆոնիկ նվագախումբ  
 77. Համբուրգի ռադիոսիմֆոնիկ նվագախումբ  
 78. Գյուտելուրֆի սիմֆոնիկ նվագախումբ  
 79. Մարլի «Ֆիլհարմոնիկա» Հունգարիկա» նվագախումբ  
 80. Գեսաուի նահանգային սիմֆոնիկ նվագախումբ  
 81. «Ռեկլինգհաուզեն սիմֆոնիկեր» նվագախումբ  
 82. Հերֆորդի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 83. «Մյունխենգլադբախ նիդերուայնիշեն սիմֆոնիկեր» նվագախումբ  
 84. Գորլենդուի Հունոսյան ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 85. «Լյուդվիգսհաաֆեն Գֆալցիշեն ֆիլհարմոնիկ» նվագախումբ  
 86. Շտուդգարդի Վյուրթեմբերգյան նվագախումբ  
 87. Ֆրայբուրգի սիմֆոնիկ նվագախումբ  
 88. Բեռլինի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 89. Հռոմի «Օրկեստրա դե լա Ակադեմիա» նվագախումբ  
 90. Հռոմի «Սանտա Սեսիլիա» նվագախումբ  
 91. Հռոմի ռադիոհեռուստատեսության սիմֆոնիկ նվագախումբ  
 92. Միլանոյի ռադիոհեռուստատեսության սիմֆոնիկ նվագախումբ  
 93. Վերոնայի «Դե Լենտե Լիբրիկա Արենա» նվագախումբ  
 94. Պալերմոյի Սիցիլիական սիմֆոնիկ նվագախումբ

95. Կալյարիի սիմֆոնիկ նվագախումբ  
 96. Ճենովայի օպերային սիմֆոնիկ նվագախումբ  
 97. Բրյուսելի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 98. Բրյուսելի սիմֆոնիկ նվագախումբ  
 99. Բրյուսելի ռադիոյի կամերային նվագախումբ  
 100. Հարլեմի ֆիլհարմոնիկ նվագախումբ  
 101. Լյուքսեմբուրգի ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբ  
 102. Ստամբուլի ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբ  
 103. Նյու Յորքի սիմֆոնիկ նվագախումբ  
 104. Լու Անշելսի սիմֆոնիկ նվագախումբ  
 105. Քեյփթաունի սիմֆոնիկ նվագախումբ  
 106. Յոհաննեսբուրգի ազգային նվագախումբ  
 107. Ֆրայբուրգի ֆիլհարմոնիկ նվագախումբ

#### ՎԵՐՁԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆՆԱՌԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՆ

Օհան Դույցան մեծանուն արվեստագետի կենսապատճենը ու ստեղծագործական սույն դիմանկարն ավարտուն չէ, քանի ժամանակը դեռ իր նոր գույներն ու գծերն ունի հավելելու կտավին, իսկ ես վերջակետ շեմ դնում...

Ես պարզապես գոցում եմ աշխարհ՝ ավելի գունեղ տեսնելու ինձ մշտապես ուղեկցող պատկերը:

Ամենդի քեածում են մարդու միտքն ու հոգին տիեզերական անհնանին առնչող Մեծ երաժշտության ոգելից հնչյունները: Նվագախումբը միաձույլ է՝ իրեւ բազմալար, հնշեղ, նոկա մի գործիք և ենթակա նմու երգող, քրոպացող, բախծող մատների մանրիկ շարժումներին: Թիկունքին՝ հուզմունքից տար կտրած հանդիսականն է՝ հետամուտ բեմի այն կիզակերն, որտեղ Օհան Դույցանը հոգով ու ձեռամբ երաժշտության է կերտում:

Ահա այս պատկերն է, որ սոկորվում է կոպերիս տակ և որք իրեւ նյութեղեն երազ, սրդողածուեն նվիրում եմ հայրենապաշտ հորս անմոռաց ճիշտակին, ում հորդորով փարձքի ուրվանկարել «Խոսող ձեռքեր» կտավս:

**ԲԱՎԱԽԴԱԿԱՆԻՔՅԱՆ**

Դերող և տիրական... այսպիս տեսանք իրեն	3
Նկարագիր	13
Օրը՝ մի տարի... և տարին՝ մի օր	33
Իր ճառին՝ իր խոսքերով	104
Ով ճանաչեց ճշմարտությունը	109
Փաստագրական պատառիկներ Օհան Դուրյանի զեկավարած բազում համերգների ժամին արտասահմանան ժամուում հրապարակ- ված նյութերից	116
Օհան Դուրյանը հայ և համաշխարհային բեմերում նվազավարական իր ծավալուն զործունեաթյունն իրականացրել է՝ զեկավարե- լով հանուր ճանաչում ունեցող հետեւյալ նվազախմբերը	145
Վերջարանի փոխարեն՝ խոստովանության հանգույն	149

**Ուսումնական Մանաւային**

**ԽՈՍԱՉ ԶԵՐՔԵՐ**

**Գեղարվեստ-վավերագրական պատում**

**Рузан Пайдаковна Майтесян**

**ГОВОРЯЩИЕ РУКИ**

**Художественно-документальное повествование**

**На армянском языке**

**Խմբագիր՝ Ա. Զ. Մանաւյան**

**Նկարիչ և գեղ. խմբագիր՝ Գ. Վ. Մարիկյան**

**Տեխ. խմբագիր՝ Ե. Հ. Ճանճապահյան**

**Վերսուուգող սրբագրի՝ Մ. Գ. Ստեփանյան**

**Ստորագրված է տպագրության՝ 25. 08. 99 թ., Զափու՝ 84×108<sup>1/33</sup>: Տառա-  
տիստկ՝ «Դրբի Առվարտական»: Տպագրություն՝ բարձր: 6,55 (+ 12 ներզիր)  
Հրատ. մամ., 7,98 պայմ. տպ. մամ.: Տպագրահակ՝ 2000: Գալովեր՝ 45:  
Գիրք՝ պայմանագրային:**

**Երևանի համալսարանի հրատարակություն, Երևան, Մանկական 1:**

**Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна, 1.**

**«Նարի» հրատարակության տպագրատուն, Երևան-9, Տերյան 89:**

**Типография издательства «Нарис», Ереван-9, ул. Теряна, 89.**